

ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ

ՔՈՒՐԴ ԿԻՆԸ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ՝ ԸՍՏ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՖՈԼԿԼՈՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Առանձնատիպ Պետական պատմական քանդաքանի
«Աշխատությունների» հատոր I-ից

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՏ ԳՍ ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1948

9 (91.57)

Ա-78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԻՆՆ ԵՎԴՍԻ

ՔՈՒՐԳ ԿԻՆԸ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ՝ ԸՍՏ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՖՈՒԿԼՈՐԱՑԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քուրգ ժողովրդի մեջ շատ է զարգացել ժողովրդական բանաստեղծությունը, որի շնորհիվ երկար դարեր պահպանվել են նրա մտավոր և հոգեկան հարստությունները և մշակվել նրա ավանդական սովորությունները:

Քրդական ֆոլկլորի մասին ժամանակին դրական կարծիք են հայտնել հայ նոր գրականության նախահայր Խ. Աբովյանը, պրոֆ. Եղիազարյանը, ակադեմիկոսներ Ն. Մառը, Հ. Օրբելին, Գ. Ղափանցյանը:


93

Քրդական ֆոլկլորը, լինելով ժողովրդի ստեղծագործություն, հանդիսանում է նրա կյանքի, կենցաղի, ապրումների, դասակարգային պայքարի և մտքի զարգացման աստիճանի արտացոլման գլխավոր միջոցներից մեկը: Եվ իսկապես քուրգ ժողովրդի պատմությունը, կյանքն ու կենցաղն ուսումնասիրողի համար իբրև հիմնական աղբյուր կարող են ծառայել ազգագրությունը և ժողովրդի բանավոր ստեղծագործությունը:

Քրդական աշխատանքային երգերում հանդես են գալիս հովիվը, նախրապանը, տանտիկինը և գյուղատնտեսությունում քրդավող աշխատավորներն իրենց անասուններով և գյուղատնտեսական գործիքներով:

Կան հովիվերգության և բնությունից վերաբերյալ շատ հրգեր. հարուստ են նաև սիրային երգերը, որոնց մեջ մեծ մասամբ արտացոլված են քրդուհու կյանքի և ապրումների նկարագիրը, ճնշված վիճակը, վիշտը, թախիծն ու ուրախությունը: Այդ երգերը, որոնցից շատերն օգտագործել եմ աշխատությունս համար, հրապուրիչ են և սրտաճմլիկ իրենց գեղեցիկ նկարագրությամբ և համեմատություններով:

Ռազմական երգերի մեջ կտեսնենք քուրգ քաջին և դյու-



ցաղնունուն, որոնք պայքարում են ամեն տեսակի անարդարությունների և հարստահարիչների դեմ: Այդ երգերը կրակոտ են, խրոխտ, նրանք պատերազմում հնչում են քրդական մերկացրած թրերի շաչյունի հետ միասին և զրգուռ մարտիկներին պատերազմի դաշտում լավ կռվելու և հաղթելու համար:

Բաղձածիվ են հարսանիքի պարերգները, որոնք կոչվում են «Բլամեզ գովանդա» (պարերգեր), հերոսական, ծխական և օրորոցի երգերը, պատկերավոր են համեմատություններն ու ուրիշը սաղական:

Քրդական ֆոլկլորի հեղինակները տղամարդիկ և կանայք են, այդ թվում աշուղներ և որոշ թվով նաև հայեր: Ներկայումս Ալագյաղի շրջանի Գյոզալդարա գյուղի բնակիչ Արմենակ Հակոբյանը հեղինակ է բաղձածիվ քրդերեն երգերի, որին սիրում է ամբողջ շրջանի քուրդ բնակչությունը:

Աշուղական երգերը գրի չեն առնվել, այլ ժողովրդական մյուս ստեղծագործությունների պես բերնե-բերան յուրացվել և հնագնեստե մշակվել են ժողովրդի կողմից ու երգվել որպես ժողովրդի ստեղծագործություն:

Դանգբեժների (երգիչ-կատարող) ու աշուղների երաժշտական գործիքներն են, որոնց վրա նրանք երգել են դարեր շարունակ՝ սազը, թամբուրը (սազի մի այլ տեսակ), բլուրը կամ բլուլ (սրինգ), դհուլ-դուլնան, մայան (դաթուկ, դուդուկ), թուլումը (պարկատիկ), եղեգից պատրաստած երկար ֆիդան և այլն:

Իմ հավաքած նյութերը լսել եմ գլխավորապես մեր Միության սահմաններում ապրող քուրդ հայրենակիցներին բերանից: Այդ նյութերն ինձ համար հարազատ ստեղծագործություններ են:

Այժմ մեր երկրում քրդական ֆոլկլորը չտեսնված զարգացում է ապրում: Նոր՝ սովետական ֆոլկլորում գյուցաղնական պատկերացումով հանդես են գալիս մեր սիրելի առաջնորդներ Լենինը և Ստալինը, ինչպես նաև Ստալինի մերձավոր զինակիցներ Մոլոտովը, Բերիան և Միկոյանը: Մեծ տեղ են զբաղում սոցիալիստական շինարարության և հաղթական Սովետական Բանակին վերաբերող երգերը:

Հեղինակ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Քուրդ կնոջ վիճակը պատկերացնելու համար անհրաժեշտ է մի համառոտ ակնարկով ներկայացնել հասարակական այն միջավայրը, կենցաղային-քաղաքական այն պայմանները, որոնց մեջ դարեր շարունակ նա ապրել է ու գործել Հոկտեմբերյան Ռեուլուցիայից առաջ:

Քրդերի ծագման և նրանց սկզբնական շրջանի պատմությունը վերաբերյալ մինչև այժմ շատ քիչ ճշգրիտ տեղեկություններ կան: Ինչպես խորին հնություն ունեցող բոլոր ժողովուրդների, այնպես էլ քուրդ ժողովրդի ծագման խնդիրը կապված է զանազան դիցաբանական առասպելների և ավանդությունների հետ:

Քրդերը Առաջավոր Ասիայի հին ժողովուրդներից են, նըրանք առաջ ապրել են Հայաստանի հարավային կողմում՝ կորզվաց լեռներում և տարածված են եղել դեպի հյուսիս՝ մինչև արևելյան Տիգրիսի ակունքները, դեպի արևմուտք՝ մինչև միացյալ Տիգրիսը, դեպի արևելք՝ Չագրոսի շրթան, իսկ վերջին դարերում հնագնեստե տարածվեցին Հայկական լեռնաշխարհում՝ Տավրոսից սկսած մինչև Դերսիմ:

Այժմ քրդերն ապրում են Իրանում, Թուրքիայում, Իրաքում, Անդրկովկասյան ՍՍՌ-ում և Կասպից ծովափնում և այլն: Սովետական Միության մեջ քրդերը մեծ մասամբ ապրում են Հայկական ՍՍՌ-ում և փոքր թվով Ադրբեջանի և Վրացական ՍՍՌ-ներում: Քրդեր կան նաև Միջին Ասիայի սովետական ռեսպուբլիկաներում:

Քրդերի մեծամասնությունը հետևում է մահմեդական կրոնին:

Քրդերը գլխավորապես «սյունի» և «շաֆի» աղանդին են հետևում:

Քրդերի մի մասն էլ եզդիներ են, որոնք պահպանում են զրադաշտական կրոնի ազդեցությունը, իրենց անվանում են «Մլաթե շամա» (արևի ժողովուրդ կամ արևորդիք):

Եզդիները մեջ սովորություն կա առավոտ վեր կենալ և հենց արևի ծագման ժամանակ չոքել, երկրպագել ու դիմավորել արևի ծագումը: Մի ավանդություն հիման վրա իրենց ծագման

մասին ասում են, թե իրենք սերվել են «Մալաքե Տաուզից»¹ կամ «Մելեք Թամուզից», որի կուլտի մասին իր «Արա Գեղեցիկի պաշտամունքը» գրվածքում բավականին կանգ է առել Հայկական ՍՍԻ ԳԱ իսկական անդամ Գրիգոր Ղափանցյանը և եկել այն եզրակացության, որ այժմյան քուրդ եզդիների Մալաքե Տաուզի մեջ կարելի է տեսնել մեռնող և հարուժյուն առնող աստծու՝ Թամուզի անվան հետքերը:²

Պարսիկների մեջ եզդի քրդերի ծագման ու սատանային պաշտելու վերաբերյալ հետևյալ տոասպելն է տարածված: Իբր թե Աժդահակը ամեն օր երկու մարդու ուղեղ էր ուտում, որպեսզի իր ուտերի վրայի ուտուցքը վերանա և յուրաքանչյուր օրվա համար նշանակված զոհերից մեկին նա ազատում էր, միայն այն պայմանով, որ այդ ազատված մարդն ու նրա սերունդները հետագայում երկրպագու դառնան իրեն: Հետագայում այդ ազատված զոհերը փախչում են Քրդստան և այս եղանակով ծագում են եզդիները և սատանային երկրպագելու պաշտամունքը:³

Քրդերը եղել են քաջ և ուղիղ սրբեր: Հենց այդ է առիթ սվել ն. Մառն ասելու, որ «քուրդ» բառը պարսկերեն «կորդ» բառից է, որ նշանակում է զորեղ, ուժեղ, քաջ:

Քսենոֆոնի Անաբազիսի մեջ հիշատակվող մարդերին պրոֆեսոր Մարկվարտը և ակադ. Մանանդյանը համարում են քրդերի նախնիները: 10-րդ դարի արաբ մատենագիր Մասուդի ասելով, քրդերի նախահայր Քուրդը՝ Մարդի որդին էր, իսկ հայ մատենագրության մեջ քրդերը կոչվել են նաև «ազգն մարաց», որի հիման վրա կա նաև այն ենթադրությունը, որ մարերը կամ ըստ օտար ազգյուրների մեղացիք քրդերի նախնիներն են:⁴

Չամչյանը վկայում է, որ ավելի ուշ ժամանակներում քրդերի հետ խառնված են միջին ասիական տարրեր: Ըստ Չամչյանի, ճերը արաբացիների իշխանությունը շփոթության մեջ էր ընկնում և զանազան երկրներում պլուխ են բարձրացնում առանձին ամիրաներ, Կասպից ծովի այն կողմում զանվող սկյու-



Նկ. 11. Քրդուհի՝ Թալինի շրջանի Գյալիս գյուղից

¹ Մալաքե Տաուզ—եզդիների բարի հրեշտակն է և միևնույն ժամանակ աստվածը. բառացի նշանակում է սիրամարգ հրեշտակ:

² Իր. Ղափանցյան—Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 46:

³ H. Я. Марр—«Еще о слове челеби», С.-Петербург, 1911, էջ 23:

⁴ Ակադ. Ն. Մանանդյան.—Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1944, էջ 70:

Թացինները, գալով Իրան և Մարաց երկիրը՝ տիրում են շատ վայրերի, ընդունում են նրանց կրոնը և կրոնով ու լեզվով միանում են քրդերի հետ: Նրանցից շատերը միաբանելով մարաց իշխանների հետ՝ հարձակվում են Հայաստանի վրա Կորզվաց և Մոկաց սահմաններում, տիրում են այն երկրներին և հաստատվելով մնում են այնտեղ՝ կոչվում են քուրդ: Նրանցից ոմանք էլ շարժվում են դեպի Հայոց և Ասորաց Միջագետք և այնտեղ բնակվում: Նրանց հետ զանազան ժամանակներում միացել են քրիստոնյաներ՝ գառնալով նրանց կրոնին»:

Քրդերի մասին պատահական տեղեկություններ են հաղորդում միայն նրա հարևանություն մեջ ապրող, կամ նրա հետ շփում ունեցող ժողովուրդները:

Եթե կորդուխներին համարենք քրդերի նախահայր, այդ դեպքում ամենահին գրավոր տեղեկությունները քրդերի և նրանց էլերի (ցեղերի) մասին հաղորդում է հույն պատմագիր Քսենոֆոնն իր «Նահանջ Բյուրուշն» (Մնարապիս) գրքում:

Նրա վկայությամբ կորդուխների երկիրը գտնվում էր Սուզից (Շոշ) և Էկբատանից դեպի հյուսիս, արևմտյան կողմից հանում էր մինչև միացյալ Տիգրիս գետին. կորդուխների երկրի ու Հայաստանի սահմանը կազմում էր Կենտրիտես գետը, իսկ Տիգրիսի ստորին հոսանքով նրանց երկիրն անջատվում էր Հայաստանից:

Ըստ Քսենոֆոնի կորզվաց երկիրը լեռնոտ է և անանցանելի: Թշնամու հարձակման ժամանակ կորդուխները փախչում են լեռնանցքները ու կիրճերը և ուժեղ կռիվ մղում թշնամու դեմ: Նրանք զինված են լինում աղեղով և պարսատիկով, հուշակավոր նետաձիգներ են և ուղմատենչ են, չեն ճանաչում պարսից իշխանությունը և թշնամական հարաբերությունների մեջ են նրանց հետ: Կորդուխների գյուղերը շինված են լեռնահովիտներում և կիրճերում: Հարուստ են կենսամթերքներով և ունեն պղնձե շատ ամանեղեն: Գյուղերում կան գեղեցկաշեն տներ:

Հույն զորաբանակը մեծ կորուստներ է կրել կորդուխների երկրում՝ ենթարկվելով անդադար հարձակումների և բավական թվով սպանվածներ է տվել: Բռնելով լեռների գագաթները, կորդուխները քարերի տարափ են թափել հույների վրա և միշտ սրանց սարսափի մեջ պահել:

Պետություն կազմելու գաղափարը քրդերի մոտ թույլ է եղել Իրրե քաջ ու ռազմատենչ ժողովուրդը, նրանք շատ անգամ հանդիս են եկել իբրև վարձու զինվոր ուրիշ պետությունների շահերին ծառայելու:

Քրդական տոհմերից ոմանք ինքնուրույն իշխանություններ են հիմնել Առաջավոր Ասիայում, որոնցից մի քանիսն աչքի ընկնող պատմական դեր են կատարել. այսպես օրինակ, 10-րդ դարում Դիարբեքիրում քրդական ծագում ունեցող Մերվանի որդի Արու-Ալի-Հասանի ձեռքով հիմնվել է մերվանյան իշխանությունը, որը շարունակվեց մինչև 11-րդ դարի վերջը: 10—11-րդ դարերում շեղատյան քրդական իշխանությունն է հիմնվել Գանձակում, որը որոշ ժամանակ էլ տիրացավ Անիին ու Դվինին:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ 11—13-րդ դարերում Հայաստանում, Լոռու մի մասում իշխող Ջաքարյան նշանավոր տոհմը նույնպես քրդական ծագում է ունեցել: Սուլթան Սալահդինը, որը ծագում էր Դվինի քրդերից, հիմնեց արաբական Էլբեյան հարստությունը: 18-րդ դարի երկրորդ կեսին Քերիմ խան Ջինզը, որը քրդական տոհմից էր, Պարսկաստանում հիմնեց նոր թագավորություն, որը տևեց 40 տարի: Սակայն քրդերն իրենց բնիկ երկրում չկարողացան իրենց ինքնուրույն իշխանությունը հիմնել, և մինչև վերջին դարերն էլ պահպանեցին իրենց անջատ ցեղային կազմակերպությունները, որոնք հաճախակի իրար դեմ գտնվում էին մշտական ընդհարման մեջ,

Վերջին դարերի ընթացքում տեղի ունեցավ քրդական ցեղերի ցրվելն իրենց բուն երկրից: Նրանք ցրվեցին դեպի հյուսիս՝ Հայկական լեռնաշխարհի արտաավայրերը, սկզբում միայն ամռան ամիսներին էին գնում այնտեղ, իսկ հետո, երբ այդ վայրերը նրանց դուր էր գալիս, այլևս չէին վերադառնում իրենց նախկին տեղերը, այլ այնտեղ էին շարունակում մնալ նաև ձմեռը: Այսպիսով ընդարձակվում էին քրդական տարրի գրաված տարածությունների սահմանները:

Ներկայումս զանազան երկրներում գտնվող բոլոր քրդերի թիվը հաշվում են մոտավորապես 9 միլիոն:²

Անցյալում քուրդ ժողովուրդը կեղեքվել է և այժմ էլ ՍՍՌՄ-ի սահմաններից դուրս կեղեքվում է տիրող պետությունների ձեռքում:

¹ H. Я. Март—«Еще о слове челеди», СП, 1911, էջ 26:

² Տես «Սովետական Հայաստան», 22 հոկտ. 1947 թ.:

¹ Չամչյան—«Պատմություն հայոց», Հ. Բ. Գ., Վենետիկ, 1785 թ., էջ 831:

Բացի օտար գերիշխողներից, քուրդ սոսյա ժողովուրդը ճնշվել, շահագործվել է իր կալվածատեր ցեղապետների, աղաների, բեգերի և այլ տեսակի շահագործողների կողմից: Մինչև այժմ էլ արտասահմանում՝ եթե քուրդ աղան հյուր է գնում որևէ կուրմանջի տուն, վերջինս իր բարոյական, հասարակական պարտականությունն է համարում ամեն կերպ լավ հյուրասիրել նրան, պատիվ և նվերներ մատուցանել: Ցարական Ռուսաստանում և Թուրքիայում քուրդ ցեղապետները և աղաները սերտ կապ էին հաստատում տեղական պաշտոնյաների հետ, վայելում էին նրանց առանձին հովանավորությունը և նրանց հետ միասին ավելի ևս ուժեղ կերպով կեղեքում էին քուրդ աշխատավորությունը:

Քրդական Փոլկորը բավական հարուստ նյութ է բովանդակում քուրդ ժողովրդի Թուրքիայի պետական պաշտոնյաների և զինվորների կողմից կրած տառապանքների վերաբերյալ.

«Գուլե» երգում ասված է.

Գուլե, այսպես չի լինի, չի լինի, չի լինի,
 Գուլե, զինվորներն են լցվել գոռուղը,
 Հապա մեր հալը մնաց կլինի:¹

Սակայն այս կեղեքումներն ու ճնշումներն ավելի ևս առիթ էին տալիս քուրդ ժողովրդին և քրդուհուն ըմբոստանալու իրենց շահագործողների դեմ և ձգտելու ազատություն:

ՍՍՌՄ-ից դուրս գտնվող և ավելի մեծ թիվ կազմող քրդերն այժմ դեռ շարունակում են գլխավորապես քոչվորական կյանք վարել առանձին ցեղերով: Քրդական ցեղերի թիվը բավական շատ է. այսպես օրինակ, հայտնի են Զիլան, Մուքրի, Ագամա, Թաքուրիա, Հասանիա, Հայդարա, Զալալիա, Շեխանիա, Մլանցիք, Շատվիա, Ռոժկա, Մամկա, Հարթոշա, Շարկա, Հակարիա, Պիրան-Ալի, Շիրվանլիա, Սիդկա, Բրուկա, Զադա, Քալադոշա, Ռամոշա, Բայանդուրա, Գուրանիա, Բեսկա, Ուտիա և այլն: Սրանք էլ իրենց հերթին արյունակցական ավելի մոտ կապերով բաժանվում էին ավելի փոքր ցեղերի, որոնք ղեկավարվում էին իրենց ժառանգական ցեղապետների կողմից:

Թեպետ քրդերի մի մասը Թուրքիայի և Իրանի հպատակ էին համարվում, բայց քուրդ ժողովրդի ներքին իշխանությունը մեծ մասամբ գտնվում էր քուրդ ցեղապետների ձեռքում:

¹ Ինչպես այս, այնպես էլ ստորև մեջ բերված երգերը թարգմանել ենք բառացիորեն, առանց տաղաչափական օրենքներին հետևելու:

Սուրաքանչյուր ցեղ իր ցեղապետն ունի: Ցեղապետն ինքնիշխան կառավարիչ էր և դատավոր: Նրան ճանաչում էր պետությունը: Սեղապետներն էին հավաքված հարկը վճարում կառավարություն պաշտոնյաներին, այնուհետև ժողովրդի ներքին գործերի կարգադրությունը, դատավարությունը իրեն աղային էր վերապահվում: Սուրաքանչյուր աղա կամ ցեղապետ ինքն էր որոշում իր ցեղից գանձվող հարկի քանակը և վճարում պետությանը նրա հասանելիք մասը, իսկ մնացածը ինքն աղան էր յուրացնում:

Սարը բարձրանալու ժամանակ ելլե՛լ մարդիկ պարտավոր էին աղայի վրանը և նրա մյուս իրերը տանել իրենց հետ առանց վարձատրություն, նրա անասունները պահպանել բոլոր տեսակի շարիքներից և պաշտպանել էլբաշու (ցեղապետի) կյանքը թշնամիներից, իսկ էլբաշու հյուր գնացած ժամանակ ըստ սովորություն ջահել կանայք պարտավոր էին նրան լավ խնամել, որ նա հանկարծ չհիվանդանա:

Բացի այդ, ամուսնություն ժամանակ փեսան կամ նրա հայրը և մոտիկ բարեկամները պարտավոր էին խալաթ (ընծա) տանել աղային, անասուն (ձի, ոչխար), լավ տեսակի զենք կամ նրա կնոջ համար ոսկեդեմ, արծաթեղեն, դարդեր և այլն:

Ցեղի մարդիկ պարտավոր էին էլբաշու հրամանները կատարել: էլբաշին անիմաստ էր համարում էլի բոլոր գործերով զբաղվելը, դրա համար ցեղի միջի «մանր-մունք» գործերը նա հանձնում էր գյուղի կամ էլի ոխապուն: Ռիալիմ պարտավոր էր էլբաշու ղեկավարությունում վճել այն բոլոր խնդիրները, որոնք հանձնարարվում էին նրան. օր. պողոթյան, միմյանց ձեռնելու և կնոջ անպատվելու դեպքերը, և այլն:

Ամենադժվարին խնդիրը, որ երբեմն հնարավոր չէր լինում լուծել, քրդուհու առևանգումը կամ փախուստն էր: Այս դեպքում ոխապին ցեղապետի հետ միասին վերոհիշյալ խնդիրը ձգտում էր խաղաղ ճանապարհով լուծել, որի հետևանքով կարող էր առաջ գալ վրեժառություն երկու ցեղերի, կամ նույն ցեղի դանազան մարդկանց միջև:

Ցեղապետն ամեն տեսակի պատժի միջոցներ գործադրելու իրավունք ուներ, բացի գլխատումից և աջուրելուց. այդ իրավունքները պատկանում էր կառավարության պետական օրգաններին:

Որքան էր լինում էլբաշու որոշած պատիժը: Նրբեմն մարդիկ ըմբոստանում և չէին կատարում նրա սահմանած վճիռը. այս-

պիտի ըմբոստացման հեռանկարով նրանք հեռացվում էին էլից։
 Սովետական Միությունից դուրս գտնվող քրդերը մինչև այժմ էլ շարունակում են ապրել սովորույթի իրավունքով։ Նրանք չունեն գրավոր որևէ օրենսդիրք և դեկավարվում են միմիայն սովորութենաներով։

Էլբաշու պատիվը բարձր պահելու համար ցեղը պետք է պատրաստ լիներ նրա պատվերը կատարելու, կովի ժամանակ պետք է միահամուռ ուժերով դուրս գար հակառակորդի դեմ։ Եթե ցեղի անդամներից մի կին առևանգվում էր մյուս ցեղի տղամարդու կողմից, ցեղը պետք է կովի՝ փախած կնոջը վերագործնելու կամ նրա փոխարեն մի այլ կնոջ բերելու համար, որպեսզի վրեժը լուծված համարվեր և վերջնապես երկու ցեղերի մեջ եղած վեճը Այստեղ բոլորովին հաշվի չէր առնվում քըրզուհու ցանկությունը, թե նա որ տղամարդուն է սիրում, ում հետ է ուղում ամուսնանալ։

Օտարների հետ կարևոր բանակցություններ վարելու պարտականությունն ընկնում էր ցեղապետի վրա։ Ցեղապետն ամեն օր ընդունում էր իր ցեղի նշանավոր մարդկանց, որոնց հետ խոսում էր օրվա անց ու դարձի մասին, ծրագրեր կազմում կռիվներին, վեճերին ընթացք տալու, նոր արտավայրեր և հողեր ձեռք բերելու համար։ Ցեղական կռիվների ժամանակ գլխավորապես տուժում էին նստակյաց աշխատավոր քրդերը, որոնք այսպես թե այնպես մի կտոր հող ունեին և մշակելով այն, քոչվորական կյանքից կտրվում էին։ Եթե ցեղերից մեկն ուղում էր հակառակորդ ցեղի ձեռքից խլել արտավայրերը կամ մշակելու հողերը, զարտուղի ճանապարհներով կռիվ էր հայտարարում հակառակորդ ցեղի դեմ։ Կովի հետևանքով վերոհիշյալ ցեղը կամ հաղթելով տիրում էր ուրիշ հողերին կամ հաղթվելով մեծամեծ զրկանքների էր ենթարկում թե քոչվոր և թե նստակյաց քուրդ բնակչությանը։

Միջցեղային կովի ժամանակ թույլ կողմը շատ անգամ ստիպված էր լինում թողնել իր բնակավայրը և թաքնվել մոտիկ լեռների անմատչելի կիրճերում ու ժամանակավորապես պարսպարվել այնտեղ։

Կռիվը երկար տևելու դեպքում, ժողովուրդն օրեր շարունակ մնում էր առանց կենսական անհրաժեշտ պաշարի։ Նրանց անասուններն անտեր մնալով կողոպտվում էին հակառակորդի կողմից։ Դաշտում հունձը մնում էր անխնամ, չորանում և ոչըն-

չանում էր, որից հետո վրա էին հասնում նոր թշնամիները՝ սովր, հիվանդությունը, իրենց հետ տանելով բազմաթիվ գոհեր։

Այդ ինքնասպան կռիվների ժամանակ ժողովուրդի դուրսյունը վատթարանում էր, նա չգիտեր՝ արդյոք վաղը, մյուս օրը կարճ է հանդիսատ մնալ, որովհետև թշնամությունը երկու հարևան ցեղերի մեջ զեռ գոյություն ունեի և կռիվը կարող էր շարունակվել, իսկ ինքը՝ ժողովուրդը, ապրելու միջոցներ չունեի։

Միջցեղային այդ կռիվներն արտացոլումն են գտել քրդական բանահյուսության մեջ։ Ահա այդ երգերից մեկը, որտեղ քրդուհին մեծ վեճա է ապրում Իրանի «ղաշախ» ցեղի մարդկանց կողմից սպանված իր որդի Ջնդիի համար.

«Ջնդի լաո, դուրս է եկել Իրանի զաշախների զարբը (ցեղը),
 Իրիկվանից բռնել են քարքարոտ վայրը վանի կողմից,
 Թող քանզվի Իրանի զաշաղ ցեղի պառավ Նաննի որդու տունը,
 Քար ու քանդ է արել մեր օդան, տղամարդկանց դիվանը,

Իմ որդի Ջնդիի բոյը չինարի ծառ էր,
 Կանաչել էր Միլա աշխարհի աղբյուրի վրա,
 Մի գնդակով խփել է, Ջնդուս սպանել է,
 Արյան կաթիլները թափվել են ասպանդակի վրա»¹

Կովելիս քրդի համար ամոթ էր համարվում կովի վայրից փախչել և կամ վախենալով խույս տալ նրանից, նա պետք է լիներ արև և մահվան գնով աշխատեր հակառակորդին հաղթել։ Ռազմական երգերի մեջ քուրդ ժողովուրդը կամ գովաբանում է մեկի քաջագործությունները, կամ անարգանքի սյուլնին գամում մյուսի վախկոտությունը և պարսավում նրա թուլամորթությունը։ «Ալիո լաո» երգում ժողովուրդը խոսեց և գովերգում իր հերոս Ալիոյին՝

«Դատուկում քարերի մեջ մի կռիվ է պատահել,
 Կեցցե Ալըկ Մամուկի տունը,
 Նա կտրել է այս թշնամիների արմատը։
 Մեր Ալըկը հուժկու է, մեր Ալըկը ծուռ է,²

¹ Ասաց ծերունի աշուղ Ս. Չոլոն, Արագյազի շրջանի Ալաղյազ գյուղի բնակիչ (այժմ մահացած), գրի ենք առել 1943 թվին Արագածի լանջերին։
² «Ծուռ»-ը գործածվել է խիզախ, քաջ իմաստով։

Իր թուրը չորս կողմ պատեցնում է,
 Նա խփում է, տղամարդկանց ջարդում,
 Իր բարեկամների ունեցվածքն է վերադարձնում:¹

Այստեղ Ալըկը հանգես է գալիս որպես ժողովրդական հե-
 րոս:

Մի այլ երգում քուրդ երիտասարդը կովի է հրավիրում իր
 քեռուն՝

«Ալուն երեք անգամ ասաց (կանչեց),
 ասաց.— Խալո, դու իմ հայրիկ լինես,
 Կավ եղիր, լավ աշխատիր,
 Տեսնենք՝ մեղանից ո՞րն է դառը, որը՝ խոյ:
 Դեհ քշիր, եղբայր, հա քշիր.
 Ինչլիս և Մհո բեզ թշնամի են, քշիր»:²

Պատերազմական գործողություններին մեծ մասամբ մաս-
 նակցում էին քուրդ երիտասարդները, իսկ երիտասարդներին
 պատրաստելու, նրանց մեջ քաջություն և պատերազմական
 տենչանք ներշնչելու պարտականությունը ընկնում էր քրդուհու-
 վրա:

Կովի դաշտում կովոզներից մեկը եթե թաքնվեր թշնա-
 մուց կամ ըստրովին հրաժարվեր կովելուց, այն ժամանակ աղ-
 ջիկներն ու կանայք հորինում էին նրա հասցեին ծաղրական
 երգեր, որոնք բերնե բերան անցնելով շուտով տարածվում էին
 ժողովրդի մեջ:

Պրոֆ. Ս. Ա. Եղիազարյանն իր „Курды Эриванской гу-
 берний“ գրքում, Երևանի շրջանում ապրող քրդերի մասին խո-
 սելիս գրում է, որ Երևանի շրջանում քրդերն ապրում են իրենց
 ինքնուրույն տոնմատիրական կենցաղով և ցեղապետներով: Նա
 թվում է քրդական ցեղերի անունները, մեջ է բերում ցեղի
 մարդկանց քանակը և զբաղմունքը:³

Նա հայտնում է, որ Արաքսի ափին ապրում էին «Բրու-
 կա», «Ջալալիա» և «Մլանա» քրդական գլխավոր ցեղերը, որոնք

¹ Պատեց աշուղ Չուրն, գրի է առնվել մեր կողմից 1943 թվին:
² Հաջիե Ջնդի—Վառուբուրակե Սլեմանը Սլիվի, քրդական ժող. էպոս,
 Արմֆան, Երևան, 1941 թ., էջ 8:
³ Записки Кавказского отдела русского общ., книга XIII, Тифлис,
 1891, էջ 13:

դեռ նահապետական ինքնուրույն կյանք էին վարում և հաճախ
 հարձակվում միմյանց վրա:

Բաֆֆին քրդերի ցեղային նահապետական կյանքի ու կեն-
 ցաղի մասին խոսելիս՝ գրում է. «Նախնական ժողովուրդներից,
 որոնք մնացել են արևելքում, չկա մեկը, որ քրդերի նման պահ-
 պանած լինի կենցաղավարությամբ այն ձևերը, որով ապրում էին
 հովիվներն իրենց նահապետական դարերում: Եվ արևելքում չկա
 մի ժողովուրդ, որ քրդերի նման բաժանված լինի այնքան բազ-
 մաթիվ ցեղերի: ... Ամեն մի ցեղ առանձնացված է յուր մեջ,
 ապրում է յուր նեղ, սահմանափակ կյանքով»:¹

Քրդերի ներքին կյանքի մասին որոշ պաղափար կազմելու
 համար, անհրաժեշտ է այստեղ հիշատակել նաև կենցաղային մի
 քանի գծեր:

Վաչկատուն քրդերն ամառը սարեր էին բարձրանում, ուր
 նրանք ապրում էին օբաներում մինչև ուշ աշուն:

Օրայի մարդիկ ապրում էին ինքնուրույն կենցաղով. Արա-
 դածի պես լեռան ստորոտներում երբեմն լսվում է դհուլ-զուռնա-
 յի քաղցրահնչյուն ձայնը: Քրդերը երբեմն ճուխ խնջույքներ և
 հասարակական հանդեսներ են կազմակերպում:

Օրայում, գյուղական տանը, կանանց գլխավոր պարտակա-
 նություններից մեկն էր համարվում վրանի օջախը վառ պա-
 հելը:

Օջախը քրդերի համար սուրբ է համարվում, դրա համար
 էլ քրդուհին նրան պահում է սրբությամբ: Կրակի մեջ թքելը
 կամ նրան հայհոյելը մեղք է համարվում, առհասարակ կրակն
 անպատվելը մեծ վիշտ է պատճառում քրդուհուն: Նա թույլ չի
 տալիս, որ հարևաններն իր օջախից կրակ տանեն, որովհետև
 այդ դեպքում քրդերի կարծիքով նույն օրայի կամ տան հոր-
 թների աշքերը կկուրանան, իսկ ոչխարներն ու կովերը կաթ-
 չեն տա:

Ամենալավ քրդուհին նա էր համարվում, ով առանց ամա-
 չելու մերժում էր հարևաններին կրակ տալ, մանավանդ անա-
 սունների ծնի ժամանակ:

Օբաներում տղամարդիկ մեծ մասամբ զբաղվում էին
 անասնապահությամբ և երբեմն էլ որսորդությամբ, իսկ կանայք

¹ Բաֆֆի—Տաճկահայք, 1895 թ., էջ 49:
 801—15

տկերով յուզ. պանիր, տամսա¹ և այլ մթերքներ էին պատ-
րաստում:

Քոչվորությունն այնքան էր ամբայցած քրդերի մեջ, որ
կյանքի այդ եղանակը դարեր շարունակ նրանց համար սովոր-
ություն էր դարձել և նրանք չէին կարողացել վերջ տալ այդ
կենցաղին: Բայց ամենահիմնականն այն էր, որ տիրապետող
պետություններն անցյալում իրենց հաստատած կարգերով պայ-
մաններ չեն ստեղծել քրդերի համար, որպեսզի նրանք կարողա-
նային քոչվորական ապրելակերպից ձեռք քաշել: օրինակ, եղել
են ցեղեր, որոնք հիմնական բնակավայր և մշակելու հող չեն
ունեցել, դրա համար էլ նրանք միշտ մի տեղից քոչել են մի
այլ տեղ: Երբեմն թափառող քրդերը մի պետության հողը թող-
ղել, անցել են մյուսի հողը: Այսպիսով մի տեղից մյուս տեղը
քոչելը քուրդ քոչվորի համար դարձել էր կյանքի սովորական
երևույթ:

Քրդերը գլխավորապես ղրազվում են խաշնարածությամբ,
երկրագործությամբ և փոքր չափով տնայնագործությամբ: Պա-
հում են ոչխար, ձի, այծ, կով, եզ, գոմեշ և այլն: Ամենից շատ
նրանք սերում են ոչխարը: «Պաղ-Ռաղա» (ոչխարը պտուղ է)
ասում է քրդական առածը: Աշնանը քուրդը 15—20 ոչխար էր
ծախում և ստացած զրամով ապահովում իր ընտանիքի ձմեռվա
ամբողջ պաշարը: Բացի այդ, ոչխարը քրդերի համար ամենալավ
մսացուն է. ամառ թե ձմեռ քրդի տան ամենաընտիր ուտելի-
քը համարվում է խորոված միսը և սոխը, դրա համար էլ հայ-
կական առածը քրդի մասին ասում է «Ախ չուտեմ, շաքա՞ր
ուտեմ»:

Քրդերի վիճակը հիմնավորապես փոփոխության ենթարկ-
վեց Հայաստանում և մյուս ռեսպուբլիկաներում սովետական
կարգերը հաստատվելուց հետո:

Քրդերի համար ստեղծվեց գիր և մայրենի լեզվով գրակա-
նություն, որ մինչ այդ չունեին, հիմնվեցին տարրական և միջ-
նակարգ դպրոցներ: Հայաստանի Սովետական գրողների միու-
թյան մեջ ստեղծվեց քրդական սեկցիա, հիմնվեց աշխարհիս մեջ

¹ Sulfurus — բառացի նշանակում է սեր և մածուկ: Ամառը ոչխարի
մածուկը քամում են, նրա մեջ լցնում համապատասխան չափով սեր և կա-
բազ, հետո լցնում տկերի մեջ, բերանը լավ կապում և պահում ձմեռը հացի
հետ ուտելու համար:

առաջին քրդական թատրոնը, որտեղ թարգմանական դործերին
զուգահեռ բեմագրվում են նաև քրդական ինքնուրույն գրամա-
տիկական գործեր: Քրդերի միջից առաջ քաշվեցին պետական և
հասարակական գործիչներ, քրդական գյուղերում հիմնվեցին կոլ-
խոզներ, որոնց շնորհիվ տնտեսության մեջ առաջ եկավ խոշոր
բեկում և սկսեցին օգտագործել առաջնակարգ տեխնիկա: Քուրդ
գիտնականներն ամենայն ջանասիրությամբ ուսուցնալու են
իրենց լեզուն, ազգագրությունը, ժողովրդական բանահյուսու-
թյունը, պատմությունը:

Այսօր քուրդը, սովետական մյուս ժողովուրդների հետ
միասին, մեր երկրում կառուցում է կոմունիզմի հոյակապ շինքը:

1.

ՔՈՒՐԴ ԱՂՋԿԱ ՎԻՃԱԿԸ ՆՐԱ ԾՆՆԴԻԾ ՍԿՍԱԾ ՄԻՆՁԵՎ
ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քուրդ աղջկա վիճակը պարզ պատկերացնելու համար ան-
հրաժեշտ է նախ որոշել քրդական ընտանիքի անդամների փո-
խադարձ հարաբերությունները:

Քրդական նահապետական կենցաղով ապրող ընտանիքի
անդամներ են հանդիսանում սովորաբար պապը, տատը, մայրը,
հայրը և ամուսնացած տղաներն իրենց կանանցով ու երեխանե-
րով: Պատահում էր, որ միևնույն ընտանիքում ապրում էին
նաև տան տիրոջ եղբայրները կամ հորեղբայրներն իրենց ընտա-
նիքների ամբողջ կազմով: Տունն անմիջապես ղեկավարում էր
տան մեծ եղբայրը կամ հորեղբայրը: Նա էր տան գլխավոր և
վերջնական կառավարիչը: Ավագ եղբոր բացակայության դեպ-
քում միայն կրտսեր եղբայրը կարող էր տուն ղեկավարել: Եթե
պապը շատ ծեր էր և չէր կարող տունը ղեկավարել, տան բոլոր
անդամները պարտավոր էին ենթարկվել տան ավագ անդամնե-
րից մեկին, որը հաջորդելու էր պապին և Շբարակ թելի պես
տան տիրոջ ասելով անցնելը:

Մայրիշխանության անկման մասին խոսելիս էնգելսն ասում
է. «Մայրական իրավունքի տապալումը կանացի սեռի համաշ-
խարհային պարտությունն էր: Տղամարդն իր ձեռքն առավ նաև
տան ղեկավարությունը, կինը նվաստացվեց, ստրկացվեց, դար-

ձավ լուկ նրա ցանկությունները ստրկուհին և երեխա ծնելու գործիք»¹

Քրդերի մեջ մոտիկ անցյալում գոյություն ունեին նաև նահապետական ժամանակաշրջանին հատուկ ընտանեկան սոցիո-րություններ ամուսնության ասպարեղում, երբ միայն նահապետան իրավունք ուներ մի քանի կին ունենալ նման իրավունք կարող էր արվել նաև նրա որդիներից մի քանիսին: Այդ արտոնության հետքերը տեսնում ենք այժմ քրդական ընտանիքում, շատ ավելի սահմանափակ ձևով: Ով հարուստ էր՝ նա կարող էր ցանկացած դեպքում դալան տալ և մի քանի կին վերցնել. հասակը և ընտանիքի մեջ ունեցած զիրքը նշանակութուն չունենր:

Քրդերի մեջ միակնությունը Հոկտեմբերյան սեռուլացիայից հետո միայն վերջնականապես հաղթանակեց:

Ընտանիքում աղջիկը, ըստ աղաթի իրավունքի, կախում ուներ ոչ միայն իր անմիջական ծնողներից, այլ ամբողջ գերագատանից, զլխավորապես նահապետից: Աղջկան անվանում են «կնեզ»² այսինքն դուստր, տան աղջիկ: «կնեզ» ունի շատ լայն իմաստ և գործածվում է, երբ աչքի առաջ են ունենում ընդհանրապես իրենց ցեղին, տոհմին պատկանող աղջկան:

Ընտանիքի պետը շատ ուրախ է լինում, երբ տան մեջ տեսնում է բազմաթիվ երեխա-զավակներ, մանավանդ տղաներ, որոնք հետագայում կռվող մարտիկներ պետք է դառնան: Ճան տղան ընտանիքի մեծ տղամարդկանց անվանում է «բավո» (հայր), «ավո» (հորեղբայր) և այլն:

Քրդական ընտանիքում մեծ արժեք են տալիս ընտանիքի ծեր տղամարդկանց, նրանց թվում նաև պառավ կանանց, նրանց ասածները, պատվերները համարյա սուրբ էին ընտանիքի մյուս անդամների և շրջապատող երիտասարդների համար. «Հին մարդ է, պետք է լսել»³ ասում է քրդական ասացվածքը:

Առանձնապես կանայք պարտավոր էին հարգել և խնամել տան ծերուկին, պահել նրա պատիվը, լավ կերակրել, հագցնել:

1 Պ. Էնգելա—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1936 թ, էջ 48:

2 Կնեզ—պարսկերեն բառ է, նշանակում է տան աղջիկ, ընտանիքի աղջիկ, ընտանիքի զավակ:

3 Մերն բարեյա, գյարաք դոճարի կըն»:

նրան և թողնել հանգիստ: Քանի որ տան ծերուկը միշտ տանն էր մնում և հետևում կանանց, որ օտար տղամարդկանցից հեռու մնան, «նամուսը պահեն», լինեն չխոսկան և հյու հպատակ իր բոլոր կարգադրություններին, ուստի ոչ բոլոր դեպքերում կանայք սիրով էին վերաբերում տան ծերուկին. երբեմն նրանց սերը փոխվում էր խոր ատելության, և եթե ամուսինների երկյուղը չլիներ, նրանք անշուշտ կընդհարվեին ծերուկի հետ: Այդ առթիվ քուրդ փողովուրդը հյուսել է մի առած, որն ասում է. — «Կալ է մալե, նամուս լը բալե»¹

Քրդական ընտանիքում երեխաների դաստիարակության գործում մեծ դեր են կատարում տան պառավները և մյուս հասակավոր կանայք: Հոր հեղինակությունը տան երեխաների աչքում ամենից բարձր է: Քուրդ հոր և երեխաների հարաբերությունների մասին խոսելիս, պրոֆ. Եղիազարյանը միանգամայն ձիշտ բնորոշում է, որ «հոր կամքը զավակի համար սուրբ է»² ասում է նա: Այն զավակները, որոնք զիմազրում են հորը, չեն ենթարկվում նրան, հասարակության կողմից նախատինքի են արժանանում: Եվ «բե դու» (կամ «բե օջախ» անօգտակար, տնավեր) էին համարվում: Հոր իշխանությունը զավակի վրա արտահայտվում էր նրանով, որ հայրն իրավունք ուներ քոլոր տեսակի կարգադրություններ անելու իր զավակների նկատմամբ, առանց որեէ մեկի կամքը հարցնելու: Եթե նա աղքատ էր, զավակներին տալիս էր հարուստների մոտ ծառայության, որդիներին հեռացնում էր տնից: Երբեմն անհամաձայնության դեպքում հայր ու որդի ընդհարվում էին. տեղի էր ունենում որդեսպանություն կամ հայրասպանություն, որ քուրդ հասարակության մեջ վայել բան չէր համարվում: Այսպիսի մի դեպք ամբողջ ցեղի անվան համար չափազանց վատ էր, որի անմիջական անդամն էր համարվում որդեսպան հայրը կամ հայրասպան որդին:

Շատ ավելի ծանր էր աղջկա վիճակը: Աղջիկն ըստ սովորության, ավելի պետք է խոնարհ, հյու հպատակ լիներ, քան տղան:

1 «Ճան ծերուկ նամուսն էլ մոտն է» ասել է թե,—ծերուկը տան նամուսը հսկողն է:

2 Записки Кавказского отдела Императорского Русского Географич. Общества, вып. XIII, էջ 32:

93

Հայր չլինելու կամ նրա բացակայութեան դեպքում, մեծ եղբայրն էր կատարում նրա պարտականութիւնները. փոքր եղբորն ամուսնացնելու գործում նա էր փոքր եղբոր հետ միասին ընտրում քաւորը և խուանդիներին, դաւանք վճարում և հարսանիքի պատրաստութիւնը տեսնում:

Հարսանիքի խաղաղ և լավ ընթացքի համար մեծ մասամբ պատասխանատու էին քաւորն ու մեծ եղբայրը, նրանք պարտավոր էին հարսանիքի սկզբից մինչև վերջ լինել հսկողի դերում, որպեսզի ոչ մի կռիվ չպատահեր և հարսանիքը չխանգարվեր:

Քրդական ընտանեկան պայմաններում մեծ եղբայրն իբր փոքր եղբայրներին նկատմամբ և՛ հայր էր և՛ մայր: Բոլոր եղբայրները մեծ պարտականութիւններ ունեին քրոջ նկատմամբ: Եթե քույրն աննամուս է, դա նշանակում է՝ աննամուս են նաև նրա բոլոր եղբայրները:

Աղջկա առևանգութեան դեպքում նրա եղբայրներն իրենց ցեղակիցների հետ միասին պատրաստ են դոսվելու: Եղբայրները կամ որդիները շատ էին հետաքրքրվում իրենց մոլոր պատվով:

* * *

Քուրդ կնոջ վիճակի մասին խոսելիս, պետք է նախ կանգ առնել նրա ծննդյան, մանկութեան, պատանեկութեան և դաստիարակութեան շրջանների վրա:

Քանի որ քրդական ցեղերն իրար հանդեպ հաճախ գտնվում էին ընդհարման վիճակի մեջ, նրանց անհրաժեշտ էր ունենալ կենդանի մարդկային ուժեր՝ պայքարելու համար: Այդ ուժերը հանդիսանում էին առաջին հերթին տղամարդիկ. «Մեր տալիկե շառանըն»¹ ասում է քրդական առածը. դրա համար էլ հենց ծննդյան օրից քրդերն ավելի սիրով և հարգանքով էին վերաբերվում տղա զավակին, քան աղջկան:

Երեխայի ծննդյան օրը սովորաբար հայրն անորոշ ժամանակով անհետանում էր տնից, ծննդից հետո վերադառնում տուն:

¹ «Տղամարդը կռիվների մազոզն է», նշանակում է՝ կովի համար ամենաուժեղ մասնակիցը տղամարդն է:

Երեխայի ծննդից հետո, տատները հայտնում է հորն իր զավակի աղջիկ կամ տղա լինելու մասին:

Տղա ծնվելու դեպքում տատները հորից ստանում էր լավ րնձաներ: Տղա ծնվելու համար ուրախանում էին երեխայի ծնողներն ու ամբողջ ընտանիքը: «Պոզե դա» (աստված տվեց) ասում էր հայրը:

Մի քանի օր հետո հարևանները այցելում էին տղա զավակի ծնողներին և աչքալուսա տալիս նրանց, իսկ աղջիկ ծնելու դեպքում ոչ մի այցելութիւն չէր լինում. թեպետ հայրը արտաքուստ ցույց էր տալիս, որ նա ուրախ է կնոջ հաջող սրգատման մասին, նրա համար իբր թե միևնույն է աղջիկ էր ծնվել թե տղա, բայց ներքուստ այրվում էր, թե «վե դիդա-կուճկա կուռ նանի» (այդ շան աղջիկը տղա չբերեց) արտնջում էր նա:

Ծնողների, նրանց ազգականների և առհասարակ քուրդ ժողովրդի վերաբերմունքը դեպի նորածին տղան կամ աղջիկը տարբեր է, որը և շատ ցայտուն կերպով արտահայտված է քրդական ֆոլկլորում. այսպես օրինակ. «Պոզե, կուռ բա» (աստված, տղա լինի) երգում քրդուհին աղաչում է աստծուն, որ իրեն արու զավակ տա, որպեսզի իր ամուսինը և ամուսնու բարեկամները գոհ լինեն իրենից: Ահա թե ինչպես է քրդուհին գիմում աստծուն.

«Աստված, տղա լինի, աստված, տղա լինի,
Աղբյուրների և գետերի մոտ լինի,
Գառներ արածացնի,
Դրանով ես ուրախանամ,
Կռիվներում լինի, վեճի մեջ լինի:
Աստված, աղջիկ չտաս ինձ,
Ինձ ամոթով չանես ամուսնուս մոտ,
Դու մի զորեղ տղա տաս ինձ,
Որ դառնա իմ սիրելին»:

Ծննդից մեկ կամ երկու ամիս հետո, եթե ծնված երեխան տղա էր լինում, ծնողները կանչում էին «Շեխ-բակե»-ին¹

¹ «Մարդու մազերի շեյթը», որը ծննդից մի քանի ամիս հետո ծնողների համաձայնութեամբ երեխայի մազերից մկրատով մի փունջ կտրում ու որոշ ծիսակատարութիւնից հետո երեխայի անունն էր դնում:

անունը զնկու համար: Իսկ ծնվածը, եթե աղջիկ էր լինում, շեշխը բոլորովին չէր մոտենում նրան: Մուսուլման քրդերը ազա լինելու համար կանչում են Մահմեդին և ասածուն:

Շեխն բակեն աղային այցելելուց և նրա անունը գնելուց հետո ընծաներ էր ստանում աղայի ծնողներից: Ծիսակատարութունը կատարվում էր ազոթքի ձևով, որ քրդուհին «գուա» է անվանում: Հետագայում երեխայի խնամքի և ապա նրա դաստիարակութան գործն ընկնում էր մոր, հոր, տան ձեռուկներին վրա: Երեխայի մայրը, հայրը և ընտանիքի մյուս անդամները, հարևանները և հոգևորականները քարոզում էին աղջկան, որ նա լինի համեստ, «բարխա խուադե» (աստու գառ), չխոսկան և խոնարհ բոլոր մեծերի առաջ, նամուսով և աշխատասեր:

Բայց դեռ բավական չէր, որ աղջիկը լիներ խոնարհ, գտնվեր կրավորական գերում, այլ նա մինչև ամուսնութիւնը պետք է մի բան սովորեր ծնողների մոտ, որպեսզի հարս գնացած ժամանակ սկեսրոջ առաջ արհամարհանքի չարժանանար: Դրա համար մայրը պարտավոր էր աղջկան սովորեցնել աունն ավելի, հորթեր պահել, թեղ մանել, բուրդ գզել, գուլպա, խալիչա գործել և այլ բազմաթիվ աշխատանքներ կատարել: «Թալլե» (հենք) ստեղծագործութան մեջ մայրը շատ ուրախ է, երբ տեսնում է, որ իր աղջիկը «Թալլեիրա» (խալիչա գործող) է և նրան տան պահողն ու թեն է անվանում: Ահա այդ երգը.

«Մորդ թալլեիրե, խալիչեդ գործիր,
Սև ու մութ թեկերով գործիր:
Մեր խալիչա գործողը՝
Մեր թեն է ու աուն պահողը:
Մենք քարքիթ կվերցնենք, կգնանք նրան օգնելու»:

Մի խոսքով 10—15 տարի քրդուհին տան մեջ, դաշտում պետք է հանդես գար իբրև իր ընտանիքի աշխատավորներից մեկը: Քրդական ազգագրական և ֆոլկլորային նյութերում կան շատ փաստեր քուրդ աղջկա կատարած աշխատանքների և սովորած արհեստի մասին, որոնց մեջ մայրը կամ հայրը մեծ պարծանքով են խոսում իրենց պատանի աղջկա մասին և գովերգում նրա շնորհքն ու աշխատանքը: «Մայրը» երգի մեջ ծնողները դրվատում էին իրենց աղջկա ջանասիրութունը հետեվյալ ձևով.

— «Աղջիկա փոցխ անող է,
Հոր և մոր կողմից սիրված է,
Աղջիկա բանվոր է,
Մատաղ լինեմ, բանվոր է,
Մնջոն Ամոյի բանվորն է»:

Չանազան խավերին պատկանող քրդական ընտանիքները տարբեր հասկացութուն ունենին աշխատանքի մասին: Աշխատանքն ունևոր խավին պատկանող ընտանիքների համար արհամարհանքի տարակա էր համարվում:

«Սավատ փեշև քըրանա» (աշխատանքը իշի գործ է) ասում էին քուրդ բեկերն ու հարուստները. նույն դարձվածքը երբեմն մեխանիկորեն կրկնում էին մյուս քրդերը. իսկ աշխատավորական ընտանիքները, ընդհակառակը սիրում էին աշխատանքը որպես իրենց ապրուստի, եկամուտի միակ միջոցը. դրա համար էլ տարբեր ընտանիքներ տարբեր ձևով էին մոտենում իրենց երեխաների դաստիարակութան գործին:

Քուրդ բեկերի ընտանիքում դեռ փոքր հասակից աղջիկը հետևում էր մորը, ուղում էր «Չարիներ» (աղախիններ) ունենալ և մյուս քուրդ աղջիկների նկատմամբ իրեն ձևացնում էր ավելի «բարձր» անձնավորութուն, «ազնիվ»: Նա դեռ փոքր հասակից վարժվում էր անգործութան և իրեն բարձր էր դասում ունչպար մարդու աղջիկներից:

Բոլորովին այլ հիմքերի վրա էր դրվում աշխատավոր ընտանիքի փոքրահասակ աղջկա դաստիարակութան գործը:

Մայրն այստեղ սովորեցնում էր իր աղջկան և աղային լինել աշխատասեր, խելոք և համեստ. թե տան մեջ և թե ընտանիքից դուրս լուր մեծերի խորհուրդը, ենթարկվել նրանց և նրանց բարի խորհուրդները կյանքում գործադրել: «Գառները բեր» երգում մայրը գովերգում է գառնարած աղային (և ոչ պակաս աղջկան).

«Գառնարած, գառները բեր՝
Լավ տեղերում արածացրու:
Մայրդ մատաղ լինի քեզ,
Սեր կդնեմ հացիդ վրա:
Մեր գառնարածը լալլե է,
Նրա սիրածն է չալպարուկ ուլիկը,

Երեկոններն իր ուղիկին տուն է բերում,
Իմ սղաս աշխատավոր է»:

«Կուսե մըն» (իմ սղաս) երգում մայրը նուշնպես գովերգում
է իր հորիք քռոզ սղային. մայրը զիմելով սղային ասում է.

«Տղաս լավ է, գեղեցիկ է,
Աշխատող է, տուն պահող է,
Տավարն է տանում նախիր,
Մատաղ լինեմ, գեղեցիկ է:

Չութի ժամանակ հորեք քռոզ է,
Չութը թողնելիս եզներն է արածացնում:
Նա լավ է եզներին կերակրում,
Հոր սիրտն ուրախացնում:

Երբ արտերն են քաղում,
Փոցխ է անում, մատաղ լինեմ,
Ժիր սղաս է, մատաղ լինեմ,
Տղաս աշխատող է, մատաղ լինեմ»:

Մինչև Հոկտեմբերյան Մեծ Ռևոլյուցիան քուրդ ժողովուրդը
խարխափում էր տգիտության խավարի մեջ: Նրա զավակներն
ապրել են առանց դպրոցի երես տեսնելու: Դեռահաս աղջիկ-
ներն աչքի էին ընկնում իրենց փակ կյանքով, արհեստագոր-
ծությամբ՝ առօրյա կատարած աշխատանքներով: Պատանի քրդու-
հին պետք է լիներ ամոթխած, քաշվող, այլապես նրան կտային
«ուռ ուշե» (սևերես), «բեշարմե» (անամոթ) անվանաներ:

Երբ որևէ հյուր իջևանում էր քրդի տանը, աղջիկը նրան
ջուր մատուցելիս, կամ այս ու այն պատվերը կատարելիս,
չպետք է նրա հետ ազատ խոսեր, ինչպես բոլոր քրդուհիները:
Ավելի մեծ անուն ունենալու համար, աղջիկը պետք է եկող
հյուրի առջև պահպաներ քրդերի մեջ սրբագործված «քաղաքա-
վարության» բոլոր կանոնները, զրա համար մայրը պարտավոր
էր իր աղջկան սովորեցնել եղած հյուրերի հետ լավ վարվելու
եղանակի իր գիտցած կանոնները:

Քրդուհին շատ էր սիրում բնության գրկում լինել, դրա հա-
մար էլ նա մեծ մասամբ իր կյանքի լավ օրերն անց էր կացնում
բնության մեջ՝ լեռների լանջերին, սառնորակ աղբյուրների մոտ:

Այդ լեռներից են Հայաստանի գեղատեսիլ Արագած, Մասիս,
Արմաղան, Սիփանա և մյուս սարերը:

Քրդուհին շուտ է մեծանում և շատ վաղ է զգում իր գեղեցի-
կությունը: Նրա գեղեցկանալուն նպաստում է լեռնային մաքուր
օդը, ոչխարների կաթն ու մածուցը, միսը, կարագը, տոմաստը,
նրա ազատ կյանքը բնության մեջ լեռներում, որտեղ հավաքվում
են գլխավորապես աղջիկներ և նիշակերիներ (նշանված աղջիկ-
ներ), որոնք լեռնային այժյամի պես թռչում են քարից քար,
կատակում և զրուցում իրենց առօրյա խնդիրների, գլխավո-
րապես սիրո մասին ու երգում սիրային երգեր: «Լո, լո շվանո»
(լո, լո, հովիվ) երգում աղջիկը գովերգելով իր սիրած չոբան
սղային, ասում է՝

«Բլուրին դրել է մատները,
Բլուրին դրել է մատները.
Թող յարիդ գլուխը, դոստիդ գլուխը,
Թող յարիդ գլուխը, դոստիդ գլուխը,
Դոստիդ գլուխը քեզ մատաղ լինի»:

Սիրահարված քրդուհին ուզում է լեռների գրկում լսել
հովիվի քաղցրահնչյուն սրնգի ձայնը և ուրախանալ զբանով: Դա
դեռ բավական չէ, նա իրեն շատ երջանիկ է զգում, երբ նրա
գեղեցկություն և իր արտաքինի մասին խոսում են սիրահար
կրիտասարգները:

«Դըլե մըն» (իմ սիրտը) երգում երիտասարդ տղան գովեր-
գելով իր սիրածին ասում է.

«Սրտիս ուղածը ներքևի աղջիկն է,
Ճակատին շարված են տասներկու ոսկի,
Միայն թող իմ բերանը դիպչի սիրուն աղափայլի թշին,
Թող Կարսի փոխարքան գլուխս կտրի,
Ունեցածս էլ հանի աճուրդի»:

Բնության գրկում քրդուհին սիրում է երգել նաև բնու-
թյունը. այդ առթիվ կան երգեր, որոնց մեջ գովերգված են լեռ-
ները, խոտերն ու ծաղիկները, աղբյուրները, գետերը քչքչան
ջրերը:

Ահա այդ երգերից մեկը, որի մեջ գովերգված է Արա-
գած լեռը:

1 Չ. Ջևդի և Ա. Ավդալ—Քրդական ֆոլկլոր, 1936 թ., էջ 472:

«Ալագյազ, անուշ Ալագյազ,
 Ալագյազ բարձր սար է,
 Այնտեղ կա վարդ, մանուշակ»:

«Չուժը Ալագյազ է» (գնացել էի Ալագյազ) երգում գովերգ ված է Ալագյազի գետերն ու աղբյուրները և ցանկութունն հայտնված այնտեղ ապրել որպես ամենալավ յայլա:

«Գնացի Ալագյազ աղբյուրների, գետերի մեջ,
 Ամեն տեղ ջրերը քչքչում են,
 Չայնն է ընկնում լեռները,
 Մարդկանց զբոսնելու տեղն է,
 Յայլայի համար ամենալավ տեղն է.
 Իսկական սիրահարները և դոստերի տեղն է»:

Չբավոր դասին պատկանող քուրդ աղջիկը շատ ուրախ է լինում, երբ ունենում էր իր ցանկացած հագուստը, զարդերը իսկ տխուր էր, երբ զուրկ էր լինում դրանցից: Չուժուրները կյանքն ընդհանրապես դառն էր անցնում և մեծ վիշտ առա բերում կյանքի շեմքը նոր օտք ղնող քուրդ աղջկա մեջ, մա նավանդ, երբ հարսանիքների, պարահանդեսների ժամանակ ն տեսնում էր իր ընկերուհուն մաքուր և ըստ քրդական ճաշակ գեղեցիկ հագնված, իսկ ինքը զուրկ էր այդ բոլորից:

Չուժուրը քրդուհին անգամ ամաչում էր վեր կենալ և գովանդում պարել:

Գեղեցկանալու համար, մանավանդ նշանված քրդուհիները սիրում էին զարդարվել դրա համար նրանք գործ էին ածու արհեստական զանազան միջոցներ, օրինակ «Մամե ու Ջինե պոեմում գովերգվում է ծարիրով նախշած գեղեցիկ Ջինեի ա քերը: Ժողովրդական հերոս երեք եղբայրներ՝ Ղարաթափղին/ Ճակինի և Աֆինի հետ նստած ժամանակ, պոեմի հերոս Մամե առանց նկատի ունենալու պոեթխածութունը, դիմելով Ջինեի ասում է.

«Ընկերուհիներով հպարտ, գնում էիր Ջինե խաթուն,
 Գեղեցիկ աչքերիցդ Սպահանի կըլ¹ էր թափվում
 Մի աչքս մնաց բաց, իսկ մյուսը փակվեց»:²

1 Սպահանի կըլ—Սպահան քաղաքի մուր, աչքերը օծելու համար յուղ պատրաստած սև մուր:

2 2. Ջեղի և Ա. Ավրալ, նույնը, էջ 274:

Վերոհիշյալ տղերը քրդուհու գեղեցիկ աչքերի գովերգն է: «Լե դոմամե» (յարս) երգում ավելի քան գեղեցիկ կերպով և արտահայտված քրդուհու գեղեցկութունն իր սիրած երիտասարդի բերանով:

Կան նաև ժողովրդական այլ ստեղծագործութուններ, ուր կնոջ գեղեցկութունը լավ պատկերացնելու համար քրդուհու ամբողջ արտաքինը համեմատվում է ընտելյան երևույթների և դանազան տեսարանների հետ: Համեմատության այս ձևը կազմում է ֆոլկլորի առանձնահատկութուններից մեկը, որ ժողովրդական բանահյուսության պատկերավորման համար մեծ նշանակություն ունի: «Լայլե և Մեջնուն» պոեմում լեզենդար հերոսի երազային պատկերացմամբ ներկայացված է նույն պոեմի հերոսուհի Լայլեն իր հոգեկան խորն ապրումներով և արտաքին տեսքի նկարագրությամբ: Նույն պոեմի հերոս Մեջնունն իր տեսած երազի մասին պատմելով Լայլեին, չի կարողանում բացատրել նրան իր տեսած երազը, այդ պատճառով նա հարցնում է Լայլեին, թե մըն է տեսած երազը իմաստը:

— «Լայլե, ես մի երազ եմ տեսել,—ասում է նա,—երազումս մի ծառ եմ տեսել, այդ ծառը երեսուն իրեք ճյուղ ուներ: Վրան նրկու խնձոր տեսա, նրանք ճյուղերից կախվել էին: Մի դուրան մեջտեղումն էր, մի մահար մեջտեղումն էր, իսկ ծառի մոտ մի աղբյուր կար:

Լայլեն ուրախացած պատասխանում է.—Երազդ ճիշտ է, սխալ չէ,—ասում է նա,—այդ ծառը որ դու ասում ես, հասակ է, ծառի երեսուն երեք ճյուղերը ծամերս են, նրա կրկու խնձորները ստինքներս են, միջին դուրանը կուրծքս է, միջին մահարը իրանս է, իսկ ծառի մոտ եղած աղբյուրը իմ աչքերիս արյունքներն են»:

Ժողովրդական այս պարզ ընտելի և ցայտուն պատկերացմամբ քուրդ հերոսուհին ներկայանում է մեզ մարդկային գեղեցկության տիպարի ամբողջ կատարելությամբ, ինչպես այդ կարող է պատկերացնել քուրդ ժողովուրդը:

«Բաֆնա տա» (հասակը) երգում քրդուհու հասակը նմանեցվում է Մերդինի մինարեթին. սիրահար տղան գովերգելով իր սիրուհուն ասում է՝

«Օհ երկար է բոյդ, Մերդինի մինարեթի պես,
 Բո ծծեքը նման են Գուրինի այգու խնձորներին,

Քո սև-սև փայլուն աչքերը նման են
 Գերհարին շամամներին,
 Կուրծքդ նման է քոչվոր քրդերի պանրին,
 Որ մարդ գնի կշեռքի նժարի վրա և իր համար քաշե»:

«Մընն խառնակ գիյա» (ես մի երազ եմ տեսել) ստեղծագործության մեջ համարյա նույն բովանդակությամբ արտահայտված է քրդուհու գեղեցկությունը. տղան ասում է սիրածին.

«Ես երազներից մի երազ եմ տեսել,
 Քո հոր տան բակում մի ծառ էր բուսել 33 ճյուղով,
 Նայում եմ ծառին, տերևներով ծածկված էր:
 Տերևներից վեր մի դուլգ կարմիր խնձորներ կային,
 Խնձորներից վեր սաթ խանութներ կային,
 Խանութներից վեր Մողանի թամքի խանութն էր,
 Մողանի թամքի վերև աղբյուրներն էին,
 Աղբյուրներից վերև ճանապարհ կար,
 Ճանապարհից վերև մի լայն հրապարակ կար,
 Լայն հրապարակի կողքին, մի ծառի վրա
 Նստած էին երկու սպիտակ արծիվներ»:

Աղջիկը տղային իր սիրո ուժը ցույց տալու և իր գեղեցկությունը գովերգելու համար պատասխանում է նույն երգում.

«Հորս տան բակում բսած ծառն իմ հասակն է,
 Ծառի տերևներն իմ մազերն են,
 Կարմիր խնձորները՝ ձմերս են,
 Սաթի խանութը՝ բերանս ու ատամներս են,
 Մողանի թամքը քիթս է,
 Աղբյուրները աչքերս են,
 Ճանապարհները ունքերս են,
 Իսկ լայն ճանապարհը՝ աստծու
 Արարածիս (իմ) ճակատն է:
 Այն երկու սպիտակ արծիվները,
 Որ նստած են ծառին, իմ և քո մուրազն է»:

Սիրային այս երգում պարզ և հաստեղ ոճով արտահայտված է քրդուհու սիրո ուժը:

«Բաժնա Գողե» (Գողեյի հասակը) ժողովրդական երգում գովերգվում է Գողե աղջկա հասակը, աչքերը, մազերը և ծա-

մերը, որոնք նմանեցվում են փառայի վրանի երկար պարաններին:

«Մեր Գողեի մեջքը բարակ է, չինարի ծառի պես,
 Աչքերը սև են, ծառիբով նխշել է,
 Մեջքը կապում է, բարակ է:
 Նրա ծամերը այնպես են,
 Ոնց որ Մըլի¹ թամբ փառայի վրանի
 Պարաններ լինեն, դրանցով
 Մարդ կարող է Հայրան գետի ափին
 Իր համար վրաններ սարքել»:²

Կնոջ գեղեցկության նկարագրությունը տեսնում ենք նաև ֆուլկլորային այլ ժանրերում. օրինակ «Շարիբան» հեքիաթում Շարիբանի գեղեցկությունը, որը գովերգված է նրա սիրահար Դավրեհչի բերանով, արտահայտված է հետևյալ ձևով. «Շարիբանի կուրծքը կապույտ ծով է, որի մեջ կարելի է լողալ, աչքերը սև են, սև հուլունքի պես աչքերը պսպղում են, թշերը երկու խնձորի պես կարմիր են, լայն ճակատը սպիտակին է տալիս այնպես, ինչպես ձյունը, մեջքը բարակ է, մազերը երկար, ձևները փափուկ են, ինչպես բամբակ»:³

Կնոջ գեղեցկության նկարագրությունը, որ մարդկային խորը զգացումներով և տարբեր երանգներով արտահայտված է ժողովրդական բանահյուսության մեջ, կապվում է քրդուհու ուրախության ու երջանկության հիմնական աղբյուրներից մեկը: Քրդուհու ուրախության վայրն էր համարվում նաև բնդարուկը (ծառի տակ), որտեղ բնության զրկում, ծառերի սավերների տակ հավաքվում էին աղջիկները և կրկին խոսում իրենց առօրյայի մասին:

Բնդարուկ գնալու ժամանակ աղջիկները հարսների և մյուս կանանց մասնակցությամբ իրենց հետ տանում էին ուտելիք, մրգեղեն և ծառերի տակ խորոված պատրաստում, ուտում, խաղում, զվարճանում և ուշ երեկոյան վերադառնում իրենց վրան-

¹ Մըլի—քրդական ցեղի անուն է:

² Հ. Ջնդի և Ա. Ավդալ, էջ 425:

³ Ֆուլկլորային անտիպ նյութերից:

ները: Բնդարուկի օրը նրանց ուրախությանը կարող էին մասնակցել նաև տղաները:

Բնդարուկը, ինչպես հայկական համարձման օրը հայ աղջիկների համար, նույնպես քրդուհիների համար բախտ բանալու օր էր համարվում, միայն այն տարրերով լի, որ համարձման օրը տոն էր համարվում հայ իրականություն մեջ, իսկ քրդուհիների համար ընդարուկը ժամանցների վայրն է, ուր ամսվա ընթացքում մի քանի անգամ տարբեր տեղերում ու տարրեր ծառերի տակ էին հավաքվում:

Աղջիկների բախտը գուշակելու սովորությունը տեղի էր ունենում հետևյալ ձևով. մի օրևէ պառավ կին «բանըկվակըր» (բախտ բացող) աղջկա բախտը գուշակելու համար իր մոտ պահած հանգուցավոր թելերից մեկը հանում էր գրպանից և բաց անում, եթե հանգուցը դժվարություն էր բացվում կամ չէր բացվում, նշանակում էր, աղջիկը բախտ չունի, շուտ բացվելու դեպքում, նա բախտավոր էր համարվում: Ըստ այդ սովորությունից, բախտ չունեցողներն իրենց համարելով դժբախտ, վատ տրամադրություն վերագառնում էին սուն: Բախտ ունեցողները շարունակում էին իրենց ուրախությունը:

Այսպիսի հանդիսավոր հավաքություններից վրանը վերագառնալիս աղջիկներն ու տղաները շարունակում էին երգել ու պարել: Լուսնյակ գիշերները նրանք հավաքվում էին վրանի առջև և լեռնային մաքուր օդում շարունակում էին խմբական երգեր և մեներգեր կատարել:

Տղան երգում էր, իսկ աղջիկը պատասխանում նրան նույն երգի մյուս քառյակով. երբեմն դուր-գուռնա էին նվագում վրանի առջև, ոչխար մորթում:

Բնդարուկում բախտը բաց անելուց հետո աղջիկը երգում է.

«Ես կամ, դայե, ես կամ,
Ես քո սրտի սիրածն եմ:
Այսօր դեմքս ծիծաղով է,
Ես ուրախ եմ, շատ ուրախ եմ.
Այսօր պառավը բնդարուկում՝
Աղջիկների մոտ, հարսների մոտ,
Վիճակ բացեց ինձ համար,
Բախտ ունեցա շատերի մեջ:

Այս աշխարհը իմս է,
Երկինք, գետին, գետին,
Ես սիրահարված եմ, սիրված եմ,
Ես պիտի ասեմ ամոթ չէ՛:

Բայց միայն ուրախ ու անհոգ չէր անցնում քուրդ աղջկա օրը աղաքս և ճոխ բնություն մեջ. նա էլ ուներ իր հոգսն ու մտատանջությունը: Երբեմն շատ ծանր էր անդրադառնում աղջկա վրա նրա ծնողների ու ընտանիքի մյուս անդամների կողմնապահ վերաբերմունքն իր հղբոր նկատմամբ:

Տղայի գերագառնածն ու աղջկա թերագնահատման իրական ապացույցներ կարող են ծառայել մանկական և հարսանեկան երգերը, որտեղ տղան ավելի սիրելի է հանդես գալիս, քան աղջիկը, «նամա նակա» (դարդ մի արա) երգի մեջ մայրն ասում է իր տղային.

«Իմ Ղադո, դարդ մի արա,
Իմ Ղադո, սիրող բաց արա,
Քեզ համար է բեշմետը կապույտ,
Աղջկա բաժինն է հացի կուտ»:

Տղան դավերգվում է որպես քաջ, արի, ծնողների և ամբողջ ընտանիքի, հեռեհապես և ամբողջ ցեղի հույսը, ապավինը, իսկ աղջիկը վերոհիշյալ երգերում դրվատվում է միայն իր գեղեցկություն, համեստություն, աշխատասիրություն, խոնարհների գլխավոր հատկանիշներն են համարվել: Քուրդ հասարակություն մեջ տղան իր բոլոր կողմերով բարձր է դասվել, քան աղջիկը. «Ճլուրի» հարսանեկան երգում տղան հանդես է գալիս իբրև հոր հաջորդը, իսկ աղջիկը մոր տեղ բռնողը:

Հայրը մեռնում է՝ տղան է նրա տեղը բռնում,
Վայ ինձ, լո, լո, վայ լո, լո.
Մայրը մեռնում է՝ աղջիկն է նրա տեղը բռնում,
Վայ ինձ, լո, լո, վայ լո, լո.:

Քրդական հասարակական պայմաններում չքավորությունը նույնպես իր բացասական ազդեցությունն է թողել աղջկա վիճակի վրա:

¹ Քուրդերային անտիպ նյութերից:
111-16

Անչափահաս աղջիկն աղայի կամ հարստի տանը կատարում էր այն բոլորը, ինչ որ պահանջում էր նրանից տան խանութը. նա իր մոր հետ միասին հարում էր խնոցին, կամ էր քշում, գառներ արածացնում, ջուր բերում՝ դաշտում աշխատողների համար, հաց տանում. հանդը, տունն ավլում, երեկոները խաթուն-խանումի համար անկողին պատրաստում և հետո վերադառնում տուն: Այդ բոլորի համար նա ստանում էր չնչին գումար: Այդ կապակցութեամբ քրդական ժողովրդական երգերից մեկում մայրը հետեյալ ձևով է պատկերացնում աղայի համար աշխատող իր աղջկա քաշած զրկանքները՝

«կալ անող, կալ անող,
 Իմ աղջիկը կալ անող է,
 Փոշին աչքերին կալ անող է,
 Կամն է քշում կալ անողը:
 Աստված չանի Հասոյի բաժին,
 Քո վարձը մի կոտ գարի տվեց,
 Շեխն էլ վրան աղոթեց,
 Իմ աղջիկս կալ անող է:
 Թող մեռնի Հասոյի որդին,
 Հո, հո, հո, գեղեցիկ եզներ:
 Անցյալ տարի աշխատեցիր, կես վարձ տվեց,
 Հո, հո, հո, լավ եզներ»:

Քրդուհին պայքարի այլ միջոց չգտնելով՝ դիմում է աստծուն՝ շահագործող և խաբերա Հասոյին պատժելու համար: Սա ուժեղ բողոք է կուլակային շահագործման, կեղեքման և խաբերայութեան դեմ, որ ընդհանրապես կարմիր թելի պես անցնում է քրդական հարուստ բանահյուսութեան միջով:

Իր ընտանիքում, տան բոլոր մանր-մունքը աշխատանքները մոր ղեկավարութեամբ քուրդ աղջիկն էր կատարում, բեր անում ոչխարը, թել մանում, գուլպա գործում և այլն:

Այս է եղել հնում քուրդ աղջկա վիճակը նախքան ամուսնութեան շրջանը:

ՔՈՒՐԴ ԱՂՋԻԿԸ ՆՇԱՆԴՐՈՒԹՅՈՒՆՆՅՈՒՆՅՈՒՆՆԵՎ ԱՄՈՒՍՆՈՒՆՈՒՆ ՏԵՂԱՓՈՒԿԵԼԸ

Քրդերի մեջ, լինեն մահմեդական թե կղիթի, թույլ է տրվում բազմակնություն, այսինքն իրավունք էր տրվում տղամարդուն, բացի մեկ կնոջից՝ օրինական (սովորութական) եղանակով կենակցել մի քանի կանանց հետ: Մահմեդականությունը նույնիսկ իրախուսում էր բազմակնությունը: Եղբիական կրոնն էլ դեմ չէ բազմակնություն:

Սխալ կլիներ բազմակնությունը սովորությունը կապել միայն կրոնական հավատալիքների հետ, որովհետև նա շատ հին ծագում ունի, սկիզբ է առնում դեռ այն ժամանակ, երբ տան իշխանությունն անցնում է տղամարդու ձեռքը և նա իշխող ու կարգադրիչ է դառնում թե ընտանիքի անդամներին և թե նրա ամբողջ ունեցվածքին, այսպիսով ստանում էր ավելի նյութական մեծ հնարավորություն մեկից ավելի կին ապահովելու համար:

Տան մեջ տղամարդը նայում էր իր կնոջ որպես իր սեփականության վրա, որի հետ ինչպես ցանկանում, այնպես էլ կարող էր վարվել, որովհետև կնոջ դիմաց դալան (փոխարժեք) էր վճարել, նա իր կնոջը գնել էր այնպես, ինչ ձևով գնում են սովորաբար մի կզ, կով, կամ այլ կենդանի: Քրդերի մեջ ամուսնությունը համար որոշ սարիք գոյությունը չունի. աղջկան ամուսնացնում էին առհասարակ փոքր հասակից, առանց նկատի ունենալու նրա ցանկությունը:

Քրդերի մեջ ընդունված էր ամուսնություն հինգ ձև.

Առաջինը՝ բնիթյարթմա, երկրորդը՝ նշանագրություն, երրորդը՝ առևանգում, չորրորդը՝ սարգառունշտանգն և հինգերորդը՝ բարդելի:

1. Բնիթյարթմա: Երեխաների ծնվելուց 6—7 ամիս հետո, օրորոցում եղած ժամանակ, ծնողները փոխադարձ համաձայնությունով նշանում էին նրանց միմյանց հետ: Դրա համար տղայի տերը տալիս էր աղջկա տիրոջը մի որևէ թամազի—փուշի (մետաքսե թաշկինակ) կամ աջ ձեռքով խփում նրա ուսին: Անմեկ երեխաները մեծանում էին և եթե նրանք հարևան էին, միշտ խաղում էին միմյանց հետ, իրար անվանում «խուշկ ու բրա»

(քույր ու եղբայր), միասին հաց ուտում, ուրախանում ու տիրում: Ինչ արբունքի չհասած պատանիներին հասկացնում էին, որ նրանք միմյանց ամուսիններ պիտի լինեն: Երբ աղջիկը հասնում էր գրեթե արբունքին և հասկանում էր, որ տղան լինելու է իր ամուսինը, երկու պատանիների մեջ բացվում էր մի խոր անդունդ: Ըստ սովորության նրանք արդեն իրավունք չունեին միմյանց հետ ազատ խոսել, զվարճանալ Աղջիկը պետք է ավելի ամոթխած լիներ, որովհետև նա արդեն հարսնացու էր համարվում, իսկ հարսնացու լինելու ամենատաաջին պայմանը չխոսկանությունն էր համարվում: Նա պետք է լիներ խոնարհ, հեղարար: Հեռվից ամուսնուն, սկեսրոջ կամ սկեսրարին տեսնելիս նա պետք է գլուխը կախեր և արտաքուստ ցույց տար ակնածանք նրանց հանդեպ:

Աղջկա ծնողները չպետք է հրաժարվեին փեսացուից, չպետք է լինեին ուխտադրուժ, ուխտադրուժյունն առհասարակ և մանավանդ այսպիսի դեպքերում քուրդ իրականության մեջ ստոր և վատ բան էր համարվում. նրանք «խաբարա մեր է բարե»¹ էին ավել և պիտի հավատարիմ մնային իրենց խոստումին:

2. Ամուսնություն երկրորդ անգամը՝ նշանադրության միջոցով ամուսնությունն էր: Այս դեպքում ծնողների փոխադարձ համաձայնությունը և տան ավագ անդամների, մանավանդ ծերերի հետ խորհրդակցելուց հետո, մի հեղինակավոր բարեկամ ուղարկվում էր աղջկա տունը և եթե այնտեղ նույն առաջարկությունը հավանություն էր գտնում նույն եղանակով աղջկա տերերի կողմից, տղայի տերերը անձամբ գնում էին առաջարկություն անելու: 12—15 տ. աղջկան նշանում էին 10—30 տ. տղայի հետ: Ամուսնություն մեջ տղայի և աղջկա զգացումները սովորաբար խաղում էին վճռական դեր, սակայն պատահում էին և այնպիսի դեպքեր, երբ նշանադրությունը կատարվում էր հակառակ աղջկա կամքի՝ չսիրած և չհավանած մարդու հետ: Տղայի հայրը, կամ նաև բարեկամներից մի քանի հողթ տղայի հետ միասին այցելության էին գնում աղջկա ծնողներին: Աղջկա ծնողները խոսակցության ընթացքում իմանում էին հյուրերի այցելության նպատակը և ցույց էին տալիս սիրալիր վերաբերմունք:

¹ Հին մարդու խոսքը՝ ճմարիտ խոսք է:

Հյուրերի այցելության այդ մոմենտը աղջկա համար ամենաուրախալին էր համարվում, երբ տղան իր սրտովն էր «բախտ մըն բրոխ»¹, մտածում էր նա:

Եկած հյուրերի աչքին լավ երևալու համար նա սիրուն զարդարվում էր, տան մեջ՝ հյուրերի ներկայությանը ուրախ-ուրախ էլ ու մուտ անում, երբեմն ջրի թասը բռնած, ջուր էր մատուցում նրանց և այլ տեսակի մանր ծառայություններ կատարում: Այս բոլորը նրա համար էր, որպեսզի հյուրերը տեսնեին և հավանեին նրան՝ որպես աշխատունակ, աշխուժ և գեղեցիկ աղջիկ: Բայց սովորական երևույթ էր քրդերի մեջ՝ երբեմն իրար չտեսած, անձանոթ տղայի և աղջկա նշանադրությունը. այդ տեղի էր ունենում բացառապես ծնողների կամքով, հակառակ ամուսնացող տղայի կամ աղջկա ցանկություն:

Ինչպես բեղքյարթմա արված, այնպես էլ նշանադրված աղջիկների ամուսնությունը, կարող էր տեղի ունենալ պսակվողների կամքին հակառակ, եթե իհարկե երկու կողմերի ծնողների համաձայնությունը կար: Այս դեպքում պսակը կատարվում էր առանձին հանգեսով (հարսանիքով), որի մասին խոսք կլինի հետո:

Պրոֆ. Եղիազարյանը քրդերի ամուսնություն մասին խոսելիս ասում է.—Քրդերն առհասարակ ամուսնանում են 15-ից 30 տ. հասակում. այդ տարիքից ավելի ուշ դժվարություն է հաջողվում քրդին իրեն համար կին գտնել: Այս կարծիքը ճիշտ չէ, որովհետև հաճախ պատահում էին դեպքեր, երբ 40—50 տարեկան տղամարդուն հոժարություն տալիս էին 15—18 տ. աղջիկ. աղջկա տերերի համար ավելի նշանակություն ունեց փեսացուի սոցիալական դիրքը և կարողությունը, քան նրա տարիքը:

Բնդական ընտանիքին պատկանող, կամ լավ միջոցներ ունեցող տարիքոտ մի քուրդ ամեն հնարավոր միջոցներն ունեց իր ունեցած կանանց թվին ավելացնելու մի դեռատի աղջիկ ևս, միջըինիս ցանկություն էր, որ ամուսնանում էր տարիքոտ անձնավորության հետ, նրան ստիպում էին ծնողները, համոզում էին քուրդ հոգևորականները, ասելով.—«աղղարա խաուղէ ուսանա» (այդպես է ասածու կամքը):

«Իյուրդ աղջիկը,—ասում է Ֆրանսյանն իր «Տաճկաստանի քյուրդերը» հոդվածում,— ընտանիքում առանձին իրավունքներ չի

¹ Բախտ կտրեց, բախտ բերեց:

վայելում. նրա անհատականութունը համարյա մեռած է, նա հոր ճորտն է: Ամուսնության դեպքում անգամ չեն հարցնում նրա կամքը: Այս երևույթը մեզ չի զարմացնում, քանի որ մեր շատ գյուղերումն էլ նույն դրուեթյունն է:

Ամուսնության մեջ քյուրքը խիստ կերպով առաջնորդվում է անտեսական տեսակետներով:

Քյուրք աղջիկը համարյա ծախվում է, հորը չի հետաքրքրում փեսայի ինչ դիրքի, քաջության տեր լինելը, որքան «բաշլըղը»: Քրդերի մեջ սովորական բաշլըղ համարվում է 50—100—200 լիրա, տաճկական ոսկի, երբեմն էլ ավելի: Տալիս են նույնպես ձի, զենք և այլն: Բաշլըղի սովորությունը պարտադիր է բոլոր քյուրքերի մեջ:¹

Այսպիսի ամուսնության դեպքում աղջկա համար ստեղծվում էր անտանելի դրուեթյուն. աղջիկը հաճախ զրկվում էր իր սիրած երիտասարդից և ծնողների կամքով միանում մեծահասակ ամուսնու հետ, որին սիրելու փոխարեն ատում էր նա: Այդպիսի դժբախտ ամուսնությունների դեմ տրտունջը արձագանք է գտել ժողովրդական երգերում: Օրինակ «Ահամգո» երգում աղջիկը գանգատվում է իր ծնողներից և անխճուճ նրանց, որ նրանք եղել են անխիղճ իր նկատմամբ, իրեն չեն տվել իր սիրած չորան Ահամգին, այլ տվել են յոթանասուն տարեկան ծեր աղային: Աղջիկն անխճուճ ծնողներին ասում է.

«Թող հայր ու մայրս լավ օր չտեսնին,
Նրանք անխիղճ են, ինձ չտվին չորան Ահամգին,
Այլ տվին Թամոյի որդի, 70 տարեկան Նավոյին»:²

Ինչ քավական չէ, որ Նավոն յոթանասուն տարեկան է՝ աղջիկը բողբոջում է նաև նրա համար, որ նա երեք կին ունի, իսկ ինքը դառնալու է նրանց հեռու, որ նրա համար անտանելի է:

Ժողովրդական այս գեղեցիկ ստեղծագործության մեջ արտահայտված է աղջկա ուժեղ բողբոջ անհավասար ամուսնության դեմ: Այս բողբոջը լի է թախիժով, անսահման վշտով, որ երբեմն վեր է ածվում անեծքի՝ հանդեպ հարազատ ծնողների, այն ծնողներին, որոնք մինչև այդ սիրելի են եղել նրա համար: «Եթե

¹ Տես Մուրճ, 1904 թ. № 6:
² Հ. Ջնդի և Ա. Ավդալ—Քրդական Փոսիլը, 1936 թ., էջ 363:

մարդու սրտի շուշեն (ապակին) ջարդվեց, սաղացնել զժվար է»¹, ասում է քրդական առածը:

Քրդուհու այսպիսի դժգոհությունն իր ճնշված վիճակի դեմ մի մեծ բողբոջ է ընդգնում աղայական և աշիրապետական բռնության: Ահմադի հետ սիրահարված աղջկան բռնությամբ տալիս են աղային: Եթե մինչև իսկ աղջկա ծնողները մերժեին տալ իրենց աղջկան աղային, վերջինս որպես «զորբա» (զորեղ) կըփախցներ նրան, այն ժամանակ ավելի վատ:

Այս բողբոջն ու պայքարը արտահայտված է նաև «Ջարե» կինո լիբրետոյում, որը գրել է Լազոն (Չակոբ Ղազարյանը): «Ջարե» կինո լիբրետոյում, որտեղ վառ գույներով արտահայտված է քրդերի կյանքն ու կենցաղը, հերոսուհի Ջարեն բողբոջը և բռնության դեմ ուժեղ պայքար տանող քրդուհու մարմնացումն է:

Տարբեր բնույթ էր կրում ամուսնության երրորդ ձևը՝ առեվանգումը, որը շատ էր տարբերվում նախորդ ձևից, այն է գնման ձևից, որտեղ դալանը, այսինքն աղջկա հորը տրված գումարը շատ վճռական դեր էր խաղում:

Աղջիկ առևանգելու սովորությունը շատ հին է և նա շարունակվում էր մինչև վերջին տասնամյակները:

Քրդերի մեջ աղջիկ առևանգելու սովորությունը, որ բավական ամուր պահպանվում էր նաև Անդրկովկասում ապրող քրդերի մեջ մինչև սովետական կարգեր հաստատվելը, մի քանի պատճառներից էր առաջանում, որոնցից գլխավորներն են.

ա) Ցեղերի մեջ գոյություն ունեցող թշնամությունը, երբ մի ցեղ չէր ուզում իր ցեղին պատկանող աղջկան ամուսնության տալ թշնամի ցեղի տղային, եթե աղջիկն ու տղան սիրում էին միմյանց:

բ) Սոցիալական տարբեր խավերի պատկանելու հանգամանքը, երբ օրինակ՝ աղջիկը բեգի, աղայի կամ հարստի զավակ էր, իսկ տղան հովիվ, բանվոր կամ ուսուցիչ. և աղջիկն ու տղան փոխադարձ սիրում էին միմյանց, սակայն աղջկա ծնողները հակառակում էին այդպիսի անհավասար զույգերի ամուսնությանը:

գ) Տղամարդու հասակի և ընտանեկան վիճակի տարբերությունը, երբ նույն ցեղի իշխող խավին պատկանող հասակավորներից մեկը, հենվելով իր ուժի և կարողության վրա, հակա-

¹ Վակի շուշա դըլե մարըվ շկաստ, սախլըն չատընա:

ուակ աղջկա ծնողներին և աղջկա կամբրի ցանկանում էր կնու-
թյան առնել այդ աղջկան:

դ) Ծնողների կողմից աղջկան ատելի մարդու հետ ամուս-
նացնելու հարկադրանքը: Աղջիկը համաձայնում էր իրեն ավելի
ցանկալի կամ սիրելի տղայի հետ փախչել:

ե) Երբ աղջիկն ունենում էր իր սիրած տղան, բայց մի
ուրիշ տղա բռնի փախցնում էր նրան:

զ) Երբ առևանգված կնոջ ամուսինն իր վրեժը լուծելու
համար, նույնպես առևանգում էր առևանգող տղամարդու կնոջը:

Այս բոլոր դեպքերը ամենաձանրը երկու թշնամի ցեղերի
մեջ առևանգման դեպքերն էին: Նրանց մեջ սկսվում էր ավելի
սուբ բնույթ ստանալ վրեժառուցյան դպացմունքը: Հետևանքը
լինում էր այն, որ այդ ցեղերի մեջ թշնամությունը խորանում
էր և առևանգված աղջկա համար, որի փախուստն երբեմն էլ
կուվի պատրվակ էր ծառայում, սկսում էին միմյանց դեմ ավելի
ուժեղ կռիվ մղել և կոտորել իրար: Տեղի էր ունենում մեծ ա-
բյուսահեղություն: Տասնյակ տարիներ տեղդ փոխադարձ թշնա-
մությունը ավելի ևս սաստկանում էր:

Քանի որ աղջիկ առևանգելը սովորական երևույթ էր քըր-
դերի կյանքի մեջ, այդ պատճառով էլ քրդական Ֆոլկլորն այդ
բովանդակությամբ բավական առատ նյութ է պարունակում,
մանավանդ այն դեպքում, երբ առևանգումը տեղի էր ունենում
սիրահարված զույգերի մեջ, այդ արժանանում էր զովասանքի,
բաղամթիվ հուզումնալից և սրտաբուխ երգեր էին հյուսվում՝
անա այդ երգերից մեկը.

«Լո լաո, լո լո լաո,
Լո լաո, լո լո լաո,
Լո, աղա, ինձ փախցրու,
Լո, տղա, ինձ փախցրու,
Յայլա յայլա ման ածիր,
Լո, լաո, ինձ փախցրու:
Տար վերին յայլաները,
Այն յայլաները, որտեղ աղբյուրները շատ են.
Լո, աղա, աղբյուրի մոտ վարդեր քաղենք,
Լո, տղա, լո լո լաո,
Լո, տղա, լո լո լաո»:¹

¹ Կ. Ջաֆարյան և Շ. Ջնդի—Քրդական ժողովրդական երգեր, Երևան, 1936, էջ 124.

Ըստ քրդական հայտնի ասացվածքներից մեկի՝ «կին
փախցնելը աշխարհի սովորություն է» (Ռավա ժնե, աղաթե
դնե):

Քաջ և կտրիճ էր համարվում այն քուրդը, որն ընդունակ
էր առանց վախենալու իր սիրած կնոջը փախցնելու կամ թշնա-
մական յողի վրա առևանգելու: Այսպես կոչված «սարգառունջ-
տանդն» էլ պակաս դեր չէր կատարում քրդական կյանքում:
Սարգառունջտանդն բառացի նշանակում է «մեկի վրա», «մեկի
վզին» նստել, այսինքն իրեն հետ Ֆիդիկապես կապված
տղամարդու տանը նստել իբրև նրա կին: Այսպիսի ամուսնու-
թյուն տեղի էր ունենում այն ժամանակ, երբ քուրդ տղամարդը
քրդուհու հետ սեռական հարաբերություն էր ունենում կամ
նրա ցանկության հակառակ, կամ նրա ցանկությամբ, բայց
եթե հասարակությունը դրա մասին տեղյակ էր դառնում: Կնոջ
համար ստեղծվում էր ավելի ծանր դրություն, եթե քրդուհին
դեռ օրիորդ էր: Փաղտնիքը բացվելու դեպքում սկսում էին
ամեն տեղ խոսել վերոհիշյալ կնոջ կամ աղջկա արարքի մասին:
Այդ խոսակցությունները շատ արագ տարածվում էին գյուղում,
օբյալում:

Այն դեպքում, երբ երիտասարդը հրաժարվում էր սեռա-
կան հարաբերություն ունեցած աղջկա կամ կնոջ հետ ամուսնա-
նալուց, քրդուհուն վիճակվում էր անվերջ դառնություն կրել իր
ընթացակարգի: Այդ դրությունից ազատվելու համար նա երկու
միջոց ուներ՝ կամ ինքնասպանությամբ վերջ տալ իր կյանքին,
կամ գնալ իր հետ սեռական հարաբերություն ունեցող երիտա-
սարդի տունը և ասել—«ես քո կիսնն եմ, ուզում ես սիրիր, ու-
զում ես մի սիրիր, անից դուրս չեմ գա»: Այսպիսի դեպքում,
երբեմն տղամարդը համաձայնում էր և աղջկան կամ կնոջն ըն-
դունում էր իր տունը, երբեմն էլ անից նրան դուրս էր անում.
Իսկ քրդուհուն անից հեռացնելը հեշտ բան չէր, դրա համար
հարկավոր էր մեծ վստահություն իր և իր ազգականների ուժե-
րի վրա: Աղջկա պատվին պաշտպան դուրս էին գալիս նրա
ծնողներն ու մերձավոր ազգականները, երբեմն նաև ամբողջ
տոհմը:

Եթե կնոջ հետ սեռական հարաբերություն ունեցող քուրդ
տղամարդն ամուսնացած էր, այդ դեպքում աղջիկը մնում էր
նրա մոտ իբրև երկրորդ կամ երրորդ կին:

Սարգառունջտանդն ամուսնությունը երբեմն կատարվում

էր աղջկա կամ սիրած կնոջ և տղամարդու փոխադարձ համաձայնութեամբ: Եթե մեկի կինը մեռնում էր կամ տղամարդը ցանկանում էր երկրորդ կին ունենալ, գաղտնի հայտնում էր իր սիրած աղջկան կամ կնոջը, որ ինքը ցանկանում է ամուսնանալ նրա հետ: Եթե աղջիկը կամ կինը համաձայնում էր, հաջորդ օրը նա թողնում էր ծնողներին և գնում սիրած տղամարդու տունը, իսկ եթե կին էր և երեխաներ ուներ, նա թողնում էր կրեխաներին, ամուսնուն ու գնում նոր մարդու մոտ իբրև նրա կինը:

Սարդառունջտանդն հղած դեպքում և առևանգման ժամանակ սովորական հանդիսավոր հարսանիք տեղի չէր ունենում: Շատ-շատ հավաքվում էին աղջկա ծնողների և նրա մտախի բարեկամների ու ծանոթների մի խումբ, եթե իհարկև հաշտութուն էր կայացել երկու կողմերի մեջ: Բայց այս երկու դեպքերում էլ հաշտութունը տեղի էր ունենում միայն մի պայմանով, որ այդ կնոջ փախցնողը զալան վճարի նրա նախկին ամուսնուն, իսկ օրիորդի համար՝ նրա ծնողներին: Այս անհրաժեշտ պայմանը ցույց է տալիս, որ սարգառունջտանդն ամուսնութեան ձևը հիմնված է գնման եղանակի վրա:

Ամուսնութեան հինգերորդ ձևը «բարդելի» է կոչվում: Սա հնագույն ամուսնական ձևերից մեկն է, որը նախորդել է գնման ձևին: Ամուսնութեանը «բարդելի» էր համարվում այն դեպքում, երբ երկու կողմերի ծնողների փոխադարձ համաձայնութեամբ մի ընտանիքի տղան առնում էր իրեն կին մի այլ ընտանիքի աղջկան, իսկ վերջինիս հղբայրը ամուսնանում էր առաջինի քրոջ հետ, այսինքն առանց զալանի կատարվում էր քույրերի փոխանակութուն: Բարդելի ամուսնութեանն ավելի քան ամրացնում է երկու ցեղերի կամ կողմերի բարեկամական ու տնտեսական կապերը:

Ամուսնութեան այս ձևն ավելի քիչ է տարածված: Բարդելի է կոչվում հենց այն աղջիկը, որն այդ ձևով է ամուսնանում: Այսպիսի ամուսնութուն կատարվում է ավելի խաղաղ ճանապարհով, քան վերև հիշված ամուսնութեան մյուս տեսակները:

Այս ձևի ամուսնութունը տեղի էր ունենում սովորաբար անկախ այն բանից, թե աղջիկը սիրում էր փեսացուին թե ոչ, բայց հարսնացուն ուրախ էր լինում, որովհետև նա գիտեր, որ իր եղբոր բարդելին է, որին սիրում է: Ուրախ էին նաև երկու

ընտանիքների ծնողները: Այդ առթիվ քրդական ժողովրդական «Զեր վարդն եմ» երգում քրդուհին հետևյալն է ասում,—

«Հա ձեր վարդն եմ, ձեր վարդն եմ,
 Հա ձեր վարդն եմ, ձեր վարդն եմ,
 Ընտրած կարմիր ցորեն եմ,
 Ընտրած կարմիր ցորեն եմ,
 Ես հղբորս բարդելին եմ,
 Ես հղբորս բարդելին եմ»:¹

«Հասկո վելի» երգում քրդուհին իր նշանվելու օրը «արեվոս է» անվանում, նա համարձակ է արտահայտվում, որովհետև նա իր եղբոր բարդելին է:

«Վելի հա վելի, Հասկո վելի,
 Վելի հա վելի, տղա վելի,
 Վելի հա վելի, Հասկո վելի,
 Հասկ ամուսնացավ, Բասև բարդելի

.
 Ցերեկ է, Հասկո, ցերեկ է,
 Այսօր արևոտ օր է, վելի»:²

Քրդուհին, որ շատ քիչ էր խոսում իր ամուսնու մասին, բարդելի եղած դեպքում ինքն էր շտապում խոսք բաց անել նրա մասին և արտահայտել իր բոլոր զգացմունքները, միաժամանակ մեջ էր բերում իր եղբոր ամուսնութունը: Այս անգամ նա ոչ թե ամոթխածութեամբ, այլ հպարտութեամբ էր խոսում իր մասին, որ ինքն իր եղբոր բարդելին է:

Ամուսնութեան վերոհիշյալ բոլոր ձևերը, բացի բարդելիից, ինչպես ասվեց, կատարվում էր զալանի միջոցով, որովհետև բարդելիներին ուղղակի փոխարինում էին միմյանց հետ առանց նյութական կամ զբամական հատուցման:

Ղալանը, կամ աղջկա գին վճարելը ամենամեծ չարիքներից մեկն է եղել քրդական իրականութեան մեջ, որ դարեր շարունակ գոյութուն է ունեցել և հանդիսացել է քրդուհու ստրկացման ամենահիմնական պատուհաններից մեկը: Նա մշտապես բացասական ազդեցություն է թողել պսակվող գույգերի հույզական աշխարհի վրա:

¹ Տես Հ. Ջնդի և Ա. Ավդալ—Քրդական Ֆոլկլոր, 1936 թ., էջ 456:
 ² Կ. Զախարյան և Հ. Ջնդի—Քրդ. ժող. երգեր, Երևան, 1936 թ. էջ 87:

Քրդական ժողովրդական հայտնի վիպերգության՝ ու «կո-
 Քուլուկե Սլեյմանե Սլեվի»-ի մեջ իր ուզած աղջկա դիմաց Սլե-
 մանե Սլեվին չի ուզում դալան վճարելու համար զրկվել
 սիրած ձիուց՝ Սոսկից, և դալանի համար ուրիշ բան չուեննար
 փախցնում է աղջկան՝ Վարդակա Հասոն Դուզեին: Եվ դրա հ-
 առանքով նրա հարաբերությունները աղջկա ծնողներին հ-
 արվում են:

«Ութսուն երկու ուզտ» երգի մեջ վառ գույներով արտա-
 հայտված է Սիսե անունով աղջկա դալանի անչափ, շատ լինելու
 և դժգոհությունը դրա դեմ:

«Տղա, ութսուն երկու ուզտեր եկան,
 Գնացին Բիթլիս քաղաքը:
 Ուզտերի բեռը մախմուր էր, տղա,
 Գնացին Բիթլիս քաղաքը:
 Սիսիի դալանն էր, տղա,
 Գնացին Բիթլիս քաղաքը,
 Դեհ, Սիսիի դալանն էր, տղա,
 Գնացին Բիթլիս քաղաքը»:

Աղքատ երիտասարդը երկար ժամանակ պետք է սպասել
 փող աշխատեր կամ ոչխար ձեռք բերեր, որպեսզի դալանը վճար-
 րեր: «Բերիվանե» սիրերգի մեջ տղան սիրածին դիմելով՝ իր
 խորին վիշտն է հայտնում, որ ինքն աղքատ է, իր ունեցած
 բավարար չէ նրա դալանը վճարելու:

«Բերիվանե, մութը կընկնի,
 Արի ճրագի մոտ,
 Որբուկ, առանց քեզ անհամբեր եմ:
 Ափսոսում եմ քեզ,
 Ունեցածս քիչ է՝
 Ղալանիդ չի բավարարում»:

Երբեմն երիտասարդները աշխատում էին անընդհատ, որ
 պեսզի կարողանային դալանը լրացնել, այդ առթիվ ժողովրդա-
 կան երգերից մեկում տղան գանգատվելով իր չարքաշ կյանքի
 ասում է.

«Ես վեց տարի աշխատեցի,
 Տասներկու տարի չարչարվեցի»:

Եկա քեզ ուզեմ,
 Մայրդ, հայրդ նազ են անում:
 Մայրդ, հայրդ նազ են անում,
 Նրանք շատ դալան են ուզում:
 Ես վեց տարի աշխատեցի,
 Տասներկու տարի չարչարվեցի»:¹

Սովորություն էր, մինչև նշանված երիտասարդը դալանը
 ար, չէր կարող իր նշանածին հոր անից տանել. որոշ դիջո-
 րություններ կարող էին լինել, բայց դրանք բացառիկ դեպքեր
 էին: Աղջկա կամքը այստեղ բացակայում էր, նա իրավունք
 ուներ դալանի վերաբերյալ հոր հետ խոսելու: Ղալանը չտալու
 ատճառով երբեմն առաջ էր դալիս կռիվ, որովհետև աղջկա
 արը դալանը չտանալու դեպքում իրավունք ուներ իր աղջկա
 դանը վերադարձնել և նշանադրված աղջկան ուրիշի հետ ամուս-
 անել: այս հանգամանքը շատ ծանր կացության մեջ էր դնում
 իրանար երիտասարդին, նա ստիպված էր ակամա կամ աղջկան
 փախցնել, կամ ընդհարվել ծնողներին հետ: Այս բոլորն ունենում
 էր իր բացասական հետևանքները:

Ծանր էր նաև քուրդ աղջկա համար, երբ առանց նրա
 կամքի հաշվի առնելու մեծ դալան ստանալու համար ամուսնացը-
 րում էին նրան ձեռք, բայց ունեւոր տղամարդու հետ, որին նա
 սիրում:

Այդ առթիվ «Ամինա Հասո» երգում աղջիկն անիծելով իր
 ծնողներին ասում է՝

«Հորս ձին սպիտակագույն է,
 Ես մի հարթ վայրում նրան քշել եմ:
 Աստված թող պատժի հորս ու մորս,
 Ինչու ինձ չտվին տասյոթ տարեկան երիտասարդին,
 Որին ես սիրում էի, նրա տունն էլ մեր գյուղումն է,
 Ինձ տվին երկարամորուք ազային:
 Ախ, ես սիրահարված Ամինե եմ, սիրահարված,
 Աղամի աղջիկները՝ ծիծաղեցին բախտիս վրա»:

¹ Արևիվային նյութերից:
² Աղամի աղջիկը—նշանակում է Աղամից և Եվայից սերված աղջիկը:

Աստված թող պատժի հորս ու մորս,
 Ի՞նչու չտվին ինձ իմ սիրած երիտասարդին,
 Այլ դալանի համար տվին ծերուկ ազային»:¹

Այստեղ քրդուհին ակներև կերպով հանդես է գալիս որպես վաճառքի ապրանք, որի կամքը, մարդկային ցանկությունը բոլորովին անտեսվում էր: Այդ է պատճառը, որ քրդուհին գանգատվում և անիծում է իր ծնողներին:

Այն դեպքում, երբ մեծ դալանի համար ծնողներն աղջկան տալիս էին չսիրած մարդուն, աղջիկն ամեն կերպ աշխատում էր ուշացնել իր փոխադրվելը ապագա ամուսնու տունը: «Նշանկրնից» հետո էլ որևէ արգելք էր մեջ բերվում հոր տանն ավելի երկար մնալու համար: «Սիրտս վիրավոր է» երգում աղջիկն ասում է:

«Ախ, սիրտս վիրավոր է, դարդոտ է,
 Հայր, մի ուղարկիր ինձ, մի ուղարկիր,
 Վիրավոր եմ, սիրտս է վիրավոր,
 Դեռ շուտ է, ինձ մի ուղարկիր ամուսնու տուն»:

Նշանված աղջիկը գիտեր, որ իր հայրական տնից գնում է օտար ընտանիք և ըստ սովորության, պետք է ծառայի այդ ընտանիքում, կատարի ամեն տեսակ ծանր աշխատանք, ենթարկվի սկեսուրին, սկեսրարին, տան մյուս ավագ անդամներին և ամուսնու կամքին. նա գիտակցում էր, որ նոր ընտանեկան հարաբերություններում նա պիտի ապրեր նոր վիճակ:

Քրդուհուս մեջ առաջացած այս վիշտը հետևանք է այն բանի, որ անցյալում քիչ էր հաշվի առնվում նրա ցանկությունն ու սերը կամ ատելությունը դեպի այն տղամարդը, որի հետ ամուսնացնում էին նրան. սա խորն արձագանք է գտել քրդական ժողովրդական ստեղծագործությունների մեջ, ուր կարելի է գտնել մարդկային հոգու խոր տառապանք, հուզումներ և սրտակեղ լիրիկական զեղումներ:

Քրդերի մեջ կար նաև մի այլ սովորություն. նկատի ունենալով արյունակցական կապերը ծնողներն աշխատում էին իրենց աղջկան տալ մի մոտիկ ազգականի, օրինակ հորեղբոր տղային, քեռու տղային և այլն: Այս դեպքում պատահում էր,

¹ Ասաց Ահմե Զոլուն:

որ այդ ազգականն հենց աղջկա սրտի ուզածն էր: Առհասարակ քրդուհի աղջիկն էլ երբեմն գերադասում էր, որ ինքը և իր ամուսինը միևնույն ցեղից լինեն: Օր. «Ղուլի» երգում ցայտուն կերպով է արտահայտված մոտ ազգականին (քեռորդուն) անհույս ձգտումը:

Աղջիկն ասում է՝

«Դեհ աման, տան սիրելի տղայի բոյը չինարի ծառի պես է,
 Քեռորդի Ղուլիի բոյը կանաչի է տալիս, թուրքիս

երկրում, աղբյուրի վրա բուսած ծառի պես.

Լո վայ, լո վայ, լո վայ, լո վայ:

Դեհ, աման, թող մուրազ ունեցողները մուրազն
 էլ կատարվի,

Իմ և քեռորդի Ղուլիի մուրազը թող կատարվի
 քրդական աղաթով:

Դեհ, աման, քեռորդի Ղուլիի բեղերը նման
 են թղթի մեջ

Սնամքով պահված մետաքսի,

Լո վայ, լո վայ, լո վայ, լո վայ:

Դեհ, աման, թող իմ ծնողները լավ օր չտեսնեն,
 Ինձ չտվին իմ սիրածին, որին յոթը տարեկան
 հասակից սիրում էի, այլ տվին չսիրած,
 տգեղ, անասունի նման մարդու.

Լե վայ, լե վայ, լե վայ»:

Տոհմատիրական այս սովորությունը մինչև հիմա էլ կարելի է գտնել քրդերի մեջ, որի հետևանքով, թերևս ոչ հաճախ, այնուամենայնիվ, աղջիկն ամուսնության ժամանակ ձգտում է իր ազգակցին գնալ:

Սակայն երբեմն էլ հակառակն է տեղի ունենում, երբ քրդուհին սիրում է օտար տղայի, բայց նրան ամուսնացնում են իր արենակցի հետ: Նա ցավ է հայտնում, որ սրտով սիրածին չի առել, թեկուզ նա լինի հեռու երկրից: Քրդուհուս այս միտքը խորիմաստ կերպով արտահայտված է մի առածի մեջ, ուր ասվում է.

«Թող սիրտը սրտով լինի,
 Թող երկրից հեռու լինի,

Մեջքին մուրացկանութեան տուրակը լինի,
Տոպրակի տակն էլ ծակ լինի»¹

Այս իմաստալից առածը ցույց է տալիս, թե միշտ չէ, որ քրդուհին ցանկացել է իր արենակցի հետ ամուսնանալ:

Աշխարհ տեսած պառաջն էլ միշտ բարի խրատներ է տալիս և նախադրուշացնում է անփորձ աղջկան, որ չսիրած մարդուն չառնի, մանավանդ ձերուհու չգնա:

Քրդական ֆոլկլորը շատ ցայտուն կերպով երևան է հանում աղջկա սերը գեպի աշխատավոր տղամարդը, հովիվը և ընդհակառակը, ատելութունը դեպի շահագործողները՝ աղաները, բեգերը և հարուստները: զբան իբրև ապացույց կարող է ծառայել քրդական «Լուր-դա-լուր» պոեմը, որը մշակել է հայ զբոսի վերջին Փափազյանը, ուր հարուստ աղայի աղջիկ Ջալիսեն սիրում է հովիվ Հասոյին:

Ջալիսեն բուռն սիրով կապված է Հասոյի հետ և աչքը աշտարակին միշտ հետևում է Հասոյի քաղցրահնչուն նվագին:

Հովիվի նկատմամբ աղջկա տածած բուռն սերն արտահայտություն է գտել «Լո, լո, շվանո» (լո, լո, հովիվ) երգի մեջ: Քրդուհին իրեն անբովորին մատաղ է անում հովիվ սիրահարին, նա ասում է.

«Լո, լո, լո, հովիվ,
Լո, լո, լո, հովիվ,
Լո երգիչ, բլուր նվագող,
Լո երգիչ, բլուր նվագող:
Մատներդ դրել ես շվու վրա,
Մատներդ դրել ես շվու վրա:
Յարի գլուխը, լո, գոստի գլուխը,
Յարի գլուխը լո, գոստի գլուխը,
Դոստի գլուխը, լո, մատաղ լինի քեզ,
Դոստի գլուխը, լո, մատաղ լինի քեզ:

Քուրդ աղջկա հուզաշխարհը ցայտուն կերպով արտահայտված է «Լայլի Մեջնուն» ժողովրդական ստեղծագործության մեջ:

¹ Տես Հ. Ջոզի, — «Կառ ու Քուրուկի Սլիմանի Սլիվի», Արմֆան, 1941 թ., Երևան, էջ 47:

Լայլեն սոսիվ և բարի բնավորությամբ մի անսեղ աղջիկ է, նա սիրում է Մեջնունին և ունի լեռնական քրդուհու երկաթե կամք: Աշխարհիս երեսին ոչինչ գոյություն չունի նրա համար բացի Մեջնունից, նա իր հոգու խորութեամբ հետևում է Մեջնունի քաղցրահնչուն և սիրահույզ երգերին, որ երգում է նա դամբուրի ներդաշնակությամբ: Բայց նրա սիրտը ձմրվում է, նա լավ գիտե, որ ծնողները թույլ չեն տա իրեն Մեջնունի հետ ամուսնանալու, դրա համար նա միշտ տկար է զգում իրեն և հիվանդանում: Լայլեն քրդական ստեղծագործության մեջ հանդես է գալիս, որպես ճնշված և աղայական ուժի գեմ բողբոջ քուրդ աղջկա տիպար, որն իր մեջ մարմնացնում է ջանել քրդուհու ամբողջ հուզաշխարհը, իր գաժան կյանքի ողբերգական վիճակում: Չնայած իր և Մեջնունի միջև եղած դասակարգային տարբերությանը, նա, հակառակ այդ բանից բխող արամադրություններին, այնուամենայնիվ, ստնակոխ է ուղղում անել այդ արգելքները և իր զգացմունքներին տալ ազատ ելք և բավարարություն, նա ուղղում է միանալ Մեջնունի հետ: Միայն «Լայլե ու Մեջնուն» ժողովրդական ստեղծագործության մեջ չէ, որ տեսնում ենք քուրդ աղջկա անկեղծ սիրո առջև ծառայող արգելքները և ընտանեկան բռնությունները, դասակարգային խարությունները, հասակի անհամապատասխանությունը, որոնք թույլ չեն տալիս նրան իր ամուսնական կյանքը կարգավորելու սրտի թելադրանքի համաձայն, նույնը գտնում ենք նաև այլ ստեղծագործություններին մեջ, ուր քրդուհին հանդես է գալիս որպես անկեղծ և անդավաճան սիրո նվիրված և այդ սիրո ազատության համար պայքարող:

Այսպիսի ծանր ապրումներ էր ունենում քրդուհին իր կյանքի երկրորդ շրջանում, երբ որոշվում էր, թե ով էր լինելու իր ամուսինը:

3

ՔՐԴՈՒՀԻՆ ԻԲՐԵՎ ՏԱՆ ՀԱՐԱ, ՏԱՆՏԻԿԻՆ ԵՎ ՏԱՆ ՀՈԳԱՏԱՐԸ

1. Քրդական հարսանիքը. — Քուրդ աղջկա հարսնությունը շրջանը սկսվում է այսպես ասած «նաքան»¹ արարողությամբ: Նաքանը

¹ Նաքան — կոչվում է այն արարողությունը, որը նշանդրելի կամ հարսանիքի ընթացքում է կատարվում: Արարողության ժամանակ մի անձնավու- 361 — 17

թեև պաշտոնական «նիշանկերն» (նշան անել), նշանդրեք էր, որը տեղի էր ունենում աղջկա և տղայի ծնողներին, հոգևորականութեան և մերձավոր ազգականների ներկայութեամբ, սակայն այդ արարողութեանից հետո աղջիկն արդեն համարվում էր հարս և մնում էր հոր տանը մինչև հարսանիքը:

Նաքահից հետո կատարվում էր «շիրանին» կամ «շիրնայի», որը պաշտոնական նշանադրութեանից հետո հանդիսավոր խընջույք էր: Ըստ քրդական սովորույթի, նախքան շիրանին, աղջկա ծնողները թշնամութեան կամ այլ պատճառով կարող էին մերժել իրենց աղջկան տալու նշանդրված տղային: Բայց շիրանուց հետո այդ քայլն անթույլատրելի էր: Շիրանին կատարվում էր աղջկա ծնողների տանը, զալանի մի մասը վճարելուց հետո:

Մուսուլման քրդերի մեջ նաքահը շիրանուց հետո են կատարում, այն ժամանակ, երբ փեսայի ծնողները հարսանիքի պատրաստութուն են տեսնում: Նաքահութեան համար աղջիկը երաշխավորում է իր հորը կամ մեծ եղբորը, սրանց բացակայութեան դեպքում հորեղբորը կամ մոտիկ ազգականներից մեկին:

Առանց վերահիշյալ մարդկանց չի թույլատրվում նաքահ արարողութունը կատարել: Մուսուլման քրդերը նաքահութունը կատարում են հետևյալ ձևով. մի մոլլայի և երկու այլ հոգևորականների ներկայութեամբ փեսան և աղջկա հայրը բուրժ մատը մոտեցնում են միմյանց կամ ուղղակի ձեռք են տալիս իրար և մոլլան սկսում է արաբերեն լեզվով արարողութունը կատարել, աղոթել երկու ծաղիկների երջանկութեան համար, որից հետո փեսային իրավունք է վերապահվում ուզած ժամանակ իր հարսնացուի մոտ քնել մինչև հարսանիքի պատրաստութուն տեսնելը:

րութուն իր բուրժ մատը դնում է աղջկա հոր, հայր չլինելու դեպքում՝ հորեղբոր, վերջինս էլ չլինելու դեպքում՝ մոտիկ ազգականի աջ բխամտին: Մի երրորդ անձ կանգնում է աղջկա հոր և տղի ներկայացուցչի մոտ ու ասում, օրինակ, — Թեջրի աղջիկը, անունը Ջոզան, Սեյրանի արգանդում մեծացած, աստու կամքով, Ռատուլ մարգարեի ցանկութեամբ, նաքահով որպես կին, գույգեր դառնալու համար տալիս ես Աթամին (Նորափեսային), Բողոյի որդուն, Լաթիֆիի արգանդում մեծացած, աստու կամքով, Ռատուլ մարգարեի ցանկութեամբ զույգեր դառնան, նաքահով, հրեշտակ Շիրանը իր գրչով գրած, աջ ձեռքով բռնած տալիս ես: Աղջկա հայրը պատասխանում է՝ համաձայն եմ, վերջին բառը լինում է «Փաթահ» (վերջ արարողութեան):

Շիրանին աղջկա և իր ծնողների համար ամենաերջանիկ մոմենտն էր համարվում, մանավանդ, եթե փեսայի ընտրութունը աղջկա սրտով էր լինում:

Շիրանուց հետո աղջկա և տղայի ծնողները կարող էին հարսանիքի պատրաստութունը տեսնել առանց զալանի: Մինչև հարսանիքը աղջկա ծնողները նախօրոք պատրաստում են նրա քաժինքը, որ քրդերը «ջնեզ» են ասում, որը կարող էր լինել հարուստ կամ աղքատ, նայելով աղջկա ծնողների կարողութեանը:

Աղջկա ջնեզն առհասարակ կազմված էր լինում տնային պարագաններից՝ անկողին, մանվածքներ, ոսկեդեղն և արծաթեդեղն դարձեր, տնային կարասի, շոր և այլն: Բացի ջնեզից հարսի համար պատրաստվում էր նաև շքարթը,¹ այսինքն աղջկան տրվող անասունները: Թե ջնեզը և թե շքարթը համարվում են աղջկա անձնական գույքը: Նոր ընտանիքում աճում են անասունները և այդ աճն էլ ավելացվում էր այդ սեփականութեան վրա, որը, եթե աղջիկը հարկազրկված էր լինում վերադառնալ իր հոր տունը կամ այրիանալուց հետո կամ ուրիշ պատճառով ուրիշ մարդու տուն տեղափոխվել, տանում էր իր հետ: Կինը կարող էր այդ սեփականութեան հետ վարվել ըստ յուր կամքի և նա սովորաբար իր այդ գույքը նվիրում էր իր ժառանգներին: Կարող էր հավասար բաժանել նրանց միջև, իսկ եթե մեռնում էր առանց կարգադրութեան, գույքը անցնում էր նրա զավակներին և հավասար կերպով բաժանվում թե՛ տղաների և թե՛ աղջիկների միջև:

Քրդական ընտանիքում ուրիշ ոչ մի կապ այնքան ուժեղ չէ, որքան մոր և իր անմիջական զավակների կապը, դրա համար է, որ սեփականութեան առաջին պտուղը, քրդուհին նվիրում է իր զավակին, զավակ չունենալու դեպքում կինն իրավունք ունի իր ունեցվածքը տալ իր ազգականներին՝ հոր ընտանիքի անդամներին:

Նախօրոք որոշ պատրաստութուն տեսնելուց հետո տեղի էր ունենում քրդուհու հարսանիքը:

Նախ փեսան իր ծնողների համաձայնութեամբ ընտրում էր մի պատվավոր անձնավորութուն, որի ղեկավարութեամբ պետք է կատարվեր հարսանիքը (սարգավազի — հարսանիքի զուլս),

¹ Հարսանիքից հետո, երբ հարսն այցելութեան էր գնում հոր տունը, ծնողներն անասուններ էին նվիրում: Այդ նվերը կոչվում էր շքարթ:

որի հետ փեսի ընտանիքը կապված չէր լինում ազգակցական կապերով: Մարգավազին կամ քավորը սերնդե սերունդ կապվում էր փեսի ընտանիքի հետ և հետագայում ամուսնացողները էլ սարգավազին էր լինում:

Ծնողների հավանությամբ սարգավազին նախօրոք մատնանշում էր «խուանդիրներին» (պատվավոր հարսանքավորներին) և քավորը փեսայի ուղեկցությամբ կամ առանց փեսայի շրջում էր նրանց տները հարսանեկան հանդեսին հրավիրելու համար:

Սովորության համաձայն, հարսին նախքան փեսայի տուն տանելը, քավորը հարսի սիրտը շահելու համար իր տունն էր տանում: Ազջիկն այնտեղ սովորաբար առավոտվանից մնում էր մինչև երեկո (սակավ գեպերում՝ նաև գիշերը), հյուրասիրվում էր սարգավազի բարեկամների և իր հոր ազգականների շրջանում: Եթե սարգավազին թույլ տար իրեն որևէ սեռական կապ ունենալ ազջիկ հետ, դա կճանաչվեր իբրև բարձրագույն անպատվություն և բարոյական պղծություն: Գուցե այս սովորությունը մնացորդ է Ֆեոդալական կարգերի, երբ հարսն առաջին գիշերը նրան էր հանձնվում: Առհասարակ քավորը համարվում էր հարսի մոտիկ բարեկամը. նա երբեք չպետք է մոտանար նրան. հարսանիքից հետո էլ նա մեկ-մեկ պետք է այցելեր հարսին՝ տանելով նրան դանտղան նվերներ:

Այցելություններն ու նվերները քավորի կողմից հոգեկան մեծ բավարարություն և ուրախություն էին պատճառում հացսին. նա այդ այցելության մեջ տեսնում էր հրապարակորեն իրեն ցույց տրվող պատիվ և հարգանք, որով նա բարձրանում էր հասարակության աչքում, այդ է պատճառը, որ հարսը պատրաստ էր իմանալ քավորի ամենափոքր ցանկությունը և անմիջապես ընդառաջ գնալ, ջուր, միրգ հյուրասիրել, սրբիչ հասցնել ձեռները սրբելու և ամեն կերպ ծառայել նրան, մանավանդ հասարակության առաջ իր պատկառանքը ցույց տալ, որ պես իր հարազատ հորը: Քավորը կարող էր երբեմն նաև որոշ աշխատանք հանձնարարել հարսին: Օրինակ՝ իր տան մեջ կանանց օգնել կաթնատնտեսության կամ բրդի մշակման դանազան աշխատանքներ կատարել, քաղի ժամանակ տան իրերը հավաքել:

Այսպիսի իրավունքներ քավորն ունենում էր ոչ միայն

հարսի, այլև նրա ամուսնու տան կրտսեր տղա և աղջիկ անդամների նկատմամբ:

Քավորին ցույց տրվող պատիվն աչքի առաջ ունենալով է, որ բեզերը, ազաները և ցեղի մեջ գիրք ունեցող մարդիկ սիրով իրենց վրա էին վերցնում քավորությունը:

Հարսանիքի օրը, քավորի գլխավորությամբ փեսայի ծնողները, բարեկամները և խուանդիրները նվագաձուները հետ լուսով գնում էին հարսնացուի տունը: Եթե երկու տները չափազանց մոտ էին իրար, ձիավորները երկար պատշյուներ էին գործում, հարսն առած՝ գյուղի մոտերքում ջրից խաղալով, հրացան ձգելով, և ապա դիմում էին տղայի տունը: Այդ նույն ժամանակ տեղի էր ունենում ձիարշավը՝ իգիթների մրցությունը «բալդիե բուկե» (հարսի բարձր) փախցնելու համար: Ըստ սովորության, ով որ հարսի ձեռից բարձր խլեց և շուտ հասցրեց փեսայի դռանը, նա էր համարվում իգիթ. ընկերները աշխատում էին նրանից խլել այդ բարձր և տեղ հասցնել: Հարսին իջեցնում էին փեսայի տան առջև: Մինչև ներս տանելը, փեսայի տանեցիներից մեկը բարձրանում էր տանիքի վրա և ձեռքով բարձր բռնած մրգով զարգարված ծառի մի ճյուղ—«գարա գավե»¹, այդ միջոցին մի կին տան դռան առջև բուկին ձիուց իջեցնելու ժամանակ ձգում էր նրա ոտքերի տակ մի դղալ կամ ափսե: Նորահարսը պիտի կոխ տալով կոտրեր այդ ափսեն կամ դղալը:

Եթե հարսի ոտքերի տակ գցած ափսեն կամ դղալը շարքվեր, այդ նշանակում էր, սեռական հարաբերության ժամանակ փեսան կլիներ այնքան ուժեղ, որ կկարողանար հարսի կուսությունը խախտել, խոհ հարսը կլիներ «շքյաստի» (խոնարհ), զիջող, համեստ, բայց ոչ համառ և պնդերես:

Հարսի այդ տխրության մոմենտին նրան օգնության էր հասնում նրա հարազատ կղբայրը և միթիթարում նրան:

Կարող էր պատահել, որ փեսան նախքան հարսին տուն տանելը զալանը վճարելուց հետո և կամ տուն տանելուց հետո խանդի կամ այլ հողի վրա ծեծեր կամ հայհոյեր և այլ ձևով ձեռք նրան, դարձյալ հարսի առաջին հովանավորողն ու միակ պաշտպանը հանդիսանում էր նրա կղբայրը, այդ է պատճառը,

¹ Գարա-գավե—փեսայի փայտը (պաղատու փայտ)—մազիկ միջոց է, որ փաղե տղան էլ նույնչափ պողատու լինի:

որ քրդուհին երգվում է իր «ասարե բրե մըն» (եղբոր զլխով), «ջանե բրե մըն» (եղբոր ջանով), «դաֆ-դուազա բրե մըն» (եղբոր հարսանիքի դհու-դուռնայով):

Հարսին փեսայի տունը տանելու ժամանակ նրա եղբայրը հետն էր լինում: Եղբայրը ուշի ուշով հետևում էր իր քրոջ որպեսզի հոր անից տանելու, ձի նստելու և թե փեսայի տան դուանը իջեցնելու ժամանակ, թշնամի անձնավորությունները չմոտենան նրան և իրենց չար գիտավորությունները նրա նկատմամբ չկատարեն: Թշնամական գործողությունները փեսայի և հարսի նկատմամբ կատարվում էին մի քանի կերպորևէ պատճառով թշնամացած պատավ կանայք փեսայի առնականությունը կորցնելու համար «գրեղան» (կապելու) միջոցներ էին գործադրում: այն է, երբ հարսը բարձրանում էր ձիով վրա, այդ չար անձնավորությունը վերցնում էր մի փոքրիկ քար և գաղտնի կերպով ասպանդակներից մեկի միջից գցում ներքև, միևնույն ժամանակ աղոթում աստծուն, որ ավյալ քարի հետ միասին գետին ընկնի, ոչնչանա փեսայի առնականութե:

Կամ չարածիտ անձնավորությունը վերցնում էր քիչ գառան բուրդ, բարակ թելով փաթաթելուց հետո թաթախում էր մորթած հավի արյան մեջ և նույն ձևով գցում ձին հեծնելու, կամ նրանից իջնելու ժամանակ նորահարսի ձիու ասպանդակի միջով: Այդ կատարվում էր, որպեսզի նորահարսն իր ցանկությանը չհասած՝ մեռնե: Այդ տեսակետից նորահարս քրդուհու համար մեծ նշանակություն ուներ եղբոր անբաժան լինելը քրոջից՝ մինչև «ռոժա մարկընե» (հարս և փեսայի առագաստի գիշերը):

Ամուսնու առնականությունը կորցնելու զեպքում քրդուհին իրեն համարում էր դժբախտ, որովհետև ամուսինը իրավունք ուներ ամբողջ յոթը տարի իր տան մեջ պահել իր կնոջ և յոթ տարի անցնելուց հետո միայն կնոջն ապատել հոր տուն գնալու և նորից ամուսնանալու համար:

Երբ հարսին բերում էին փեսայի տունը, նույն օրը սկսվում էր հարսանիքի խնջույքը և ուրախությունը ոչխարի մեծ գոմերից մեկում, որտեղ հավաքվում էր գյուղի հասարակչությունը:

Քրդական հարսանեկան ծիսակատարությունների գլխավոր և անհրաժեշտ մասը, որով սրբագործվում է նոր գուշգի մշտա-

կան կապը շուրջպարի (գովանդի) միջոցով, հասարակության կողմից տղայի և աղջկա մի գուշգ կաղմիլը հաստատվում էր, ամրացվում էր և անխախտ դարձվում, ուստի նրանց ամուսնական պարտականությունները ստանում էին օրինական ձևակերպում:

Շուրջպարն առիթ էր ավել բաղձաթիվ երգերի հորինման: Քրդական ֆոլկլորի մեջ, հարսանեկան շուրջպարի երգերը բռնում են խոշոր տեղ, երգվում են նրանք առանց նվագի կամ նվագի դաշնակցությամբ. երբեմն էլ՝ առանց երգելու, այլ միայն նվագածությամբ:

Ահա այդ պարերգներից մեկը.

«Քյալաշո, աբադ գեղեցիկ է,
Իմ աչքերիս վրա ես եկել,
Դու ինձ տապակած աղամբի դարձրիր:
Քյալաշո, ինձ բամբակե թել դարձրիր:
Աչքերիս վրայից եկար:
Դու ինձ թմբած օձ դարձրիր:
Քյալաշո, կամուրջ շինիր,
Տեսակ-տեսակ մարմարից շինիր,
Ուշ է, ինձ ճանապարհ դիր»:²

«Հա բը լայլե» սիրային երգում տղան գիմելով աղջկան ասում է.

«Հեյ, Հայլե, ձեն մի հանիր,
Գիշերը ցուրտ է, դուռը բաց արա,
Ինձ ընդունիր ծոցիդ մեջ,
Երեք գիշեր քեզ մոտ պահիր,
Դու ինձ համար ձեն մի հանիր:
Հեյ Հայլե, այս է լուսինը,
Հայլես Մուստաֆայի աղջիկն է»:²

«Հայրանե» երգի մեջ տղան հետևյալ ձևով է գովում իր սիրած աղջկան.

«Ռեհան, էյ Ռեհան,
Դաշտային նապաստակ ես,

¹ Տես Ն. Ջեզի և Ա. Ավդալ—Քրդական ֆոլկլոր, 1936 թ. Երևան, էջ 466.
² Նույնը:

Ռեհան, էյ Ռեհան,
Ստինքներիցդ լավ հոտ է գալիս:
Ձեռքի վրայի թաշկինակ ես,
Իաշտային նապաստակ ես,
Ստինքներից հոտն անուշ է»¹

Երեկոյան առանձին շքախումբ և դեռլ-գուռնայի նվագա-
ծուկթյամբ նորահարսին տանում էին գոժը, որտեղ հյուրերը կա-
յին հավաքված և բազմաթիվ ճրագների լույսի տակ համա-
չափ շարժումներով պտտվում էր գովանդը:

Քրդուհու համար ամենալավ գվարճուկներն էին մեկն էլ
պարելն է, որը կազմում է նրա ուրախության հիմնական օղակ-
ներից մեկը: Այդ պարը մասամբ էլ նրա համար է, որ նրանք
տղամարդկանց դուր գան: Խմբովին երգելով պարելը ավելի
գուրբալի է, քան դեռլ-գուռնայի նվագածուկթյամբ:

Գովանդը կարող էր տևել մի քանի օր, հարուստներինը եր-
բեմն մինչև յոթ օր: Պարողները ցրվում էին առն և կրկին
վերադառնում. միայն վերջին օրը տան տերը հատուկ ճաշ էր
պատրաստում խուանդիրների, աղջկա ծնողների և մերձավոր
բարեկամների համար:

Ճաշկերույթից հետո տեղի էր ունենում «սաչու» — խուան-
դիրների կողմից նվիրաբերությունը՝ զրամով, անասուններով և
իրերով:

Այս սովորությունը հիշեցնում է հայկական «կանչը», բայց
նրա պես չի կատարվում դեռլու մասնակցությամբ: Հավաք-
վածը տրվում է տղայի տիրոջը: Բաշլղից հետո՝ իրիկունը, նո-
րապակները մտնում էին առագաստ: Առավոտյան ստուգվում
էր նորահարսի կուսությունը:

Թեպետ այս հանգամանքը շատ նվաստացուցիչ և վիրավո-
րական էր հարսի համար, ամբողջ հոգով և ժարմնով հալ ու մաշ
էր լինում նա, բայց և այնպես «աղաթե գներու» (աշխարհի
աղաթն էր), կատարվում էր ամենայն հետևողականությամբ և
մեծ նշանակություն ուներ նրա ապագայի համար:

Կինը դառնում էր ազամարդու սեփականությունը և աղա-
մարդը բծախնդրությամբ հետևում էր, որ կինը մենակ իրեն
պատկանի:

¹ Տես նույնը, էջ 471:

Հարսի կուսությունն ստուգելու համար հրավիրվում էին
փեսայի և հարսի ազգական կանայք, որպես «մեկանս խեր»
(բարի հյուրեր): Փեսայի մայրը կամ տան կանանցից մեկը
հյուրերին ցույց էր տալիս հարսնացվի սպիտակեղևը, աշխինքն,
եթե նրանց վրա արյան հետքեր էին երևում, նրա կույս լի-
նելն ապացուցվում էր, դա հարսի համար մեծ պատիվ էր հա-
մարվում. եկած հյուրերն ուրախանում էին և գովում աղջկան
ու նրա ծնողներին, իսկ եթե նրա կուսությունը խախտված էր
լինում, սկսվում էր այստեղ քրդուհու համար մի նոր կյանք,
կապված մեծ մասամբ նվաստ վիճակի, դառնությունների և վըշ-
տերի հետ, որովհետև աղջկան անպայման ետ էին ուղարկում
ծնողների տունը կամ սպանում:

2. Ծննդաբերությունը և դրա հետ կապված վնասակար սու-
վորությունները. — Մինչև վերջին ժամանակներս ծննդաբերական
սովորությունները ոչ միայն դրված էին անառողջապահիկ պայ-
մանների մեջ, այլ և կապված էին բազմաթիվ սնտոխապաշտա-
կան արարողությունների հետ:

Ծննդկանը գուրկ էր օրեկ և բժշկական օգնությունից, նա
գիժում էր տեղական պիրենների (տատմերների) օգնությանը.
պիրենների այդ օգնությունը երբեմն նրան զերեղման էր տանում:

Երբ քրդուհին առաջին անգամ իմանում էր, որ հղիացել
է, սկեսուրն այդ առթիվ «խաթունա ֆարխան»¹ կերակուր էր
բաժանում հարևաններին. այնուհետև գիժում էին զանազան
«օջախների» օգնության, նաև քոչակներին, զբոսացներին: Այս
բոլորը նրա համար էր, որպեսզի ծննդկանն արու գավակ ու-
նենա և սեեքես չլինի իր ամուսնու և ընտանիքի մյուս անդամ-
ների մոտ: Քիչ գերգաստաններ կարող էին լինել, որտեղ կնոջ
հղիության շրջանը առողջապահիկ պայմաններում գանվեր: Բնու-
թյան գրկում և լեռների լանջերի վրա մեծացած քրդուհին հղի
ժամանակ կատարում էր ամեն տեսակի ծանր աշխատանք թե
տանը և թե գուրսը:

Ծննդաբերությունը երբեմն տեղի էր ունենում քոչի ժամա-
նակ ճանապարհին, այս պատճառով էլ սովորական մականուն է
դարձած «կուռե քոչար» (քոչերի որդի), այսինքն քոչատեղում
ծնված որդի:

¹ Ազատարար կին, որն իբր թե անտեսանելի է, բարի ոգի:

Սարերում, բնության գրկում ծնված տղայի մասին արտահայտութիւնը գտնում ենք «Իսկանդարի Չախուռնան» հեքիաթում: Այդ հեքիաթի մեջ մի հովիվ ամեն օր լեռան լանջին իր սուրուն (հոտն) է արածացնում, նա իր հոտում մի այծ է ունեցել, դա իրենց համագլուղացի մի պառավի այծն է լինում:

Ամեն երեկո, երբ սուրուն գլուղ է մտնում, պառավը տանում է իր այծը գոմի մեջ և ուղում է կթել, բայց այծը կաթ չի ունենում, պառավը դարձանում է, նա դիմում է հովիվին, անիծում է նրան, թե— «շվանո, արեդ խավարի, բա չե՞ս ամաչում, աղքատ եմ, ունեմ, չունեմ մի այծ ունեմ, այն էլ ամեն օր կթում ես, հիմա մի քախ (կավե աման) կաթ չունեմ, որ խմեմ, բա խիղճ չունե՞ս»:

Մյուս օրը հովիվը հետապնդում է պառավի այծին և տեսնում է, որ այծը մտնում է քարերի մեջ և կանգ է առնում. հովիվը մոտենում է այծին, տեսնում է այծն իր ծծերից մեկը դրել է ինչ որ շորերի մեջ փաթաթված երեսայի բերանը, երեսայան ագահությամբ ծծում է այծի կաթը: Հովիվը վերցնում է երեսային և երեկոյան տանում, հանձնում պառավին և ասում է.— «պառավ, անա քեզ մի տղա, քո այծը կթողը սա է, ոչ թե ես»: Պառավը ուրախանալով, հովիվից խլում է տղային և գրկում. «կմեծանա, ինձ կպահի, սրան պետք է լավ պահեմ»,— ասում է պառավն ինքն իրեն:

Մի քանի տարի անցնելուց հետո, երբ տղան արդեն մեծանում է, նրա գլխի վրա ծլում են երկու կոտոշներ, դրա համար պառավը երբեմն «Կոռե քոչարա» մականունով է կանչում Իսկանդարին:

Հղի կնոջ անմիջական պահապանը, ըստ քրդուհու. կարծիքի, հանդիսանում էր խաթունա Փարխանը, որը նաև համարվում էր ծնած երեսայի պահապանը:

Իժվար ծննդաբերության ժամանակ, մանավանդ երբ կինը ուշագնաց էր լինում, տատերը և նրա հետ հողով կանայք գործադրում էին հետևյալ միջոցները.

1. Իիմում էին մուլային, որ աղոթի, «սուրբ դուրանը» կարդա՝ կնոջը ծանր ծննդաբերությունից ազատելու համար:

2. Կանչում էին բարձր ձայն ունեցող մի կնոջ. նա կանչում էր ուշագնաց կնոջ գլխի մոտ, բերանը մոտեցնում էր նրա աջ կամ ձախ ականջին ու բարձր ձայնով կանչում, որպեսզի կինն ուշքի գա: Հետևանքը լինում էր այն, որ երբեմն պատռ-

վում էր ուշագնաց կնոջ ականջի թաղանթը և նա խլանում էր:

3. Եթե այդ միջոցները չէին օգնում, կնոջ մոտ հրացան էին արձակում:

4. Ձի էին բերում հղի կնոջ մոտ և համապատասխան միջոցներ էին գործադրում, որպեսզի ձին խրխնջար և ուշագնաց կինը ուշքի գար:

5. Կնոջ վրա ջուր էին ցանում:

6. Պողպատի կտորներ էին պցում ջրի մեջ:

7. Ուշքի գալու ժամանակ ծամոն էին դնում բերանը և իլիկ տալիս ձեռքը մանելու, որ գործով անարվի և նորից ուշագնաց չլինի: Կնոջ ազատելու համար ազատող պերին կամ տատմերը աղոթում էր աստուծոն «յա խողե, աղ գունաքարըմ, տու վեժնե աղակի» (աստված, ես մեղավոր եմ, դու այս կնոջ ազատես), «յա շամո, վե բիյի ուհմե» (շամո, դու խղճա այս կնոջ): Երբեմն կինն էր կանչում խաթունա Փարխային. «յա խաթունա Փարխա, տու մըն վի դարե տանդ խլազկի» (խաթունա Փարխա, դու ինձ այս նեղ գոնից՝ ազատես) և այլն:

Ծննդյան հետևյալ օրը, եթե նորածինն արու զավակ էր, ամուսնու ցեղակիցները և սրտակից կանայք ծննդկանի համար պատրաստում են մսեղեն կերակուրներ, բերում են մրգեր, իսկ նորածնի համար շորացու և լաթացու կտորեղեն: Քրդուհու հասկացողությամբ ամեն մի մանուկ ուներ իր պահապան հրեշտակը, որը շարունակ սավառնում էր նրա շուրջը և պահպանում նրան: Երբ մանուկը քնում էր, հրեշտակն իբր թե իր թևերը պարզած՝ հսկում էր նրան, իսկ երբ զարթնում էր, հրեշտակը խաղում էր նրա հետ և ուրախացնում նրան: Այս հրեշտակն իբր թե մնում էր երեսայի մոտ մինչև իր ծնողներին և շրջապատող մարդկանց ձանաչելը:

Իրա համար ծննդկանն իր նորածնի օրորոցը օրորելիս միշտ հիշում է հրեշտակներին՝ ասելով «գյալի մեր ու մըլիքատա հուն կոռե մըն խուտյկըն» (հրեշտակներ, դուք պահպանեցեք սրգուս): Կամ «հուն աուլադե մըն ժը ճավե խրավ խուտյկըն» (դուք զավակիս չար աչքից պահպանեցեք): Եվ երբ քրդուհին տեսնում էր, որ իր երեսայան առողջ է ու ախուսյժ, այն

¹ Փոխաբերական մտքով նշանակում է զժվարությունից, ծանր պայմաններէջ:

ժամանակ նա շատ գոհ էր լինում սաստնուց, իր երեխայի պահպան հրեշտակներից և ուրախանում էր:

Ծննդաբերութունից հետո հիվանդացած կամ նոր երեխա ծնած մի այլ կին չէր կարող այցելել ծննդկանին, որովհետև նա կարող էր հիվանդութուն բերել իր հետ, մանավանդ որ քրգերը համոզված էին, որ մեկը կարող է իր երեխայի հիվանդութունը, նրա չքնելը, հաճախակի լաց լինելը տալ մի ուրիշի երեխայի, վերջինի ծնվելու «չլրայի» (քառասունքի) շրջանում: Չար աչքից նորածին երեխային պահպանելու նպատակով մայրը դադարեց, իր մտքում տալիս էր բարի հրեշտակների անունները և երեխայի օրորոցի վրա կապում էր զանազան հուլունքներ, երկաթի փոքրիկ կտորներ և գայլի ոսկորներ: Նախապաշարված քրգուհու կարծիքով չարքերը վախենում են այդ առարկաներից և չեն մոտենում մանկան օրորոցին:

Ծննդկանը դեռ չլրան չլրացրած, երբ նկատում էր, որ իր երեխան վատ է գզում իրեն, չէր լողացնում: Նախապաշարումով տարված քրգուհին կարծում էր, որ չարքեր են մտել ջրի մեջ և նորածին երեխային լողացնելիս նրանք զանազան տեսակի ֆլասաներ են պատճառում նրան: Դրա համար երբեմն շարաթնեբով, ամիսներով խեղճ երեխան ֆնում էր կեղտի մեջ ու լաց լինում շարունակ:

Ծննդկանը մինչև քառասուն օր պետք էր իրեն պահպաներ չարքերից և անընդհատ զբաղվեր նորածնի հոգսով: Նա պետք է ֆնար տան մեջ փակված, ոչ ոքի երես չտեսներ, բացի այցելողներից, և միայն քառասունումեկերբորդ օրը նա կարող էր դուրս գալ իր փակված վիճակից: Բավական համարելով վերսիշյալ տեղեկութունները քրգուհու ծննդաբերության մասին, ավելորդ ենք համարում այստեղ մի առ մի հիշել այն բազմաթիվ անտիտալալալութուններն ու նախապաշարումների օրինակները, որոնք ապացուցում են, թե ինչ խոր արժատներով էր բռն գրել ժողովրդի կրոնական հավատալիքների մեջ չար ուղիների գաղափարը, որի հետևանքով մեծ ֆլասաներ էր հասնում նորածին երեխաներին և դրա հետ վշտանում քրգուհի մայրը:

3. Քրգուհին որպես տան աշխատավոր:—Քրգուհին ամուսնու տունը տեղափոխվելու ժամանակ հանդես է գալիս ոչ միայն որպես հարս և ծննդաբերող, որի շնորհիվ պետք է սերունդը շարունակվի, այլ նաև որպես տան հոգատար, տան աշխատող: Աղջիկը հոր տանը երբեմն նազով էր աշխատանք անում, հիմա

նա պատասխանատու է տան նյութական հոգսերի և երեխաների դաստիարակության համար:

Աշխատավոր ընտանիքի անդամները միշտ էլ սիրել են աշխատանք՝ աշխատանքը համարելով իրենց գոյության ամենագլխավոր միջոցը. օրինակ.

«Զբարա» (բուրդ գլող) երգում քրգուհին գովում է իր հարսին միայն նրա համար, որ նա գիտե լավ գլել բուրդը:

«Զբարա, հա դբարա,
Հարսս դբարա է,
Լավ է գլում մեր բուրդը,
Սկեսուրը մատաղ լինի դբարային»:

«Կավանիա մա» (մեր անտեսուհին) երգում գովասանքի է արժանանում անտեսուհին, որը

«Տուն է մաքրում, ոչխար կթում նա ամեն օր,
Յուղ է հանում, խնոցի է հարում նա,
Տնտեսուհին, մեր անտեսուհին է,
Թշերը կարմիր են՝ մեր անտեսուհու,
Առավոտ շուտ անասուններն է դուրս տանում,
Շեմք ու գոները մաքրում:
Տնտեսուհին, մեր անտեսուհին է,
Թշերը կարմիր են՝ մեր անտեսուհու:
Ամուսնը կալի փոշին երեսին է,
Բանվորների ճաշն է պատրաստում,
Նա մեր աչքերի լույսն է,
Թշերը կարմիր են՝ մեր անտեսուհու»:

4. Քրգուհին որպես տան հարս:—Չանել քրգուհին գովարանվում էր նրա համար, որ համեստ էր, աշխատասեր էր և հեղ, դա ապացուցվում էր նաև նրա չխոսկանությամբ, որը անշուշտ հարսի համար ստեղծում էր հաճախակի ծանր և նվաստացուցիչ կացություն:

Ըստ սովորության, Չանել հարսը տան քիչ-շատ մեծահասակ կանանց մոտ խոսելու իրավունք չուներ, մանավանդ սղամարդկանց հետ: Քրգուհին ամուսնու ներկայությամբ իրավունք չուներ օտար տղամարդու հետ խոսելու: Հարսանիքից հետո հարսը տան մեջ, մինչև կավանի գառնալը, չխոսկանության

պատճառով իր մտքերն ու ցանկություններն արտահայտում էր շարժումներով:

Քրդուհին իբրև հարս տարիներ շարունակ պետք է իր սկեսրոջ և սկեսրայրի հետ չխոսեր: Միայն մի դեպք կարող էր խախտել նահապետական այս սովորությունը, երբ սկեսուրը մեռներ և տան ներքին գործերն ընկնեին մեծ հարսի վրա, այդ դեպքում մեծ հարսն իրավունք էր ստանում խոսելու սկեսրայրի հետ, որպեսզի կարողանար նրա համաձայնաբերությամբ տան գործերը դեկավարել, խնամել երեխաներին:

Քրդուհին պարտավոր էր իր ամուսնու, սկեսրայրի և սկեսուրի պատիվը բարձր պահել իր շրջապատի մեջ: Ի նշան հարգանքի, քրդուհին ձեռնակներին անվանում է «ափո» (հորեղբայր), «խալո» (քեռի), «բավո» (հայր) և այլն:

Քրդուհին իրեն երջանիկ էր զգում այն ժամանակ, երբ սկեսրայր և սկեսուր չէր ունենում, այս դեպքում տան մեջ նա իրեն ազատ էր զգում և կարող էր իր ամուսնու հետ խոսել, ուրախանալ, զվարճանալ:

Ինք բավական չէր չխոսկանությունը, ճաշի ժամանակ նա ետ էր քաշվում մի անկյուն, մինչև սկեսուրն ու սկեսրայրը ուտեին, վերջացնեին և ապա հարսը նոր միայն պետք է ճաշեր, այն էլ այնպես, որ սկեսուրն ու սկեսրայրը և տան մյուս այր մարդիկ չտեսնեին նրա ճաշելը: Կնոջ նվաստ այս վիճակը քրդական նահապետական ընտանիքում քրդուհու համար անտանիքի էր:

Քրդական ժողովրդական բանահյուսության մեջ կարելի է գտնել բազմաթիվ երգեր, որոնց մեջ նկարագրված է քրդուհու այս նվաստ վիճակը և նրա բողոքն այդ կյանքի դեմ:

Ահա թե ինչ է ասում հարսը սկեսրայրի մասին.

«Դու սկեսրայր ես, քեզ հետ չեմ խոսում,
ես ձեռքի վրայի թաշկինակ եմ:¹
Հաց ես ուղում, հաց բերեմ, չեմ խոսում,
լսում եմ քեզ, քեզ հետ չեմ խոսում,
Քո հարսն եմ, վիրավոր եմ, չեմ խոսում,
Սկեսրայրս ես, քո առաջ չեմ խոսում,
Քո պատճառով ոչ ուտում եմ, ոչ խմում,
Չարջարվում եմ, անհանդիստ եմ, չեմ խոսում:

¹ Ձեռքի վրայի թաշկինակ եմ—քրդերենում ոճ է, նշանակում է՝ հնազանդ եմ:

Սկեսուրն ու սկեսրայրը իրավունք ունեին իրենց ցանկության համեմատ վերաբերվել իրենց հարսին, բարկության մասին նրանք կարող էին մինչև անդամ ձեռնել, թքել նրա վրա, նրա երեսը մրել ու հոր ատուն ուղարկել, առանց ամուսնու դիտության, որովհետև քրդական նահապետական ընտանիքում ընտանիքի ամբողջ կառավարությունը գտնվում էր սկեսրայրի, իսկ ներքին գործերը՝ սկեսրոջ ձեռքում: Տան բոլոր անդամների՝ հարսների, որդիների, թոռների, եղբայրների վաստակը տան ավագին էր հանձնվում և միմիայն նրա համաձայնությամբ էր ծախսվում տան կարիքների վրա:

Ահա թե ինչու հարսը պարտավոր էր ենթարկվել նրանց, լուռ ու մունջ կատարել այն ամենը, ինչ որ պահանջում էին սկեսուրն ու սկեսրայրը, տվյալ ընտանիքի հայրն ու մայրը:

Անցյալում քրդական ընտանեկան կյանքում գոյություն ունեցող այսպիսի ասած ավագության կարգը, որը նույնպես նվաստացուցիչ պայմաններ էր ստեղծում քրդուհու համար: Ընտանիքում իշխանությունն անցնում էր հաջորդաբար տարիքով ավագ անդամին և ամեն բանում առավելությունը տրվում էր նրան. այսպիսի օրինակ, երբ ընտանիքի անդամները հավաքվում էին տանը, միշտ ավագության կարգով էին նստում օջախի մոտ՝ նախ տան մեծը, սրա մոտ նրանից կրտսերը: Հաց ուտելիս նույն կարգն էր պահպանվում, երբ հասակավորներից մեկը ներս էր մտնում, նրանից կրտսերը ոտքի էր կանգնում՝ իրենից մեծին տեղ տալու համար: Ավագների ներկայությամբ կրտսերները խոհեմություն էին համարում լուրթյուն պահպանել, մեկի հետ խոսելիս նախ ավագը պետք է խոսեր, վերջացներ, ապա կրտսերը:

Ամուսինն ընտանիքի մյուս անդամների ներկայությամբ պետք է ցույց տար սառն ու անտարբեր վերաբերմունք նորեկ հարսին՝ իր կնոջը, թեպետ սրտանց սիրելիս լինեք նրան:

Ամուսիններն ընտանիքի անդամների և այլոց ներկայությամբ միմյանց անունը չէին տալիս. սովորաբար, թե ընտանիքում և թե դրսում ամուսնու մասին խոսելիս քրդուհին նրա անունը ասելու փոխարեն, գործածում է նրա գերանունը: Նա ասում էր «տու» (նա), իսկ նրան կանչելու համար, բացառապես չում էր՝ «կուտո» (աղա): Նույն ձևով ամուսինն էր վարվում իր կնոջ հետ, նա նույնպես կնոջ անունը չէր տալիս և կանչելու դեպքում ասում էր «կյաճե» (աղջի):

5. Քրդուհու բարոյական վիճակը:— Քրդուհին հալատարիմ է իր ամուսնուն և հաղվագեպ է գտնել մի քրդուհի, որի կուսու-թյունը խախտված լինի մինչև իր ամուսնությունը: Եթե ամուսինը համոզվում էր իր կնոջ անբարոյականության մեջ և եթե սպանության չէր դիմում, նա «զաստ սար հըլզըզա» էր անում (ձեռքը վրայից վերցնում էր), այն է, վնասում էր տանից: Կի-նը կամ գնում էր ծնողների մոտ, կամ տեղափոխվում էր այն մարդու տունը, որն իր հետ սեռական հարաբերություն էր ունեցել, այսինքն դիմում էր սարգառունշտանգնին: Նախկին ամուսինը երկրորդ անգամ ամուսնանալու ղեպքում, դալանը, սովորույթի իրավունքով, վերադարձնում էր աղջկա ծնողներին:

Եթե տղամարդն էր գովաճանում, հասարակությունը ավելի ներողամիտ էր վերաբերվում նրան, կինը հաճախ հաշտվում էր այդ բանի հետ, իսկ երբեմն էլ թողնում էր ամուսնու տունը և հեռանում: Բացի գովաճանության ղեպքերից, երկու ամուսինների հարաբերությունները սրվում էին նաև այն պատճառով, որ կինը ոչ թե տղա, այլ շարունակ աղջիկ գովակներ էր ունենում, այդ պատճառով նրան անվանում էին «բեխեր» (անօգուտ, անպետք), զրա համար էլ կինը շարունակ ազաչում էր աստծուն, որպեսզի տղա տա իրեն, «խոււաղե տու կոււ բըզէր մըն» (աստված, դու տղա պարգևես ինձ):

Ամուսինների մեջ որևէ պատճառով անհամաձայնություններ ծագած ժամանակ, սովորաբար առաջինը, որը խառնվում էր նրանց գործերի մեջ՝ լինում էր կնոջ եղբայրը, որն այս ղեպքում էլ պաշտպան էր կանգնում իր քրոջը:

Քրդական նահապետական ընտանիքում ամուսնական կապերը ժշտական էին, անխախտ, ցմահ: Այս կապերը բնականաբար կարող էին խանգարվել միայն կնոջ անբարոյականության կամ տղամարդու առնականությունից զուրկ լինելու ղեպքում:

Երկրոր ժամանակ ամուսնու առնականության վերականգնումանը սպասող քրդուհին անհամբեր էր դառնում, այդ պատճառով էլ նա ըմբոստանում էր, ամեն կերպ իր արհամարհանքն էր ցույց տալիս ղեպի իր ամուսինը, նրա և ամուսնու միջև առաջ էր գալիս կոիվ, հետևանքը լինում էր այն, որ եթե քրդուհին սիրահարված չէր լինում մի այլ տղամարդու հետ և նրա հետ չէր փախչում, գնում էր հոր տուն և այլևս չէր վերադառնում ամուսնու մոտ: Իայց զրանով կինը բոլորովին չէր ազատվում իր ամուսնու կապերից, ընդհակառակը, շարունակում էր մնալ

իր ամուսնու իրավասության տակ և իրավունք չուներ ամուսնանալ մինչև որ ամուսինը «զաստ սար հըլնանգան» (ձեռք չբաշխ նրանից): Տղամարդը կարող էր նրան հոր տնից ետ պահանջել:

«Դաստ սար հըլնանգան»-ը կատարվում էր հետևյալ ձևով, կնոջից հրաժարվելու մասին տղամարդը հայանում էր երկու հոգևորականների կամ պատվավոր տղամարդկանց: Տղայի ծնողները կարող էին ներկա չլինել: Ամուսինը «զաստ սար հըլնանգան»-ի ղեպքում, իր կնոջն անմիջապես չէր ազատում, այլ նա իրավունք ուներ զալանը ինքը վերցնել նոր ամուսնուց, նույնիսկ կրկնակի չափով: Քրդերի մեջ վրեժառույթյան, սպանության ղեպքերի մեծ մասը կատարվում էր կնոջ փախուստի և անբարոյականության հողի վրա:

6. Հարսի և տեղերի փոխադարձ հարաբերությամբը քրդական ընտանիքում: Հետաքրքիր է քրդուհու և նրա ամուսնու եղբայրների (տեղերի) փոխհարաբերությունը քրդական ընտանիկան կյանքում:

Առհասարակ հարսը հանուն պատվի, չէր խոսում տեղերի հետ, բայց այդ չխոսկանությունը երկար չէր տևում, հարսը ընտանիքի մյուս անդամների համեմատությամբ ավելի շատ սկսում էր խոսել կրտսեր տեղերի հետ, իսկ մեծ տեղերի հետ ավելի ուշ: Ամուսնու կենդանության ժամանակ հաճախ քրդուհու միակ ուրախությունը, եղբորից հետո տեղին էր, որին նա պատմում էր իր ցանկությունները, իր գանգատները և այլն, ինչ որ ուրիշ ղեպքերում նա պահում էր իր մեջ:

Ըստ սովորության, տղամարդու մահվանից հետո նրա կնոջ հետ առաջին հերթին իրավունքով կարող էր ամուսնանալ մեռածի եղբայրը (լեվիրատ իրավունք):¹ Տեղը, որը մինչև այդ եղբոր կնոջ վրա նայում էր որպես իր հարսի, քրոջ և երբեմն նրան «բույր» կամ «մայր» անուններով էր օրհանում, եղբոր մահվանից հետո տիրում էր նրան որպես իր կնոջ՝ առանց վերջինիս համաձայնությունը հաշի առնելու:

Կինը կարող էր փոքրահասակ լինել, իսկ տեղը մեծահասակ և ընդհակառակ, այդ հանգամանքն առանձին նշանակություն չունեի և սա օրինական իրավունքի ուժ ունի քրդական ընտանիկան պայմաններում:

¹ Այս իրավունքը պատկանում էր նախ ավագ տեղերին, նրա հրաժարվելու ղեպքում հանձնում էր ավելի փոքր եղբայրներին

Այս հանդամանքը ճնշում էր դնում քրդուհու ազատ կամ-
քի վրա, ավելացնում էր նրա թախիծը և նոր ավելի ծանր լուծ
դնում նրա վրա: Քրդուհին լսելյայն համակերպվում էր այդ պայ-
մաններին, որը բարձրի տեսակետից թուլատրելի էր համար-
վում. նա այսպիսի ամուսնական կապերի ավելի էր համաձայն-
վում, երբ երեխաներ էր ունենում: Այս սովորութունը խմբակցա-
կան ամուսնության ժամանակաշրջանի բարձրի մնացորդն է,
որ մինչև վերջերս էլ գոյություն ունեւր քուրդ ժողովրդի մեջ:
Ընդհանրապես երեխա ունեցող կնոջ համար դժվար էր
թողնել այն ընտանիքը, որտեղ արդեն նա երեխաների մայրն
էր, նույնիսկ այն դեպքերում, երբ ամուսինը չսիրած մեկն էր:
Նա երեխաների պատճառով ստիպված էր լինում նրանց ապա-
գայի մասին մտածել և համակերպվել պայմաններին: Մահայն,
դեպքեր էին լինում, երբ քրդուհին չէր համակերպվում այդ
վիճակին, ուզում էր երեխաներին թողնել և հեռանալ այդ մալա
բխերից, իսկ ծնողները շատ անգամ համամիտ էին լինում այդ
քայլին:

Եթե լեվիրատը կարելի է նկատել որպես մի այնպիսի հա-
յարակական վիճակ, որը գուցե որդվում է մայրիշխանությունից
դեպի հայրիշխանություն անցնող փուլի հետ, քրդուհու բողոքն
այդ լեվիրատի դեմ կարելի է նկատել որպես ընդհանրապես
նրա բողոքը մայրիշխանության ժամանակ իր ունեցած արտո-
նությունների վերացման դեմ:

Քրդուհին մինչև այժմ պահպանել է մայրիշխանական ան-
կախ և ազատ կյանքի հիշողությունը: Քրդուհիների մեջ սովորա-
կան ասացվածք է «խազլ վի վախտի, կը ժնա փաթշատի կրիյա»
(երանի այն ժամանակ, որ կանայք են թագավորել):

7. Բրդառիկն որպես հետի: Տղամարդիկ իրավունք ունենին
մի քանի կին ունենալու, մի տղամարդու մի քանի կանայք
միմյանց նկատմամբ հեռու են կոչվում:

Հեռ լինելու սովորությունը մեծ անախորժությունների
առիթ է տալիս քրդական ընտանեկան հարաբերություննե-
րում: Շատ անգամ քրդուհիների մեջ առաջ են գալիս առօրյա
խնդիրների շուրջը բազմաթիվ կռիվներ, նախանձ, ատելություն,
երբեմն էլ սուր ու դժբոց:

Եթե փեսան սիրում է մի կնոջ ծնողներին, մյուս կնոջ
մեջ ատելություն է առաջ գալիս հանդեպ իր ամուսնուն: Եթե
տղամարդը աշխատանքի համար հաճախակի կանչում է իր կա-

նանցից մեկն ու մեկին, այդ կինը նույնպես ատում է նրան,
թե ինչու էր ամուսինը հավասար աչքով չի նայում երկու վրա:

Հեռու վիճակն անտանելի էր քրդուհու համար: Հեռուներից
ամեն մեկը հալածանքում էր իր գեղեցկուժյամբ և ուզում էր
ամուսնու մոտ մյուս բոլոր հեռուներից ավելի սիրված լինել,
մյուսն աշխատում էր իր աշխատասիրությամբ աչքի ընկնել,
երբորդն իր ցեղային «բարձր» հատկություններով:

Քրդուհին մեծ մասամբ դեմ է եղել հեռությանը, բայց
ծնողները, ցեղակիցները, ամուսինը, ստիպել են նրան զանազ
սարկուհի:

«Դարդո» երգում առաջին կինը գանգատվում և անիծում
է ամուսնուն նրա համար, որ նա հեռու (երկրորդ կին) է բե-
ռել. ահա թե ինչ է ասում նա.

«Լսել եմ, ինձանից հետո մի կին էլ ես բերել,
թե որ ինձնից լավ է, շնորհավոր լինի,
Եթե ինձնից վատ է, թող ցափն ու գրողը գա,
Ընկնի հորդ տուն՝ ամեն տարի՝
Գոմում մնա միայն մի մողի,
Հուրից մնա միայն մի խոյ,
Երնխաներից մնա միայն մի ծծկեր,
Նա էլ քաղցած պայլը գա տանի:
Վայ լե, լե, վայ լե, լե»:

Հեռությունը դարեր շարունակ ընկճել է քրդուհուն ու
րկել նրան մարդկային նուրբ զգացմունքներից, դարձրել նրան
լսոտ ու թախժոտ և ստոր ինչ որ արարած իր տիրոջ՝ ամուս-
նու ձեռքում:

Հեռությունը վերջ տրվեց սովետական կարգերը մեզ մոտ
աստատվելուց հետո և զրա հետ միասին վերջ տրվեց կնոջ
տիրն, անտանելի հարեմից չտարբերվող այդ վիճակին:

8. Այրի քրդառու վիճակը: Մի քանի խոսք ամուսնաթող և
յրի կնոջ վիճակի մասին: Քուրդ տղամարդն առհասարակ ա-
նց որևէ լուրջ պատճառի չէր բաժանվում կնոջից: Կինը
խոք է լինեւր անբարոյական կամ չբեր, որպեսզի նա արձակեր
ան. այլապես նրանից բաժանվելը դժվար էր, քանի որ դա-
ն էր վճարել նրա համար: Պատահել են դեպքեր, երբ քուրդ
ղամարդը խանդի հողի վրա շատ անգամ գաժան վերաբերմունք
յուրյց տվել դեպի իր կինը, նրան հաճախ ծեծի է ենթարկել,

ստեղծվել է մի այնպիսի վիճակ, երբ կնոջ համար փրկութիւն միակ միջոցը եղել է իր ամուսնուց բաժանվելը:

Ամուսնուց հեռանալուց հետո, կնոջ համար ստեղծվում է անտանելի դրութիւն: Նախ նա գովարությամբ կարող էր կրկին ամուսնանալ ուրիշի հետ, որովհետև նա իր վրա կրում էր անբարոյական կամ «բեղութաթ» (չքեր) ժականուէնները: մյուս կողմից նա ծնողների և օղակականների մոտ անգարիկն ճշդված էր զգում, նրանք երբեմն արհամարհանքով կ'անայում նրան: Այրի քրդուհին վատ էր զգում իրեն, և մյուս հարաները մի փոքր խեթ աչքով էին նայում և մանկավանդ նրա զավակներին: Այդ հողի վրա առաջանում էին ներքին համաձայնութիւններ, նախանձ և պայքար, որոնք վրդովեցնէին ընտանիքի խաղաղութիւնը:

Երեխա ունեցող այրի քրդուհին վերջին պայմաններն հետ ստիպված էր համակերպվել, որովհետև ուրիշի հետ ամուսնանալու դեպքում, ըստ քրդական սովորութեան, քրդուհին իրավունք չուներ իր երեխաներին հետը տանել: Երեխաներն այն ընտանիքի զավակներն էին համարվում, որի անգամն էր նրան հայրը, հետևապես երեխաները պատկանում էին ընտանիքին ոչ ոք իրավունք չուներ նրանց հայրական օջախից հեռանելու:

Երբեմն էլ պատահում էին այրի կանայք, որոնք մի վերջ չէին մնում, իրենց երեխաներին մի քիչ մեծացնելուց հետո ամուսնանում էին: Իսկ այն դեպքում, երբ այրի կինը մեկն աշխատող էր ընտանիքում, միայն ինքն էր իր երեխան հետ միասին, նրա համար ավելի ծանր դրութիւն էր ստեղծվում: Ինչ որ մի ժամանակ ամուսինն էր անում, հիմա պետք է աներ այրի կինը: Ընտանեկան բոլոր հոգսերը պետք է հոգար, նա պետք է աշխատավոր ձեռքեր ճարեր արտը ցատու, քաղելու, բերքը կախելու համար, միջոցները, բացառութեան պատճառով երբեմն այդ աշխատանքների մի մասը էր կատարում: Նրա ունեցվածքին որևէ փաստ պատահելու, ինքը պետք է գնար ազային, ռիսպիին (տանուտերին) գանգով վելու, դատավորի առաջ կանգնելու, հարկեր տալու: Իսկ սեղ ընկնելու ժամանակ այրի կինը ստիպված էր ինքը մի մտել, խնդրել, պահանջել:

«Իբրդե գըլե մըն» (սրտիս դարդը) երգում քրդուհին ի

արդատ է անվանում, նա զգում է, որ իր ամուսինը պետք է իրենից ձեռք քաշի, նա վշտացած ասում է՝

«Նա մեծ դարդ ունեմ,
Բարձս քար է, ներքնակա գետին.
Շեխերի և մուլաների մոտ
Ամուսինս երգվել է,
Նա ինձ պիտի թողնի»:

Հարսներն էլ օգտագործելով տղամարդկանց դերը քրդական ընտանիքում, գրգռում էին իրենց ամուսիններին, իրենք ձգտում էին ընտանիքի ներքին գործերն առնել իրենց ձեռքը. այսպիսով այրի կինը զրկվում էր ընտանեկան իրավունքներից և նսեմանում:

9. Նորահարս ֆրդուհին: Նորահարս քրդուհին իր ամուսնու անն ընդհանրապես գտնվում էր ավելի ենթակա կացութեան մեջ, քան իր ծնողների տանն ալջիկ ժամանակ: Իր հայրակոնանը նա նկատվում էր դեռ որպես ընտանիքի ժամանակավոր նրամ և չէր ծանրաբեռնվում բարդ պարտականութիւններով: Իր ընտանիքում նա դառնում էր մշտական և պատասխանատու անակից թե՛ նյութական և թե՛ հասարակական գիրքի համար: Այն կոչված էր թե՛ ընտանիքի ներսում աշխատանքի արդյունավորութիւնը բարձր աստիճանի վրա դնելու և թե՛ դուրան տանիքի անվան համար պատվավոր տեղ զբաղելու:

Քրդուհուց պահանջվում էր մեծ աշխրջութիւն և ուշաուրթիւն, մանավանդ, երբ իրենց տունը հյուր էր գալիս. իսկ լղպիսի դեպքեր կրկնվում էին բավականին հաճախ, որովհետև քրդերի գյուղերի և միևնույն գյուղի տների միջև փոխարձ այցելութիւններ լինում էին շատ հաճախ: Հյուրասիրութիւնը քրդական աշխարհում բարձրագոյն անխախտելի պահանջ է:

Հյուր եկող ծանոթ թե՛ անծանոթ մարդու ընդունելով պես «մեվանե խողե» (աստու հյուր) կամ նրա հավանութիւնը վայելող մեկը, քուրդն ամեն կերպ աշխատում էր լավ դրուներութիւն ցույց տալ. այս դեպքում հյուրին ծառայելու խաղձը պարտականութիւնն ընկնում էր տան տիկնոջ կամ ընտանիքի վրա, նրանք հյուրի համար պատրաստում էին դա-

1 ՀՍՍՌ-ի Պետ. Պատմ. թանգարանի արխիվային նյութերից:

նազան տեսակի լավ կերակուրներ, մինևույն ժամանակ տանջանել հարսը պարտավոր էր լվանալ հյուրի ոտքերը:

Ձանել հարսը պարտավոր էր հյուրի անկողինը գցել նրա վերնագլխատը հանել պառկեցնել, մարմինը վերմակով ծածկել և ապա հեռանալ: Այս բոլորը կատարվում էր մեծ լըջուկում և խորհրդավորութամբ:

Քրդական իրականության մեջ նման մեծարանքի մեթոդով հյուրի կողմից վիշտ էր պատճառում թե տան տիրոջ և թե տան կանանց, որոնց համար պատիվ էր համարվում այս կամ այն ծառայությունը մատուցել ծանոթ թե անծանոթ հյուրի: Սկեսուրը պարծենում էր իր այն հարսով, որը հյուրին պատվավոր և արժանի կերպով ընդունել գիտեր և այսպիսով տան անունը բարձր էր պահում: «Բուկ» (հարս) երգում սկեսուրը փաղաքշելով գովում է իր հարսին, որ ժիր է, լվանում է եկած հյուրի ոտքերը, ահա թե ինչ է ստում նա.

«Հարսս հասակով բարձր է,
Աչքերը գեղեցիկ են, շեկլիկ է,
Սկեսուրը մատաղ լինի այս հարսին,
Լվանում է ոտքերը տան հյուրին»:

Մանավանդ սիրելի հյուր է քավորը և նա առանձին ջերմ գլխացուցով է ընդունվում. «Սարդավատի» երգում ասվում է.

Առաջը դրեք տապակած հավ,
Հարսը մոտն է, ձեռքի տակն է,¹
Ոտքն է լվանում, ձեռքի տակն է:

10. Քրդուհին որպես ամազոնուհի: Միշտ չէ, որ քրդուհին կնթարկվել է հալածանքի, եղել է կամազուրկ՝ ամուսնու և տան մյուս անդամների շրջապատում: Քոչվորական կյանքի պայմանները ստիպել են ճանաչել քրդուհու ազատության մի շարք արտահայտությունները, որոնք օրինակնացվել են սովորութային օրենքներով, ուստի և նահապետական կյանքում ապրող այլ ցեղերի և ժողովուրդների համեմատութամբ քուրդ կինը ազատություն վայելողի համբավ է վաստակել:

Քուրդ կնոջ ազատ լինելու գծերը ընտանեկան կյանքում

¹ Ձեռքի տակն է—ոճ է, նշանակում է, պատրաստ է ամեն անու ծառայություններ կատարելու:

ցայտուն կերպով արտահայտված է ժողովրդական բանահյուսության մեջ:

Վեպերի և հեքիաթների մեջ կինը հանդես է գալիս որպես տիրապետող, ուժեղ կամքի տեր և հրամայող. նա ինքնուրույն է, հպարտ, ազնիվ, անխարդախ, անձնագոհ և ռազմատենչ:

«Շրխի» հեքիաթում հեքիաթի հերոսը Շրխին բացի մորից, ոչ ոքի չի ենթարկվում, նա միայն ճանաչում է մորը՝ Շարաբինին, որը տեղյն ընկած ժամանակ հրամաններ է տալիս որդուն, երբեմն վիրավորում, երբեմն էլ սիրտ տալիս ու խրախուսում նրան. նա նույն ձևով էր վարվում իր ցեղակիցների, արնակիցների նկատմամբ, որոնք սցիտք է պայքարեն Ամար աղայի ցեղի դեմ: «Թող լաջակա ձեր գլխին լինի, —ստում էր նա,— եթե դուք (ցեղակիցները) որդուս՝ Շրխիի հետ միասին չսպանեք Ամարե Գուռին (քոստ Ամարին) և մինչև սերելի Բաղդյի վրեժը չլուծեք, չվերադառնաք տուն, երեսս չնայեք»: Քրդուհին չէր ծածկում երեսը՝ հարևան պարսկուհիների և մյուսների պես: Նա ռազմատենչ է և խիստ վրեժատու: Շարաբինը ոչ միայն հրամաններ է տալիս և պատերազմական գործողությունների ծրագիր կազմում, այլ նա պատրաստ է իր որդու և մյուս ազամարդկանց հետ զենք վերցնելու: Նա Բշերու գաշտում իր սեփական ձեռքերով խեղդում է Ամար աղային, և պարզ ձակատով ու հանդիստ սրտով վերադառնում տուն:

Քրդական «Բասե» պոեմում, պոեմի հերոսուհի Բասեի գլխավորութամբ սիպկացիները հաղթում են մահմեդներին, կովի գաշտում թողնելով հարյուրավոր սպանված և վիրավոր:

Ահա թե ինչ է ստում Բասեն.

«Այինք, եղբայրներ, խփեք,
Շամլ եղբոր վրեժը առեք,
Այնպես խփեցեք, այնպես ջարդեցեք,
Որ թշնամին երբեք չմոտանա»:

Բասեն սրտաբաց է, ազնիվ և անխարդախ, նա թշնամիների նկատմամբ անխնա է, իսկ ուրբեր անձնատուր են լինում նրան, նա լավ վերաբերմունք է ցույց տալիս նրանց հանդեպ:

Քրդուհու ռազմատենչ, համարձակ և քաջ լինելու մասին գրել են նաև եվրոպացի շատ ճանապարհորդներ:

Իր «Հայերը, քրդերը և թուրքերը» վերնագիր կրող գրքում անգլիացի Ջեմս Բրեյը գրում է. «Քրդուհին թեպետ անկիրթ և

հետամնաց մուսուլման կին է, բայց ինչպես մյուս բնակչու-
թյունը օսմանյան կայսերության մեջ, երբեք չի ծածկում իր
երեսը: Նրանք հեծնում են ձի, տղամարդկանց միջից ճանապարհ
գնում, որոնց հետ խոսում են բարձր՝ կանանց հատուկ ձայնով,
հաճույք զգալով նրանցից: Այն բոլոր հրոսակախմբերը, որոնց
հետ ես անցա, կանայք զինված էին գրեթե միանման, ինչպես
տղամարդիկ, մի երկար հրացան օրիորդի ուսին, որը հաճույքով
էր գործածում, ինչպես մի վարժ նիզակավոր»:

Քրդուհին ղենքը ձեռքին իր ամուսնու հետ միասին կռվել
է ամեն տեսակ նվաճողների, հարստահարիչների ու հափշտա-
կիչների դեմ:

Քրդուհու ուղղատեսչ և քաջ լինելու մասին գրել է հայ
մեծանուն գրող Խ. Աբովյանը: Նա ասում է՝ «Քուրդ կանայք
պատերազմասեր ամազոնուհիների նման հայտնի են իրենց
քաջությամբ և անվախությամբ, նրանք, որ զինված են լինում
տղամարդկանց նման, երբեմն մասնակցում են մարտերին և
իրենց ամուսինների հետ պատերազմ են գնում»¹:

11. Իրդուհին վրիժառու: Մինչև այժմ վրիժառուից իրա-
վունքները գրավոր չեն ձևակերպվել քրդերի մեջ: Քուրդ հասա-
րակության մեջ ներքին սերտ կապերը հիմնված են արենակցա-
կան ազգակցության վրա, ուժեղ էր արյան վրիժառուիցյան սո-
վորությունը: Այս սովորությունը հիմա էլ տեսնում ենք քրդե-
րի և կուլտուրապես հետամնաց ժողովուրդների մեջ: Իս սերնդի
սերունդ աճում էր, որպես մի պարտավորություն, որ ի կատար
է ածում մոտակա ժառանգը, կամ եթե նա չկար, նրա փոխա-
րեն, որպես սրբազան պարտք, նրա ազգականը: Հատ քրդական
սովորության սպանվածը հանգիստ չէր գտնի այն աշխարհում,
մինչև որ նրա վրեժն իր մոտիկների կամ արենակիցների մի-
ջոցով չլուծվեր: Այս տեսակետից հայ մեծանուն գրող Բաֆֆին
միանգամայն ճիշտ է բնորոշել քրդական հնադարյան այդ սո-
վորությունն իր «Տաճկահայք» գրվածքում: «Սպանվածը, — ասում
է նա, — հանգիստ չէ յուր գերեզմանի մեջ, քանի որ նրա արյան
վրեժը չէ առնվել սպանողից կամ նրա մոտիկ ազգականից»:

Գեղարվեստական ճաշակով և մեծ վարպետությամբ է
գրված վրիժառու քրդուհու արկարը «Մամե Շանկե» ավանգա-
կան վեպի մեջ, որտեղ գավաճանությամբ սպանված հերոսի

¹ «Кавказ», 115, էջ 46—51:

կինը լուծում է իր ողբերգական մահով մեռած ամուսնու վրեժը
չարանենդ թշնամուց: Շանկեն խմում է թշնամու արյունը և
ապա հրամայում նրան ողջ-ողջ այրել:

Մարդասպանության ղեպքում, եթե վրիժառուն անմիջա-
պես ինքը՝ կինը չէր լինում, այն ժամանակ հանգիստ չէր տա-
լիս իր ամուսնուն. նա ծաղրում էր այն տղամարդուն, որը վախ-
կոտ է, հեռու է մնում վրիժառուից, դրա համար կանայք
վախկոտների նկատմամբ գործ են ածում այսպիսի ասացվածք՝
«Լաճկա մըն սարե տաբա» (լաչակս գլխիդ), այսինքն թե դու
արժանի չես տղամարդ կոչվելու, այլ կին ես:

Ազգականներից մեկն ու մեկի սպանության ղեպքում, ինչ-
պես քուրդ տղամարդը, նույն ձևով և քրդուհին աշխատում էր
սպանվածի արյան վրեժն առնել. պետք է վրեժ լուծել, — ասում
է քրդուհին: Վրիժառուիցյան խնդրում ժամանակի տևողությունը
քրդի կամ քրդուհու համար որևէ պեր չէր խաղում: Իրենց մո-
տիկ մարդու սպանվելուց 10—30 տարի հետո էլ նրանք վրիժա-
ռու են լինում իրենց արյունակցի համար:

12. Զբաղար քրդուհու վիճակն անցյալում: Քրդական միջա-
վայրում ես 19-րդ դարում, մանավանդ նրա երկրորդ կեսից
նկատվում է արդեն ցեղական արյունակցական կապերի թուլա-
ցում և տնտեսական հողի վրա մի որոշ շերտավորում, որն ավե-
րի թույլ կերպով դրսևորվում էր տաճկական և պարսկական
քրդաբնակ գավառներում, իսկ շատ ավելի սուր կերպով՝ Ան-
գրկավկասում, ռուսական կայսրության մեջ: Զբաղարների տնտե-
սությունների թիվն Անդրկովկասում աչքի ընկնող արագուցյամբ
մեծանում էր, քրդական ցեղերի մեջ նահապետական կարգերը
խախտվում էին և զանազան շերտերի փոխհարաբերությունները
ստանում էին ավելի սուր բնույթ: Քրդուհու վշտի հիմնական
պատճառներից մեկն ավելի ու ավելի դառնում է չքավորու-
թյունը: «Զամբիլ Ֆրոշ» պեմում ժողովուրդը վառ գույներով
ավել է ծայրահեղ աղքատության ճիրաններում գտնվող քուրդ
ընտանիքի անասելի զրույթյունը:

Պեժի հերոս Զամբիլ-Ֆրոշի արհեստն է կողով գործել և
ծախել: Նա գիտե, որ աշխատանքը մարդու բարձրագույն ար-
ժանիքն է, որով զբաղվում է ինքը: Միևնույն ժամանակ, գի-
տե, որ եթե մի օր նա չաշխատի և իր կողովները չծախի,
երեխաները սովից կկոտորվեն, և անա երբ մի օր դրադեցնում

է նրան հեռու տեղ գնացած վաճառական Միրի կինը՝ Բանի-
խաթունը, ամբողջ օրը Ջամբիլ-Ֆրոշի երեխաները մնում են առանց
ուտելիքի: Ջամբիլ Ֆրոշի կինը Ալեն ուտելիք է փնտրում, ար-
դեն իրիկուն է, ոչինչ չի գտնում իր երեխաներին կերակրելու
համար: Գալիս է Ջամբիլ-Ֆրոշը, Ալեն կովելով է դիմավորում
նրան, թե՛ «ժւր է երկու երեխաների ուտելիքը, երեխաները
հաց են ուղում, լալիս են»: Ջամբիլ-Ֆրոշը պատասխանում է՝

«Կնիկ, վեր կաց թոնիրը վառիր,
Պուտուկը դիր թոնրի վրա, ինչպես առաջ,
Պետք է այս գիշեր վարպետ դառնաս»:

Ալեն հասկանում է Ջամբիլ-Ֆրոշին, նա վեր է կենում և
թոնիրը վառում ¹, մի քանի քար գցում պղնձի մեջ և գնում
թոնրի վրա: Չուրը եփում է, երեխաները հավաքվում են պղնձի
շուրջը, կարծելով թե կերակուր է եփվում, սակայն մինչև ուշ
գիշեր սպասելուց հետո երեխաների քունը տանում է և նրանք
սոված քնում են: Ալեն ներքուստ այրվում է, նա լաց է
լինում:

Հասարակական հանդեսների, հարսանիքների ժամանակ հա-
րուստների կանայք լավ շորեր են հագնում և գեղեցիկ զարդե-
րով պճնվում՝ ուրիշների աչքերին լավ երևալու համար, իսկ
աղքատների կանայք ու աղջիկները չունենին այդ բոլորը և գա-
նրանց վիշտ էր պատճառում: Հարուստների կանայք ավելի քիչ
էին աշխատում, աղքատները՝ շատ: Հարուստները լավ էին կե-
րակրվում, իսկ աղքատները դուրկ էին անհրաժեշտ սննդից և
երբեմն մանավանդ ոռժիթ¹ օրերին, սպասում էին իրենց տերե-
րին, հարուստներին թե կերակուրներից ինչ են բերելու իրենց
համար, որպես մեծերի հոգեհաց: Չքավոր ընտանիքի ան-
դամները միշտ ընկճված էին: Հարստի տանն աղքատ քրդուհու
և նրա ամուսնու վիճակը կատարելապես ստրկական էր. քրդու-
հին տանում էր հարստի, կուլակի, աղայի արհամարհանքը,
հայհոյանքը, ծեծը, նախատինքը, միայն նրա համար, որպեսզի
նա իր ամուսնու հետ միասին պահպանի իր երեխաների գոյու-
թյունը, բայց երբեմն այդ չէր հաջողվում նրանց, չնչին աշխա-

¹ Ռոժի—ծոմ, մուսուլման քրդերը տարեկան 30 օր են ծոմ պահում, իսկ եզգի քրդերը՝ 6 օր: Ծոմ պահողները միայն հաց են ուտում, արևը մայր
մտնելուց մինչև լուսաբացը, իսկ ցերեկը տոավոտից մինչև արևը մայր
մտնելը մնում են սոված: Արդելված է նաև ծխելը:

տավարձով նրանք չէին կարողանում հոգալ իրենց ընտանիքի
տնտեսական կարիքները, դրա համար, ստիպված նրանք իրենց
երեխաներին էլ էին ծառայության տալիս «բար դաստե աղե»
(աղայի ձեռքի տակ):

Երեխաները աղայի, կուլակի տանը կատարում էին ամեն
տեսակի աշխատանք, երբեմն ուժից վեր աշխատանք: Նրանք
արածացնում էին կուլակի գառները, հորթերը, ոչխարի և գառ-
ների տակը մաքրում, քթոցով թրիքը տանում բասմեն, հորիկ
քշում, գիշերը գուլթանի եղները պահպանում, սայլի վրա սա-
լունը տեղավորում, կամ քշում, ջուր բերում, տուն ավելում, արալ
հաց տանում և այլ տեսակի աշխատանքներ էին կատարում,
իսկ նրանց մայրերն ու հայրերը հարստի համար կատարում
էին ամեն տեսակ ծանր աշխատանք: Չքավորության հետևան-
քով, երբ կնոջ ամուսինն իր գյուղում աշխատանք չէր գտնում,
նրա համար ելքն այն էր, թողնել ընտանիքը, հայրենի երկիրը
և զարիբության գիրկն ընկնել: Հայաստանի քրդերը, մանավանդ
եզգիները գնում էին Թբիլիսի, լինելով անգրագետ՝ դաղվում
էին բեռնակրությամբ և գնապահությամբ:

Մանկական «Լուրհա» (օրորոցի) երգում քրդուհին օտա-
րության մեջ գտնվող ամուսնու մասին իր մանկան հետ խոսե-
լիս ասում է.

«Օրոր, որդիս, օրոր,
Իարդ ու ցավերս մոռացնել տուր,
Հայրդ զարիբության մեջ է,
Աշխատանքի է գնացել, դու գիտես
Նրա զրությունն ու չարչարանքները»:

«Կոնդարա ուշե» (սև կոշիկ ունեցող) երգում քրդուհին
սիրտ է տալիս զարիբության գիրկն ընկնող նշանածին, որպեսզի
չտխրի և պատվիրում է նրան, որ իրեն մի խնձոր դարձնի ու
դնի իր ծոցը, հիշելու դեպքում, հանի այդ խնձորը և հոտ քաշի:
Նա հուզվածով երգում է.

«Տղա, մատաղ լինիմ քեզ,
Դու գնում ես, ինձ մի մոռացիր,
Ինձ դարձրու մի խնձոր, դիր ծոցդ,
Երբ օտար երկրում
Ես քո միտն ընկնեմ,
Հանի հոտ քաշիր, հեռու, մոտիկ, մեկ է»:

«Լո, լո լաուկո» երգում մարդկային սիրով տարբեր և քանգներով է արտահայտված քրդուհու զգացմունքները օտարության մեջ գտնվող իր ամուսնու հանդեպ: Ահա թե ինչ է առում նա.

Լո, լո տղա, լեռը բարձր է, քեզ չեմ տեսնում,
Որտեղից ճարեմ հեռագիտակ, որպեսզի
Ղարիբ տղիս օտար երկրում տեսնեմ:
Մի թուղթ ուղարկիր որ կարգամ,
Որպեսզի վշտերս ցրվեն զրանով,
Թող շահի, փաղիշահի որդին գա,
Իմացիր, որ ես քեզնից բացի
Ուրիշին երբեք չեմ հավանում:

Այս ոտանավորում տեսնում ենք քրդուհու բուռն սերը զեպի իր օտարության մեջ գտնվող ամուսնից և հակակրանքը զեպի շահերը և փաղիշահները:

«Ազ խապանդըմ» (ինձ խաբեց) երգում հարստի կողմից խաբված քրդուհին զղջացել է և վշտացած է նրա համար, որ թողել է իր հարազատ երեխաներին ու փախել հարստի հետահա թե ինչպես է ողբում նա.

«Ախ, հարուստներն ինձ խաբեցին,
Երեխաներիս ինձնից բաժանեցին,
Ինձ ամուսնուցս բաժանեցին,
Ախ, հարուստներն ինձ խաբեցին:
Թող ես սոված, ծորավ մնայի,
Թող ամուսնուս մոտ լինեի,
Թող գերի լինեի,
Թող բալիկներիս մոտ լինեի»:¹

Ուրեմն զարիբության գերկն ընկնելը քրդական, ինչպես նաև շատ ժողովուրդների մեջ ընտանիքների քայքայման հիմնական պատճառներից մեկն է եղել, որը կազմել է կնոջ վշտի ու թախիծի ամենահիմնական աղբյուրներից մեկը:

13. Անտիապաշտ քրդաիին անցյալում:—Քրդուհին ավելի էր նախապաշարված, սնոտիապաշտ և ավելի ենթակա էր կրոնապաշտների թելադրանքներին, քան քուրդ տղամարդը: Քրդուհին

¹ ՀՕՄԻ ԳԱ. Պետ. Պատմ. թանգարանի արխիվի նյութերից:

ավելի շատ շփում ունի քուրդ հոգևորականի հետ քան քուրդ տղամարդը: Հոգևորականը շարունակ մնում էր տանը, լինի զադյուղում թե լեռներում՝ քոչվորների մոտ. քրդուհին ամենագլխավոր մտմենտին (մանավանդ հիվանդության դեպքում) կարող էր գտնել նրան իր տանը և խնդրել «օջախի օգնությունը»:

Շեխը ժառանգաբար սրբություն էր, սրբագործված էր նաև նրա օջախը, որին դիմում էր քրդուհին:

Սա սովորական օջախ չէր, որ քրդերի հավատով հիմնված է իրենց նախահոր, տան նահապետի ձեռքով, որտեղ աներևութ կերպով ապրում էր իրենց ընտանիկան նախահոր և ցեղին պահպանող բարի հրեշտակը, այլ մի առանձին սրբություն ունեցող օջախ էր, որի մեջ վխտում էին բազմաթիվ բարի հրեշտակներ:

Այսպիսի մի ուրաղան օջախ էր Ալադյազի շրջանի Մեծ Միրաք գյուղի բնակիչ Շեխ Աբարի տունը, որը կոչվում էր «Մալաշըն Տալար» (հրեշտակ Տալարի տունը) և համարվում էր սրբավայր: Երեխա ծնելուց հետո, նրան չար աչքից պահպանելու, հիվանդություններից և այլ չարիքներից ազատելու համար, քրդերը դիմում էին (հիմա էլ երբեմն դիմում են) ջըն Տալարի օջախին և նրանից օգնություն հայցում:

Պատմում են, իբր թե այդ տան մեջ կան բարի հրեշտակներ, որոնք ընդմիշտ ապրում են այդտեղ և կանանց հետ միասին կատարում են տան բոլոր գործերը: Նրանց դոյության մասին կանայք էլ գիտեն, բայց չեն վախենում, որովհետև գիտեն, որ բարի հրեշտակներ են, թեպետ անտեսանելի են, բայց միևնույն ժամանակ անվնաս են: Ընդհանրապես այդ տան քրդուհիներն իրենց երջանիկ են զգում, որովհետև լինելով բարի հրեշտակներին հետ՝ պաշտպանվում են չարերից, մի աչքանի «գրեներ»-ներից (նման հունական ցիկլոպներին). պատմում են, իբր թե այդ հրեշտակները վախենում են միայն մետաղե ամաններից, դրա համար էլ այդ տան մեջ մետաղից պատրաստած ոչ մի աման չեն պահում: Չմտան ամենացուրտ օրերին կարելի է տեսնել քրդուհուն, որը թոքերի բորբոքվածով, թոքախտով, տիֆով կամ այլ հիվանդությամբ տառապող երեխային զրկած, մատաղացու ոչխարը հետևից քոչող որևէ տղայի կամ կնոջ հետ միասին, ձյան մեջ թաղվելով, գնում է Մեծ Միրաք՝ ջըն-Տալարի տունը՝ երեխային «առողջացնելու» համար: Ընկնավոր երեխայի մայրը պարտավոր է առանց ուշացնելու իր հոգեկան հիվանդու-

Թյուն ունեցող երեխային անպայման տանել ջրն Տայարի տունը՝ նրանից չարքերը հեռացնելու համար: Եեյխը սովորաբար հիվանդ երեխային մերկացնում և ճիպոտով ձեծում էր, որ չարքերը վախենան և փախչեն:

Հատուկ այս տան՝ և նման սուրբ օջախների մասին կան բավականին ազգազրական և ֆոլկլորային նյութեր, որոնց մեջ ժողովուրդին ինքը մերկացրել է այդ օջախները: «Օջախա շեյխ» երգում տանջված և վշտացած քրդուհին բացասական կարծիք է հայտնում ջրն Տայարի օջախի մասին և անիծում նրան, որի պատճառով մահացել էր իր միակ որդին:

«Թող քանդվի միրաքցի այս շեյխի տունը,
Թնդանոթի գնդակ կպչի շեյխ արարին,
Այս ճիպոտով խփեց գառան՝ մեջքին,
Այս ճիպոտով որդիս չլավացավ,
Եեյխի կողմից ես խարվեցի,
Թշնամին ուրախացավ:
Աստված քանդի միրաքցի շեյխի տունը,
Մի քանի ճիպոտ խփեց գառանս:
Արևելյան կուունկը երկնքում կանչում է,
Իր ձագերին է ման ածում,
Իր մեջ հոգի չի մնում,
Տնքում է որդիս,
Թափվում են արցունքներս,
Ախ, որդիս մեռնում է,
Վայ, թող չապրեմ այս աշխարհում»:²

Քրդուհին այսպիսի ողբերգական վիճակ էր ապրում, երկար ժամանակ լալիս էր, գլխին տալիս, դեմքն ու շորերը պատառոտում, անիծում էր շեյխերին, մուլաներին, փրերին, զավաներին և իր ծնված օրը:

Քրդուհին չխոսկան էր օտարների և նույնիսկ իր ընտանիքի անդամների մոտ, բայց նա ազատ կերպով խոսում էր քուրդ հոգևորականների հետ: Սա բացատրվում է նրանով, որ քրդուհին չարքերից ազատվելու, իր բախտի մասին իմանալու և բազմաթիվ այլ խնդիրներով ստիպված դիմում էր հոգևոր անձանց, իրենց ամենօրյա խորհրդատուներին, իսկ մյուս կողմից

1 Գառ—այստեղ նշանակում է տղա, որդի:
2 Պետական Պատմական թանգարանի արխիվի նյութերից:

հոգևորականները կրոնական հավատալիքները մասսայականացնելու համար իրենց պարտքն էին համարում որոշ աշխատանք տանել կանանց մեջ, ասածու անունով զրուցել, խոսել նրանց հետ և տալ համապատասխան խորհուրդներ: Կանայք, որոնք երեխա չէին ունենում, կամ նրանց երեխաները և հենց իրենք հիվանդանում էին, դիմում էին քուրդ մուլային, որպեսզի մի «նըվըշտ»՝ անի, զավակներ պարգևի նրան, կամ զավակին հիվանդությունից ազատի և այլն: Այդ խորհուրդների համար, հոգևորականներն ահագին մթերքներ, զրամ և անասուններ էին ստանում դիմողներից: Կրոնական նախապաշարմունքները քրդուհու համար ստեղծում էին ճնշելու և շանթգործելու նոր պայմաններ:

Քրդերն ընդունում էին, որ երկնքում գոյություն ունեցող աստվածը՝ աշխարհիս արարիչը, իրեն օգնականներով հոգեհան և բարի հրեշտակներով, պահպանում է աշխարհիս կարգը և սահմանել է որ քրդուհին իր ամուսնու հյուս հպատակը լինի. այդպես էր հրամայված ամենակարող աստծու կողմից: Ամուսնուն չենթարկվող կինը հակառակ էր աստծու հրամանին, նրա մեջ նստած են չար ոգիներ, դրա համար էլ եթե ամուսինը ձեծեր, մինչև անգամ սպաներ կնոջը, նա մեղավոր չէր աստծու առաջ:

Կրոնական հավատալիքները մեծ չափով կաշկանդել էին քուրդ կնոջ գիտակցությունը: Քրդուհին, ինչպես և քրդական ընտանիքի հայրը, աշխատում էր չզրկվիլ բարի ոգիների հովանավորությունից: Քրդուհին այնպես էր շարժվում, այնպիսի միջոցների էր ձեռնարկում, որոնց շնորհիվ կարողանա իր տունն անվնաս դարձնի չար և խավար ուժերի շահատակություններից:

4.

Պ Ա Ռ Ա Վ Ը

Քրդական ընտանիքում ընդհանրապես պառավը հեղինակավոր դիրք է զբաղում, նա բերանը չի ծածկում, չխոսկան չէ, նա ազատ շարժվում, ազատ է խոսում ամեն տեղ:

1 Նըվըշտ—քրդերեն նվխանդն (գրել) բառից է. այստեղ նշանակում է «զիլ անել», մի թղթի կտորի վրա գրել որևէ աղոթք, որտեղ անպայման հիշատակում է աստծու և հրեշտակների անունները. զրամ թուղթը կարում էին երեխայի մեջքին, որպեսզի չարքեր չմտանան նրան:

Քրդական հասարակական կյանքում մեծ ամոթ է համարվում այն որդիներին համար, որոնք իրենց մորը՝ պառավին լավ չեն պահում, հապցնում, կերակրում և փայփայում, կամ թույլ են տալիս ծանր աշխատանքներ կատարել:

«Պիրե» երգի մեջ որդին մեծ համակրանքով և հոգատարութեամբ է խոսում իր պառավ մոր մասին: Նա դիմելով տան հարսներին և աղջիկներին ասում է.

«Վերցնելու եմ իմ պառավ մորս,
Կարկեմ, ման կածեմ,
Որ նրա կաթը հալալ լինի ինձ:
Աղջիկներ և հարսներ,
Վերցրեք թեյամաններ, թեփոխներ՝
Ծառայեք պառավ մորս,
Ձեր սրտերում եղած քենը
Եվ բարկութունը հեռացրեք,
Որքան որ կենդանի եմ,
Պառավ մորս վիշտ մի պատճառեք»:

Այն որդիները, որոնք մոռանում են պառավ մորը, շրջապատն անվանում է նրանց «բեդու» (անձուխ). որդիները պարտավոր են մորը լավ պահել: Սակայն տարբեր է պառավի վիճակը քրդական շքավոր և հարուստ ընտանիքներում:

Հարուստ ընտանիքի պառավը ապրում էր լավ պայմաններում: Նա իր շուրջը հավաքում էր բազմաթիվ կանանց և աշխատում էր ինչքան հնարավոր է շատ նաժիշտներ ունենալ: Նրա համար մահը սարսափելի բան էր. շատ էր սիրում, որ գովարանեն նրա գեղեցկութունը, խելոքութունը, համեստութունը, ճարտարախառնութունը և այլն:

Քիչ-շատ ազդեցիկ ընտանիքի պառավը որևէ տեղ գնալիս, նստած կանայք ի պատիվ նրան վեր էին կենում և «քարամկա խալոյն» (համեցեք, քեռու կնիկ) բառերով դիմավորում նրան և նստեցնում ամենապատվավոր տեղը:

Ջրավոր ընտանիքի պառավի վիճակն այլ էր, նրան բաժին էր ընկնում աշխատանքը: Մինչև վերջին շունչը, ուժերը պատած չափով նա աշխատում էր որևէ կերպ օգնել իր հարսներին, թոռներին և եթե այդպիսի մի պառավ դեռ աշխատելու ընդունակութունը պահպանած վախճանվում էր, ընտանիքը դառնադին ողբում էր նրա մահը, իսկ եթե բոլորովին ուժասպառ

էր եղած շարունակ տրանջող վերաբերմունքը գեպի նա ուժեղանում էր:

Ջրավոր ընտանիքներում պառավի համար ստեղծվում էր անտանելի վիճակ. դրա համար նա դիմում էր աստուծուն, Ազրայիլին (Պարբիել հրեշտակին), որ իր հոգին առնի և նա՝ «խլաղ բա ժը վե դնիա փուչ» (այս փուչ աշխարհից ազատվի): Քրդական միջավայրում էլ պառավը խիստ հետևում էր կրոնական օրենքների կատարմանը, դրա համար էլ ծերութեան մեջ ապրելու վերջին օրերին աշխատում էր ավելի ևս «խողենաս» (աստված ճանաչող) երևալ, որպեսզի մահից հետո նրա հոգին «Ջընաթ» (զրախտ) գնար: Կրոնական այս օրենքներին հետևելու պատճառով քրդերի մեջ պառավին երբեմն սիրաշահելու և հարգելու համար նրան ասում էին «Պիրե խողե իմանե բըղա տա» (աստված քո մեջ հավատն ամրացնի): Եզդիները հավատում են Մալաքե Տաուդին, շամսին (արևին) և շեյխ Ագուն: Առավոտյան արեգակը ծագելիս, տղամարդիկ, պառավ մի քանի կանանց հետ միասին դիմավորում էին արևի ծագմանը, հենց արևը ծագելուն պես աջ ձեռքը քսում էին ձևտին, չոքում գետնին և դուռը ներքև թեքում արևի ծագմանը, ասելով.—«Այ շամս, տու քոմակե բըղի մա» (արև, դու օգնես մեզ): Մուսուլման կիներ նույն ձևով կանչում է Մահմեդին, աստուծուն:

Մուլաների, շեյխերի մոտ մեծ հարգանք ունենի պառավները, որոնք կրոնական օրենքների ամենաշեղծ պաշտպանն էին:

Ծննդաբերութեան ժամանակ պառավը գործադրում էր բոլոր սնահավատ միջոցները ծննդաբերութունը թեթևացնելու համար և երբեմն պատճառ էր դառնում ծննդկանի կյանքի կործանման:

Ծերուկ Թամոյի պատմած տեղեկութունները համաձայն, Կարսի շրջանի Ղոզլեցի նորատի թշվառ Բասին զոհ էր գնացել նախապաշարված պառավին: Սրա ծննդաբերութունից հետո, պառավը եղած արյունհոսութունը չէր կարող դադարեցնել և որպեսզի դրա առաջն առնի, ծննդկանին շարունակ տան սենյակից թոնրատուն էր քաշ տվել և թոնրատնից սենյակ, որպեսզի «ալքերի» ճանկերից փրկի նրան: Սեղձ կիներ երկար տանջվելուց հետո մահացել էր: Պառավը այդ մահը վերագրում էր ֆալաքին և ասում էր. «Այդ էր գրված նրա ճակատին, այդպես էլ պիտի լիներ»:

Շատ մեծ վնասներ էր հասցնում քրդերին Ֆալաքի՝ ճակատադրի հավատքը:

«Եթե նախախնամությունից սահմանված մահվան օրը հասել է, — քարոզում էին հոգևորականները, — ոչ մի հանգամանք, ոչ էլ Լոխման հեքիմը՝ չի կարող ժարգուն ազատել Ազրայիլի ձեռքից, խոսի եթե չի հասել, ջուրն էլ որ ձգեն, կենդանի դուրս կգա»: Այս դարձվածքները կրկնում էին պառաջները և մյուս քրդերը: Այդ է պատճառը, որ հիվանդները մեծ մասամբ մնում էին անխնամ, հավատացած լինելով, որ մեկի «ոոժա վի նահատիյա» (մահվան օրը չի եկել), ոչ մի «բալա» (զժբախտություն) չի պատահի նրան:

Քրդական ընտանիքում պառավ կինը հանդես է գալիս որպես տան գործերը ղեկավարող՝ հարսների, տղաների, աղջիկների և տան բոլոր երեխաների դաստիարակչուհի: Նա իր ուժի շափ աշխատելով ընտանիքում, բարի օրինակ է ցույց տալիս հարսներին, աղջիկներին և հետևողականությամբ պահանջում է իր օրինակին հետևել: Սխալ քայլ կատարողներին խրատում է, որ էլ չսխալվեն: Այս առթիվ կա «Բուկեուս» (հարսին) երգը, որտեղ պառավը խրատում է իր հարսին, որ նա մյուս անգամ չսխալվի, անթեղը շտա ուրիշին, քանի որ իրենց տնից կրակ հանելը վնասակար է:

«Պիրեն գալիս է զրսից, հարսը վեր է կենում,
Պիրեն ասում է, — հարս, ինչո՞ւ ես անթեղը տվել,
Մի վտանգ մեզ հետ կպատահի,
Դու գիտես, արածդ շատ աղդեց ինձ վրա,
Հարսս թող խրատս լսի միշտ,
Մյուս անգամ էլ այդպիսի բան չանի»:²

Նա էր, որ սովորեցնում էր ընտանիքի կին անդամներին կարելի ձևել, կերակուր եփել, ոչխար կթել, յուղ, տոմատ, պանիր պատրաստել, գորգ գործել և այլն:

Բոլոր հարսներն ու աղջիկները հարգանքով են վերաբերվում պառավին, «ժընա մաղընա» (մեծ կին է) ասում են նրանք: Նա է, որ առաջին հերթին հետևում է նրանց նամուսին և ազատակարայրը: Այս բանը ցայտուն կերպով արտահայտված է «Մամի

¹ Առասպելական բժիշկ, որ ըստ ավանդության կարգադրում էր մեռելների հարություն տալ:
² Պետական Պատմական թանգարանի արխիվի նյութերից:

և Այշե» պոեմում, պառավ Զոզանն իր հարսի նամուսը «խախտողի» պատճառով սխալմամբ սպանում է իր հարազատ որդուն:

Առանց պառավի թույլտվության հարսներն ու աղջիկները ոչ մի տեղ չէին կարող գնալ: Պառավին էր վերապահվում ամբողջ բարիքի պահպանումը և գործադրումը. առանց նրա համաձայնության ոչ ոք իրավունք չուներ սրևէ բան վերցնել, մանավանդ որ բոլոր բանալիները նրա մոտ էին պահվում: Նա էր շատ անգամ միջնորդ հանդիսանում հարսների ու նրանց ամուսինների միջև տեղի ունեցող անհամաձայնությունները կարգավորելուն:

Պառավը բոլորի նկատմամբ դառնում էր խորհրդատու, հիթե տունը չբավոր էր, նա ավելի խնայող էր լինում, խրատում էր որդիներին, հարսներին, այդ թվում նրանց երեխաներին՝ լինել աշխատասեր, խնայող և աշխուժ:

«Բասա» երգում արտահայտված է այն միտքը, թե ինչպիսի հպարտությամբ է խոսում պառավը իր ընտանիքի մասին, երբ նա բաղկացած է աշխատասեր անդամներից և ուրիշի օգնության կարիքը չունի:

Ահա այդ երգը.

«Դատոն ասաց, — պառավ, տուր ինձ աղջիկդ,
Որի աչքերը մոր աչքերի պես սև են,
Այս գարնանը ուղարկելու եմ գութանս,
Բոլոր ունեցվածքս քեզ նվեր:
Պառավն ասաց, — բավական է խոսես,
Երբեք հույս չեմ դնում քեզ վրա,
Դու գարնան մի վարիս արտա,
Ինձ հարկավոր չէ կշտամբանքն աղայական,
Ես ունեմ մի խումբ աշխատողներ»:¹

Քրդական ընտանիքի պառավ մորն օգնական և նրա սաստիկ պառաված կամ մեռած ժամանակ փոխարինող լինում էր մեծ հարսը: Սրա իշխանությունն այնքան մեծ չէր, որքան պառավ կնոջ և սա ստիպված էր շատ անգամ ավելի մեղմ վարվել մյուս հարսների, աղջիկների հետ ու շատ անգամ դիմել ընտանիքի հոր կամ ամուսնու հեղինակության:

¹ Ասաց Ահմե Զոլան:

«Պիրա թագա» (նոր պառավ) հրգի մեջ գովերգված է մե-
ռած պառավ կնոջ առավելութունները մեծ հարսի նկատմամբ,
իսկ վերջինս եւթարկվում է ծաղրանքի:

Ահա այդ երգը.

«Նոր պառավ, նոր պառավ,
Շրթունքները, բերանը կծում է,
Նա վազում է այստեղ, այնտեղ,
Չին լսում նոր պառավին:
Խալիչին լավ գործեց, կիսատ թողեց,
Թագա պառավ, թագա պառավ,
Չկարողացավ թոնիր վառել,
Թագա պառավին չին լսում»:

Ընտանիքում երեխաների դաստիարակողը պառավն էր մեծ
մասամբ. նա երեկոները թոնիր շուրջն էր հավաքում նրանց և հե-
քիաթներ պատմում, զրուցում, սովորեցնում նրանց լինել
քաջ, ռազմասենչ, իրենց ցեղի անունը բարձր պահող և աշխա-
տասեր:

Մանուկները ոչ միայն երեկոյան, այլև ցերեկվա մեծ մասը
անց էին կացնում պառավի մոտ, երբեմն պիրեն մեջքին էր նըս-
տեցնում երեխային կամ ձեռքն էր բռնում և ման ածում: Նա էր
երեխային խնամում, լողացնում, քնեցնում:

Դրանով է բացատրվում, որ երեխաներն անհուն սիրով
կապվում էին պիրեի հետ ու չէին ուղում նրանից բաժանվել:
«Իյա դառա պիրեյա» (երեխաների մայրը պիրեն է), ասում է
քրդական ասացվածքը:

Մեզ մոտ անցյալում պիրեն պակաս գեր չէր կատարում
նաև «ղարիլների» (քրդական ցեղերի) կատաղի կոնիլների, ընդ-
հարումների ժամանակ երկու ցեղերին հաշտեցնելու կամ միմյանց
դեմ լարելու գործում:

Իրգերի կյանքում զարիլների հավաքույթներում պառավնե-
րը մեծ հեղինակութուն էին ունենում, որտեղ լինում էին հաճախ
իրենք՝ անուցի հատկութուններ ունեցող կանանց հետ միասին:

Այսպես օրինակ, երբ քրդական ցեղերից մեկն աղջիկ առե-
վանդելու, մարդասպանության և այլ կոնիլների պատճառով զին-
ված հարձակում էր գործում մյուս ցեղի վրա, երբ կազմակեր-
պում էին «Չաուր» (հարձակում թալանելու նպատակով), երբ
ցեղակիցներից կամ համազուգացիներից մեկն ու մեկին դժբախ-

տուժյուն էր պատահում, երբ եղբայրներն ուզում էին իրարից
բաժանվել, պառավները ձերուներին և տվյալ ցեղի երեկի
մարդկանց հետ խորհրդակցությամբ որոշումներ էին կայացնում:
Երբեմն ցեղի ներքին գործերի կատարման համար ամենապա-
տասխանատու միջնորդը պառավն էր հանդիսանում: Որևէ գյու-
ղի հարսանիքի օրերին, երբ տան բոլոր ջահել կանայք զար-
գարվում էին և գնում էին գովանդ, տան ներքին գործերը մեծ
չափով ծանրանում էին պառավի վրա:

Պառավը տանը հաց էր թխում, կերակուր եփում, հարսների
և աղջիկների համար հինա պատրաստում և քսում ձեռքերին:

Երբ պառավը իր որդուն էր ամուսնացնում և հարսանիքը
պիտի տեղի ունենար իրենց տանը, նա չէր ուզում որ իր համա-
պյուզացիներից ոչ ոք գուրս մնար իր որդու հարսանյաց ուրա-
խությունից: Նա աշխարհով մեկ էր լինում «բոնա խատրե կո-
տեխտ» (իր որդու խաթրի համար): Նա մեկ վազում էր հարսի
ժոտ, նրան սիրտ տալիս, բարձրացնում նրա տրամազրությունը,
մեկ այլ գործի անցնում:

Տան մեջ թեև ահագին աշխատանք էր լինում, բայց մեծ
մասը կատարում էին աղգականներն ու բարեկամները—պառավը
միայն նրանց գլխավոր ղեկավարն էր հանդիսանում:

Հարսանիքի հացկերույթի ժամանակ, պառավը մեկ երևում
էր հյուրերի շրջանում, մեկ էլ պտտում էր հարսի շուրջը, մանում
գովանդ և աշխատում ամենից աշխույժ պարել: Սովորություն
էր դարձել, երբ հարսանքավորը հարսի հետ միասին հասնում
է փեսայի տան գուռը, բարձր ձայնով կանչում նրան.

«Արի, պառավ, աչքդ լույս, արի,
Շուտ արա, գուրս արի,
Արի հարսանիք, բոնիր սարգովանդի»:¹

Հարսանեկան ուրախության միջոցին փեսայի աստը կամ
մայր պիրեն ինքն իրեն սոռանում էր. «Շամ, Հալիբ, Իխարբաքը»
երգում ասված է.

¹ Պարի ղեկավար, ասաջին պարող:

«Շամ, Հալիբ, Դիարբաքը,
 Ես գնացի Դիարբաքը,
 Առա մի գլուխ շաքար,
 Բաժանեցի տնեցիներին, գյուղացիներին,
 Հարամ լինի, համ չառա,
 Հարսի խաթրի համար էր սա»:

Հարսին իջնցնելու ժամանակ տռաջինը պառավ մայրն էր, որ հարսի եղբոր հետ միասին հսկում էին, որ «պիրե ջաղու» (ջաղու պառավները) չմոտենան ձիու ասպանդակին, քար և բրդե կտոր չձգեն ասպանդակից՝ փեսայի առնականությունը խախտելու, հարսին փաս հասցնելու նպատակով:

Պառավ մայրը հանգիստ չէր մնում մինչև առադաստի գիշերը և միայն առավոտյան հարսի կուսությունը ստուգելուց հետո, պառավը հարսին համարում է նամուսով և ուրախանում, իսկ եթե հարսի կուսությունը խախտված էր լինում, նրա համար «դարտե թազա» (նոր վիշտ) էր, որից նա ընկճվում և անիծում էր իր «ոտա ուշ» (սև օրը):

«Ախ, օրս սևացավ, ինչո՞ւ,
 Աստված իմ, թող մեռնեի, աստված,
 Թող մեռած լինեի, որդի ջան,
 Քեզ այս օրում չտեսնեի»:

Պիրեն չափազանց ուրախ էր լինում, երբ տեսնում էր որ իր հարսը «ոուսպիյա» (պարզերես) է, այսինքն՝ նրա կոսու-թյունը խախտված չէ:

«Այսօր պառավն ուրախ է,
 Նրա հարսը նամուսով է,
 Ցավում է շատ շների սիրտը»:¹

Տան մեջ, երբ մի մարդ էր մեռնում, սուգը մեծ մասամբ կատարում էին տան պառավները, ապա բարեկամների պառավներն ու կանայք:

Երգող պառավը գնում և նստում էր իր մեռելի գլխավերև, նրանից ներքև մյուս պառավները, հարսներն ու աղջիկները, իսկ նրանց հետևողները ու սկսում էին սուգ անել: Երբ սուգ անող կինը մեռածի հարազատն էր լինում, գլխին էր տալիս, երեսը չանդում մյուս հարազատ կանանց հետ միասին,

¹ Ցավում է շների սիրտը—ցավում է թշնամիների սիրտը:

իսկ տղամարդիկ իրենց գլխին էին խփում երկու ձեռքերով: Նման դեպքերում հաճախ ասում էին, «վայ մըն բըատ, վայ մըն բավո» (վայ ինձ, եղբայր, վայ ինձ, հայր) և ապա բոլորը լուռ էին, պառավն սկսում էր տխուր երգել:

Ինձ համար է եկել,
 Մահը ինձ համար է եկել աշխարհի վրա,
 Ես ոչ մի միջոց չունեմ մոր խաթրի համար՝
 Երիտասարդիս կենդանացնեմ:

Ինձ համար է եկել լառ, ինձ համար,
 Աստված գիտե, տան երիտասարդի բոլին
 Մազում է գինքերը կապելուն:

Աստված վկա, Օղմանս քաջ էր,
 Սպանության և վրեժ առնելու ժամանակ
 Նա միշտ դաշտումն էր:¹

Վեր կաց, որդի, վեր կաց, վեր կաց, բրա (եղբայր), վեր կաց,
 Թշնամին գլուխ է բարձրացրել, թող չուրախանա,
 Վեր կաց, տղամարդկանց սպանիր,
 Մեղանից տարած ապրանքները վերադարձու:²

Պառավը երբեմն երգում էր այլ երգեր, որ անմիջապես կապ չունենր մեռածի հետ, բայց ողբերգական էր և լաց էր առաջ բերում:

Պառավի այս երգից հետո ներկա եղողները սկսում էին կոծը, որից հետո տիրում էր խորին լուռություն, կանայք երբեմն սկսում էին էլի կոծել, հետո ցածր ձայնով խոսել մեռածի լավ հատկու-թյունների մասին և այսպես մինչև թաղումը:

Մեռած կնոջ վրա նույնպես երգում էին քաջ տղամարդ-կանց վերաբերյալ սգո երգեր:

Տղամարդկանց թաղելու ժամանակ, մեռածի շորերով զար-գարում էին նրա ձին, կամ եթե ձի չէր ունենում, վերցնում էին բարեկամի ձին, տղամարդկանցից մեկը բռնում էր ձիու տան-ձից և մեռելի գրապի հետ միասին ձիուն տանում էին գերեզ-մանատուն. այս ձիասկատարությունը կոչվում է «քոթալ»:³

¹ Դաշտումն էր—տեղ է, թե վախկոտ չէր, տանը չէր նստում կամ թաղու-րում կզի ժամանակ:

² Անախ պյուլերից:

³ Հարավային Քուրստանում երբեմն շինում էին մարդու խրովիլակ, հագցնում հանգուցյալի շորերը, նստեցնում ձիու վրա:

«Քոթալ» սգո երգում խորը կերպով արտահայտված է այն քրդունու վիշտը, որի ամուսինը մահացել է. «Քոթալ» երգը պառաջները և երբեմն էլ երգիչները կողմից երգվում է միայն սգո և թաղման ժամանակ:

Ահա այդ երգը.

«Գարունն է, երկնքից ձյունն չի գալիս,
Մարգուս համար գուշնգգուշն փայտից դագաղ հմ շինելի,
Որ նրա բեխերը նրա մեջ ժանգի պես չդեղնին:

Եկել է չեչոտ կուռնկը,
Եկավ, իջավ մեր չայիր չիմանի մեջ,
Այս կուռնկի վշտոտ ձայնը նման է այն կնոջ ձայնին,
Որի ամուսինը մահացել է»:¹

Պատավ քրդունին հանգես է գալիս նաև որպես «սամլըղար» կամ «ֆալղար» (գուշակող):

Քրդունիների, գլխավորապես պառաջների մեջ գուշակութունն անելն ընդհանրացած մի երիտյթ է:

Նախապաշարված քրդերը սովորական ձևով դիմում էին ֆալղարին և եթե մի անձնավորութուն հետու տեղ էր գնացել, հարազատը հարցնում էր, թե այս ինչ հարազատս երբ է վերագառնալու: Դրա համար պիրա ֆալղարը ձեռքի թզով երեք անգամ շափում էր իր ձախ ձեռքի արմունկը կամ վերցնում էր երեք հատիկ գարի, մեկի ծայրը կտրում էր. հետո բոլորը կրկին լցնելով բոսի մեջ, աջով ծածկում էր և երեք անգամ թափ էր տալիս, և սուում՝

«Գուշակում, նարու՞ գուշակում լինես,
Թոչունների ծառի տակ լինես,
Այի, Ամար հեռու տեղ են գնացել,
Արգյոք գալ՞ու են, թե չէ»:

Ապա վերցնում էր աջ ձեռքը, նայելով գարիների դասավորութան, ինքը որոշում էր հեռանքները և եթե ծայր կտրած գարին առաջ մատների մոտ ընկած լինի, նշանակում է հեռու

¹ Ասոց Ա. Չոլուն:
² Նարի—հայտնի գուշակող, աղբի է թուրքիայում 18-րդ դարում:

տեղ գնացողը շուտով վերադառնալու էր, իսկ եթե ետ ընկած լիներ՝ ուշ է գալու:

Պիրա ֆալղարը գուշակում էր, թե հիվանդութունը մի չար ոգու կողմից է, թե հղի կինը ազմ է ծնելու, թե՞ աղջիկ, կորուստը գտնվելու է, թե՞ ոչ, թե կասկածելի անձնավորութուններից մին է գողը և այլն:

Գուշակութան ժամանակ պիրեն երբեմն ազոթում էր, որ իր արած գուշակութունը ճիշտ լինի:

«Այ աստված, ա՛յ շամս, դու սրա (այցելողի) միտքը բերես աչքիս առաջ, որ ճիշտ ասեմ»:

Ֆալղար եղբունի պառաջը այլոց համար երբեմն երազ է տեսնում, նա ազոթում է շամսին փաստվածի համար, օր. «նազարից» չար աչքից վախեցածին ազատելու համար, նա առավոտյան ծնկի է գալիս շամսի առաջ և գիմելով նրան ազոթում է. «յա շամս, տուռե մըն նազարե խոյկի» (շամս իմ, դու իմ աղային չար աչքից ազատես), որից հետո պիրեն նրկու հուլունք էր անցկացնում թելին, մեկը սպիտակ, մյուսը՝ կապույտ, հետո էլ մի սխտոր էր ավրացնում և կապում վախեցածի թևին կամ մեջքին»:

Գուշակող պառաջները մեծ մասամբ սղբատ ընտանիքներից էին, ապրելու հնարավորութուններ չունենալու պատճառով դիմում էին նման միջոցների և զրա համար ստանում էին գանազան նվերներ:

Գուշակութունը ճիշտ չլինելու դեպքում պիրենն անիծում էին, անվանելով նրան «պիրա խարխարոկ» (խարխարա պառավ):

Հեթաթների մեջ հաճախ խոսվում է գուշակող կանանց, պիրենների մասին, որոնք կարողանում են հերոսներին իրենց խորհուրդներով հաղթութան ճանապարհը ցույց տալ, կամ իրենց արտասանած խոսքերով և անեծքներով քարացնել, այրել և այլ հրաշքներ կատարել:

«Մամե ու Ջինե» պոեմում Բարոյի աղջիկը՝ Ջինեն, կախարհելու շնորհք ունի, հասակ առած, պառաված այդ աղջիկը կախարհութան միջոցով ուղում է Մամեին խարել, տիրանալ նրան: Ջինեն ռամլղար է, նա գուշակում է, որ Մամեն պիտի Մուղուրղամիցից գա և անցնի աղբյուրի մոտով: Ինքը կախարհական միջոցներով աշխատում է երևալ որպես ջահել, գնում

կանգնում է ազբյուրի վրա: Գալիս է Մամեն, որը աչքերից չի վրիպում նրա սե, տգեղ լինելը, նա հարցնում է.

«Բարի օր, ասաց, նվ սև ու. տգեղ խաթուն,
Ազբյուրի վերան ինչ կանգնած ես այս մութուն:
— Աստծո բարին, գլխի, աչքի վերան՝
Բաջատոճմիկ, կորիճ Մամե Ալանյան:
— Ինու աստված, աստծո մարդը կը սիրես,
Արդյոք կարելի չէ՞ ինձ ճշմարիտն ասես,
Ի՞նչ գիտես, որ ես եմ Ալանյան տոճմից,
Բաջ և գորգոբ թագավորներու տնից:
— Այո, քաջ գիտեմ, դու ես Մամեն,
Անվանի Ալ վաշայի սերունդն.
Մուխիր գէմին աշխարհն ես ելած,
Բառասուն մեկի վերան հոս հասած:
Եկած ես այս Զինեիս սև աչքերուն,
Կամարակապ ու գեղեցիկ ունքերուն,
Գիտեմ, վառված ես ու սիրահարված,
Իրա համար այսչափ լեռ, ձոր չափած»:
Մամեն բարկացած պատասխանում է՝
«Եթե արգարև, դու այն Զինեն ես,
Մի հիշատակ ունեմ մոտդ, այն գիտե՛ս:
— Քո նշանն էր մատանի մի սիրուն,
Անգին քարերով գեղեցիկ զարդարուն,
Բառասուն օր է, նստած եմ այստեղ,
Միշտ կսպասեի ճանապարհիդ անշեղ:
Մատանին հանցի մատես, զրի գոգս,
Որ վերան նայեմ, քեզից առնեմ կարոտս.
Իսկ երբ քեզ տեսա, ուրախացա,
Թռչնո պես վեր թռա, մատանին մոռացա.
Մատանին գլորեցավ, գնաց գեպի ջուր,
Շատ որոնցի, գնաց ընկավ չգիտեմ ուր»:¹

Բայց շուտով բացվում է ծպտյալ Զինեի կեղծիքը, Մամեի ձին՝ Բորը, մարդկային լիզվով խոսում է իր տիրոջ հետ, հասկացնում է նրան, որ նա իր սիրած գեղեցիկուհի Զինեն չէ, այլ

¹ Տես էմինյան Ազգ. ժողովածու, հատր ե., Հայկուճի—Հայ-քրդական վեպեր, Վաղարշապատ, 1904 թ, էջ 238:

խառնակիչ Բաքոն Առանի ծպտյալ աղջիկն է. Բորը ասում է Մամեին.

«Բավական է այսչափ անփորձ մնաս,
Իատարկ խոսքերու դու ականջ տաս,
Այս ազբյուրին վերա որ կը տեսնես,
Ինու խաթուն Զինեն է կը կարծես:
Այս ալ է Բաքոյի աղջիկը Զին,
Հմուտ է կախարհության արհեստին.
Եղած չեղածը օր-օրին կը դուշակեր.
Ճանապարհներու գլուխը կանգնած կսպասեր,
Արարածներու գործերը կխանդարեր:
Շուտ արած, զիս ասպանդակե, Մամե,
Այստեղ Զգիր ու Բոտան քաղաքն է,
Երբ իրիկուն հասնի, մութը պատե.
Եղբայր հղորդ անպատասխար կը թողնե.
Մամե, զիս սանձարձակ թույլ տուր,
Որ քեզ տանեմ մի քոչք, սարի դուռ»:¹

Այստեղ Զինեն հանդես է գալիս որպես ֆալգար և խարդախ պիրեի կնոջ տիպար:

Գյուղի պառապներն իրենց ամբողջ անցյալը միևնույն միջավայրում անցկացրած լինելով, իրար հետ կապված են լինում բազմաթիվ հիշողություններով, վանկական խղերով, զրոսանքներով և հարսանեկան ուրախություններով, տնային աշխատանքներով և վշտով ու թախիծով թե գյուղում և թե օրայում: Պառապները շատ բան են ունենում միասին հիշելու: Հավաքվում են միասին, մի հանդիստ, առանձնացած տեղ և մեծ մասամբ թաշին (իլիկ) մանում կամ որևէ կարկատան անում, կամ գուլպա գործում, իրար հետ մեղմ խոսում, խույս տալով բաժնասանքներից ու չար խոսքերից, որպեսզի մոտալուտ մյուս աշխարհ ներկայանան մեղքերից ավելի ազատված վիճակում և «ջընաթ» գնա:

Այսպես, երկար տարիների ընթացքում մշակվում էր միշտ գործունյա, իր արժանապատվությունը ճանաչող, իր հեղինակությունը և մերձավոր ու հեռավոր ազգակիցներին հպատակեցնող, իր տան ու տոհմի պատիվը բարձր պահող, իր ցեղի միասնության համար պայքարելու պատրաստ, ծանրաբարո պառավ քրդուհու տիպարը.

¹ Նույն տեղ, էջ 239:

* * *

Շնորհիվ Հոկտեմբերյան Մեծ Ռեւոլուցիայի և լենինյան-ստալինյան ազգային ճիշտ քաղաքականութեան, մեր Սովետական Միութեան սահմաններում վերջ տրվեց քրդուհու ճնշված վիճակին: Քրդուհուն տրվեց ընտրական իրավունքի կատարյալ հավասարութուն, նա ձեռք քաշեց քոչվորական կյանքից և սկսեց նստակյաց կյանք վարել, լծվեց կոլխոզային աշխատանքի և մեր երկրի սոցիալիստական շինարարութեանը մասնակցում է Սովետական Միութեան ժյուս ժողովուրդներին հավասար չափով:


Հիմա բաղձաթիվ կրթված քուրդ կանայք կան, այդ թվում նաև բարձրագույն և միջնակարգ կրթութիւն ունեցող քրդուհիներ: Սրանք պաշտոնավարում են, ակտիվ կերպով մասնակցում են հասարակական, քաղաքական և կուլտուրական կյանքին, և առաջ են քաշվում պատասխանատու աշխատանքներին:

«Աշխարհում ոչ մի դեմոկրատական պարտիա,— գրում է լենինը,— ամենից ավելի առաջավոր բուրժուական ռեսպուբլիկաներից ոչ մեկում, մյուս կողմից սամայակ տարիների ընթացքում չի արել մեկ հարյուրերորդ մասն այն բանի, ինչ մենք արինք մեր իշխանութեան հենց առաջին տարում: Մենք բառի իսկական իմաստով, քար-քարի վրա չթողինք կնոջ անիրավասութեան վերաբերյալ, ամուսնալուծութեան ճնշումների վերաբերյալ, նրան բոլորապատու նողկալի ձեականութեանների վերաբերյալ, արտամուսնական երեխաներին չճանաչելու, նրանց հայրերին որոնելու և այլնի վերաբերյալ այն անարգ օրենքներից, որոնց մնացորդները բաղձաթիվ են բոլոր քաղաքակիրթ երկրներում ի խայտառակութեան բուրժուազիայի ու կապիտալիզմի»¹

«Կանայք,— ասում է ընկեր Ստալինը,— կազմում են մեր երկրի բնակչութեան կեսը, նրանք կազմում են աշխատանքի հսկայական բանակ, և նրանք կոչված են դաստիարակելու մեր երեխաներին, մեր ապագա սերունդը, այսինքն՝ մեր ապագան: Ահա թե ինչու մենք չենք կարող թույլ տալ, որ աշխատավորների այդ հսկայական բանակը քաշ տա իր գոյութեանը խավարի և սգիտութեան մեջ: Ահա թե ինչու մենք պետք է օղջու-

¹ Ленин—Сочинения, том 24, Москва, 1932, стр. 343.

նենք աշխատավոր կանանց աճող հասարակական ակտիվութեանը և ղեկավար պոստերի համար նրանց առաջ քաշելը որպես մեր կուլտուրականութեան աճման անկասկածելի նշան»¹



¹ Ի. Վ., Ստալին—Հաղվեսու ղեկուցում պարտիայի 17-րդ համագումարին Համ Կ(Ը)Պ Կենտկոմի աշխատանքի մասին, «Լենինիզմի հարցեր», Արևան, 1935, էջ 210—211: